

**ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
2023 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ 2024**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>3</b>
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ .....	4
ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ .....	11
ՀԱԱՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ.....	12
<b>ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ</b> .....	<b>13</b>
ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ .....	13
«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ.....	14
ՄԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ .....	15
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ</b> .....	<b>17</b>
<b>ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>21</b>
<b>ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ</b> .....	<b>23</b>
<b>ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b> .....	<b>27</b>
<b>ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>30</b>
ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ .....	30
ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ .....	31
ԱԿՈՒՆՔԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ .....	32
<b>ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ</b> .....	<b>33</b>
<b>ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>35</b>
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ .....	69
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ .....	70
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>73</b>
<b>ՄԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b> .....	<b>78</b>
<b>ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ</b> .....	<b>80</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աննախադեպ ազգային մարտահրավերներով հարուստ 2023-ը, այնուամենայնիվ, մեր երկրի համար տեսանելի առաջընթացի տարի էր տնտեսության, կրթության, գիտության եւ բազմաթիվ այլ ոլորտներում: Պարտավորեցնող է այն գիտակցությունը, որ բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը շարունակել է մնալ բարեփոխումների առաջատարի իր դիրքերում՝ ստեղծելով նորարարական կրթահետազոտական եւս շուրջ 20 նոր ենթակառուցյուններ, գործընկերային հարաբերություններ հաստատելով միջազգային կրթական տարածքի դերակատար եւս մի քանի համալսարանների, հայաստանյան մասնավոր ագրոբիզնեսի առաջատար խաղորդների հետ: Ավելի է հարստացել եւ ամբողջացվել ուսանողակենտրոն միջավայրը:

Կարող ենք արձանագրել, որ հատկապես համալսարանի մարզային մասնաճյուղերում եւ ուսումնափորձարարական տնտեսություններում շարք մտած, արդիական եւ գերարդիական սարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցած ուսումնական լաբորատորիաները, մեքենասարքավորումների կայանը, ինտենսիվ այգիները, ջերմատներն ու խելացի գյուղատնտեսության այլ ենթակառուցյունները արդեն սկսել են դրական ազդեցություն ունենալ մարզերում ագրարային կրթության գրավչության բարձրացման վրա:

ՀԱԱՀ-ի ուսանողությունը, պրոֆեսորադասախոսական եւ ուսումնաօժանդակ անձնակազմը միասնական ու վճռական են հայաստանյան բուհական կրթության պատմության մեջ աննախադեպ հնգամյա ընթացքը արժանավայել կերպով շարունակելու հարցում: Ագրարայինի մեծ ընտանիքը՝ մայր բուհը եւ մասնաճյուղերը, պրոֆեսիոնալ ղեկավարի առաջնորդությամբ հասել է մի նշաձողի, որի պահպանումն ու բարձացումը շարունակում են օրակարգային մնալ հաջորդ տարիների համար:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2023 թ. համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ ամբիոններից ներկայացված եւ գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, սահմանված ժամկետների՝ առարկայական ծրագրերի բովանդակությամբ եւ օրացուցային պլաններին համապատասխան:

Հաշվետու տարում բակալավրի կրթական ծրագրի առկա եւ հեռակա ուսուցման ձեւի առաջին եւ երկրորդ կուրսերի բոլոր քննություններն իրականացվել են գնահատման եւ թեստավորման՝ տեխնիկական պես հագեցած կենտրոնում:

Համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկը եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը կատարվել է գործող չափորոշիչներին համապատասխան:

Աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելով՝ իրականացվել են ուսումնական պլանների արդիականացումներ:

2023-2024 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի, անընդհատ եւ ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվել է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված տեղերի, քննությունների եւ ուսման վարձավճարների չափի՝ նախատեսված ժամկետներում:

2023-2024 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրի, անընդհատ եւ ինտեգրված կրթական ծրագրերով 1-ին եւ 2-րդ փուլերով ՀԱԱՀ է դիմել 167 դիմորդ: Բուհերի ընդունելության հիմնական մրցույթից հետո ընդունվել է 54 ուսանող (30-ը՝ անվճար, 24-ը՝ վճարովի):

ՀԱԱՀ դիմորդների ավելի քան 67 տոկոսը չի կարողացել հաղթահարել միասնական կարգով անցկացված ընդունելության երկու քննությունից առնվազն մեկի անցողիկ շեմը, որը մի կողմից ազդարարում է, որ ՀԱԱՀ ընդունվելու համար մինչեւ հիմա պատկերացրածից շատ ավելի պատրաստվածություն է պահանջվում, իսկ մյուս կողմից հուշում, որ ՀՀ-ում բուհերի ընդունելության միասնական քննությունների կարգերը ավելի ճկուն դարձնելու անհրաժեշտություն կա:


2023-2024 ուստարում, բուհերի ընդունելության լրացուցիչ մրցույթից հետո, ՀԱԱՀ առկա ուսուցման համակարգ ընդունվել է եւս 4 ուսանող, 2 ուսանող էլ ընդունվել է որպես սփյուռքահայ դիմորդ, որպես արդյունք՝ ՀԱԱՀ բակալավրիատի առկա ուսուցման համակարգ ընդունվածների ընդհանուր թիվը կազմում է 60:

2023-2024 ուստարվա ՀԱԱՀ-ի եւ այլ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտներից 167-ը կրթությունը շարունակելու է ՀԱԱՀ հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերում:

2023-2024 ուստարում ՀԱԱՀ բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի դիմորդների թիվը եղել է 242, որոնցից ՀԱԱՀ է ընդունվել 26-ը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.08.23 թ. թիվ 29-Լ հրամանով հաստատվել է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական եւ հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների գյուղատնտեսության եւ հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների՝ բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ 2023-2024 ուստարում Հայաստանի ազգային ազրարային համալսարան փորձնական ընդունե-

լրության կարգը, ըստ որի 2023-2024 ուստարում ՀԱԱՀ բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս է ընդունվել 113 դիմորդ:  
 2023-2024 ուստարում մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ համալսարան է ընդունվել 182, հեռակա ուսուցմամբ՝ 26 մագիստրանտ, որոնցից համապատասխանաբար 41-ը եւ 16-ը՝ ոչ ՀԱԱՀ շրջանավարտ:



**Գծապատկեր 1.** 2023-2024 ուստարվա ՀԱԱՀ առկա բակալավրիապի ընդունելության արդյունքներն ըստ ֆակուլտետների, մարդ.

2023-2024 ուստարվա առկա ընդունելության արդյունքներն ըստ կրթական ծրագրերի.

1. Ագրորիզնես եւ ֆինանսներ՝ 29 ուսանող (48.3 %)
2. Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա՝ 13 ուսանող (21.7 %)
3. Խմորման արտադրության տեխնոլոգիա եւ գինեգործություն՝ 4 ուսանող (6.7 %)
4. Պարենամթերքի տեխնոլոգիա՝ 6 ուսանող (10.0 %)
5. Բույսերի պաշտպանություն՝ 3 ուսանող (5.0 %)
6. Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա՝ 2 ուսանող (3.3 %)
7. Անասնաբուժություն՝ 1 ուսանող (1.7 %)
8. Մեքենասարքավորումների ճարտարագիտություն՝ 1 ուսանող (1.7 %)
9. Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն՝ 1 ուսանող (1.7 %)

Ընդհանուր առմամբ, 2023–2024 ուստարում բոլոր մակարդակների մասնագիտական կրթական ծրագրերով ՀԱԱՀ 1-ին կուրս ընդունվել է 1068 ուսանող: ՀԱԱՀ-ի եւ դրա մասնաճյուղերի տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է աղյուսակ 1-ում (բերված է նաեւ համեմատական տեղեկություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, ինչպես նաեւ տեղափոխությունների, հեռացումների, ազատումների եւ վերականգնումների վերաբերյալ):


## ՀԱԱՀ տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի շարժը

31.12.2022 - 31.12.2023

Ուսուցման ձևեր	Ուսումնառողների թվաքանակը առ 31.12.2022 թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանավարտ	Հեռացում (ազատում)	Ուսումնառողների թվաքանակը առ 31.12.2023 թ.	
	ընդամենը ուսանող	ուսումը դադարեցրած			այլ բուհից (քոլեջներից)	այլ մասնագիտությունից	այլ բուհ	այլ մասնագիտություն			ընդամենը ուսանող	ուսումը դադարեցրած
Առկա ուսուցում	710	67	60	28	1	27		14	346	40	426	44
Հեռակա ուսուցում	2440	155	140	111	167	14	3	27	367	532	1943	160
Մագիստրատուրա	191	14	208	1					121	70	209	8
Ասպիրանտուրա	27	0	9						1	5	30	1
Քոչինյանի անվան գյուղ. քոլեջ	724	17	326	11	33				198	104	792	13
Շիրակի գյուղատնտեսական քոլեջ	147	11	52	1					29	28	143	14
Սիսիանի մասնաճյուղ	135	3	4	5	7				22	10	119	4
Սիսիանի մասնաճյուղի քոլեջ	137	3	95	5					18	13	206	4
Վանաձորի մասնաճյուղ	247	10	9	3	11				42	16	212	12
Վանաձորի մասնաճյուղի քոլեջ	32	0	79	2	207				51	23	246	12
Վարժարան	264	0	86		26		43		63		270	0
Ընդամենը ՀԱԱՀ	5054	280	1068	200	452	41	46	41	1258	841	4596	272


2023-2024 ուստարում քոլեջների բարձր առաջադիմություն ունեցող 181 շրջանավարտ էլ տեղափոխվել է ՀԱԱՀ հեռակա ուսուցման 2-րդ կուրս:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվել է սահմանված ժամկետներում, միջանկյալ քննությունները, ստուգարքները, ամփոփիչ քննությունները, կուրսային եւ անհատական աշխատանքների հանձնումը, դիպլոմային նախագծերի ու աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նախատեսված ժամկետներում եւ պահանջվող ձեւաչափերով: Գծապատկեր 2-ում ներկայացված են միջին գնահատականներն ըստ կիսամյակների եւ ֆակուլտետների:



**Գծապատկեր 2.** ՀԱԱՀ 2022-2023 ուստարվա բակալավրիատի առկա ուսուցման ուսանողների առաջադիմությունն ըստ ֆակուլտետների, միջին բալ

2022-2023 ուստարում բակալավրիատի առկա ուսուցման ընդհանուր շրջանավարտների 7 %-ը հանձնել է պետական ավարտական քննություն, ընդ որում միջին գնահատականը կազմել է 65.0 միավոր: Ավարտական աշխատանք պաշտպանած ուսանողների միջին գնահատականը կազմել է 75.0 միավոր: Գծապատկեր 3-ում ներկայացված է ՀԱԱՀ բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտների թվաքանակն ըստ ֆակուլտետների:



**Գծապատկեր 3.** ՀԱԱՀ բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտների թվաքանակն ըստ ֆակուլտետների, մարդ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, բացի ՀՀ քաղաքացիներից, ուսումնառում են նաև սփյուռքահայ ուսանողներ՝ 6-ը Վրաստանից, 4-ը Լիբանանից, 3-ը ՌԴ-ից, մեկական՝ Մոլդովայից եւ Սիրիայից:

Հաշվետու ժամանակահատվածում բուհի միջոցների հաշվին իրականացվել են ուսման վարձավճարների 20-100 % զեղչեր՝ հետեւյալ կատեգորիաներով.

1. Ապրիլյանի ժամանակ մարտական գործողությունների մասնակից,
2. Ապրիլյանի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած,
3. Մարտական հերթապահություն իրականացրած,
4. Մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող,
5. 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ,
6. Սոց. անապահովության միավորից բարձր միավոր ունեցող,
7. Սոց. անապահովության միավորից ցածր միավոր ունեցող,
8. Բարձր առաջադիմություն ունեցող,
9. Երեք եւ ավելի անչափահաս երեխա, ինչպես նաև ընտանիքում երեք եւ ավելի ուսանող ունեցող,
10. Հաշմանդամ ծնող ունեցող,
11. Զինվորական հաշմանդամ ծնող ունեցող,
12. ԲՈՒՀ-ի աշխատող հայցորդ:

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում համալսարանի միջոցների հաշվին զեղչվել է ՀԱԱՀ-ի եւ մասնաճյուղերի 82 ուսանողի, 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում՝ 57 ուսանողի վարձավճար: 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում պետության կողմից զեղչվել է ՀԱԱՀ-ի եւ մասնաճյուղերի 71 ուսանողի վարձավճարը, 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում՝ 137 ուսանողի վարձավճարը: 2022-2023 ուստարվանից սկսած ուսման վարձավճարի զեղչի տրամադրման համար նվազագույն շեմ սահմանվել է 75 ՄՈԳ-ը, իսկ ակադեմիական բարձր առաջադիմության հիման վրա ուսման վարձավճարի զեղչ տրամադրելիս նվազագույն շեմ սահմանվել է 80 ՄՈԳ-ը:

Հաշվետու տարում մեթոդական խորհուրդը հրատարակման է երաշխավորել ՀԱԱՀ ֆակուլտետների մեթոդական հանձնաժողովների ներկայացրած 42 աշխատանք՝ 2 մենագրություն, 11 մեթոդական ցուցում, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 ուղեցույց, 2 մեթոդական ձեռնարկ, 2 ուսումնական ձեռնարկ, 2 ուսումնական պլան, 2 ուսումնամեթոդական ուղեցույց, 1 առարկայական ծրագիր, 6 միջին մասնագիտական դուալ կրթական ծրագիր, 10 միջին մասնագիտական ծրագիր:

Հաշվետու ուստարում դիպլոմներ են շնորհվել ՀԱԱՀ 1032 շրջանավարտի. բակալավրիատի (առկա եւ հեռակա) 713 շրջանավարտներից 16-ը, մագիստրատուրայի 121 շրջանավարտներից 21-ը եւ Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 198 շրջանավարտներից 21-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

Հաշվետու տարում համալսարանում կատարվել են հետեւյալ կառուցվածքային փոփոխությունները.

1. Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության ֆակուլտետի «Թերապիա, վիրաբուժություն եւ ծննդագիտություն» եւ «Համաճարակաբանություն եւ մակաբուծություն» ամբիոնների միավորմամբ ձեւավորվել է «Անասնաբուժության» ամբիոնը:



2. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Կենսագործունեության անվտանգություն» եւ «Գյուղատնտեսական մեքենաշինություն, ավտոմատացում եւ տեխնիկայի շահագործում» ամբիոնների միավորմամբ ձեւավորվել է «Մեքենասարքավորումների ճարտարագիտության եւ տեխնիկական անվտանգություն» ամբիոնը:

### **Փորձուսուցման պլանավորում եւ անցկացում**

Հաշվետու ժամանակաշրջանում փորձուսուցման բաժինը կնքել է 28 պայմանագիր բոլոր մակարդակների մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսված փորձուսուցումների համար, որոնք կազմակերպել եւ համակարգել է ՀԱԱՀ ուսումնական գործընթացների կառավարման վարչության (այսուհետ՝ նաեւ ՈւԳԿՎ) պրակտիկաների համակարգման եւ ուսումնական վերլուծությունների (այսուհետ՝ նաեւ ՊՀՈՒՎ) բաժինը:

2023 թ. ապրիլի 29-ից մինչեւ հունիսի 21-ը անցկացվել է ուսումնական պլաններով նախատեսված աշխատանքային կիսամյակի սկզբունքով փորձուսուցում (այսուհետ՝ նաեւ աշխատանքային կիսամյակ) Ագրոնոմիական ֆակուլտետի 3-րդ կուրսի 24 ուսանողների համար, որը շարունակվել է նաեւ 4-րդ կուրսի առաջին կիսամյակի 8 շաբաթների ընթացքում: Այդ ընթացքում նրանք հնարավորություն են ունեցել ամրապնդել ընդհանուր եւ հատուկ մասնագիտական դասընթացներից ստացած գիտելիքները, զարգացնել մասնագիտական կարողություններն ու ձեռք բերել հմտություններ՝ իրական աշխատանքային միջավայրում ժամանակն արդյունավետորեն կառավարելու, հաղորդակցվելու եւ այլ հմտությունները:

2023 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել է աշխատանքային կիսամյակի սկզբունքով փորձուսուցում նաեւ ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների, Ագրոբիզնեսի եւ տնտեսագիտության, Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուժության, ինչպես նաեւ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետների առկա ուսուցման 138 ուսանողների համար, որոնք այն անցկացրել են ՀԱԱՀ-ի հետ համապատասխան պայմանագրեր կնքած 79 կազմակերպությունում:

Ուսանողներից շատերը աշխատանքային փորձուսուցման ընթացքում վարձատրվել են կամ ստացել որոշ ծախսերի փոխհատուցում:


Աշխատանքային կիսամյակների վերաբերյալ անցկացվել է հարցում բոլոր ֆակուլտետների ուսանողների շրջանում: Հարցմանը մասնակցել է 86 ուսանող, (ընդհանուր թվի 62.31 %-ը), որոնց **30.23 %-ը աշխատանքային կիսամյակի ընթացքում գործատուից ստացել է աշխատանքի առաջարկ:**

ՀԱԱՀ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի հետ համատեղ, ՈւԳԿՎ ՊՀՈՒՎ բաժինը հարցում է կատարել նաեւ գործատուների շրջանում՝ ըստ ֆակուլտետների, որի արդյունքները ներկայացվում են ստորեւ.

### Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ

Որքանով արդարացան Ձեր սպասումները (գնահատեք 1-4 բալային սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր և 4-ը՝ ամենաբարձր միավորն է)


13 ответов



### Ագրոբիզնեսի եւ տնտեսագիտության ֆակուլտետ

Որքանով արդարացան Ձեր սպասումները (գնահատեք 1-4 բալային սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր և 4-ը՝ ամենաբարձր միավորն է)


4 ответа



### Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ

Որքանով արդարացան Ձեր սպասումները (գնահատեք 1-4 բալային սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր և 4-ը՝ ամենաբարձր միավորն է)


3 ответа



## Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության ֆակուլտետ

Որքանով արդարացան Ձեր սպասումները (գնահատեք 1-4 բալային սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր եւ 4-ը՝ ամենաբարձր միավորն է)

3 ответа



Այսպիսով, ՀԱԱՀ-ում արդեն երկրորդ տարին կազմակերպված աշխատանքային կիսամյակը կարելի է համարել հաջողությամբ իրականացված:

Մագիստրատուրայի առկա ուսուցման 20 մասնագիտությունների բոլոր մագիստրանտներն անցկացրել են իրենց հետազոտական, իսկ քոլեջի 10 մասնագիտությունների բոլոր ուսանողները՝ նախատեսված արտադրական փորձուսուցումները:

### ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2023-2024 ուստարում ՀԱԱՀ վարժարանի 10-րդ դասարան է ընդունվել 86 աշակերտ, 2023 թ. դեկտեմբերի դրությամբ վարժարանի աշակերտների ընդհանուր թիվը 269 է: Վարժարանը 2023 թ. իրականացրել է 10-12-րդ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված բոլոր հանրակրթական առարկաների ուսուցումը, արձանագրվել է աշակերտների 90 %-ի հաճախելիություն:

2023-2024 ուսումնական տարում վարժարանն ունեցել է 25 հիմնական եւ համատեղությամբ աշխատող 5 աշխատակից, որոնք տարվա ընթացքում մասնակցել են տարբեր վերապատրաստումների եւ դասընթացների: Պարտադիր ատեստավորման ենթակա 3 ուսուցիչ վերապատրաստվել է, հավաքել անհրաժեշտ կրեդիտները եւ ստացել համապատասխան վկայագրեր: ԿԳՄՄՆ-ի կողմից անցկացվող ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել եւ բարձր արդյունքներ է արձանագրել վարժարանի երկու ուսուցիչ, որոնց աշխատավարձերը հոկտեմբեր ամսից հինգ տարի ժամկետով ավելացվել են համապատասխանաբար 40 (1 ուսուցիչ) եւ 30 (1 ուսուցիչ) տոկոսով: Եւս մեկ ուսուցիչ նորից է մասնակցել կամավոր ատեստավորմանը եւ բարձրացրել իր արդյունքը, նախորդ տարվա 30 տոկոսի փոխարեն հավակնելով 40 տոկոսի հավելավճարի:

Վարժարանի սովորողները տարվա ընթացքում հնարավորություն են ունեցել «Ֆիզիկա», «Քիմիա» եւ «Կենսաբանություն» առարկաների գործնական աշխատանքներն անցկացնել հիմնանորոգված լաբորատորիաներում, որը նպաստել է այդ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության մեծացմանը:

2023 թ. ընթացքում տեղի է ունեցել 8 միջոցառում, հանդիպումներ եւ առարկայական բաց դասեր: Կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետներ եւ ստորաբաժանումներ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:

Վարժարանն ավարտել է 63 շրջանավարտ, որոնց ավելի քան 38 %-ը ընդունվել է ՀԱԱՀ:

## **ՀԱԱՀ Ա. ՔՈՇԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ**

Ա. Քոշինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջում 2023 թ. հունվարին մեկնարկել է 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակը, որի ընթացքում իրականացվել է 18 մասնագիտությունների գծով ուսումնական գործընթաց: Հունվարի 1-ի դրությամբ քոլեջում առկա համակարգում սովորել է 707 ուսանող, որոնցից 243-ը՝ վճարովի հիմունքներով:

Ա. Քոշինյանի անվան գյուղատնտեսական քոլեջն այն եզակիներից է, որ հաջողությամբ կիրառում է դուալ՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցումը: Ծրագիրն իրականացվում է երկրի առաջատար ընկերությունների հետ կնքված պայմանագրերի, հուշագրերի շրջանակներում:

2023-2024 ուստարվանից 18 մասնագիտություններից 8-ի՝ «Գինեգործություն (խաղողագործություն եւ էնոլոգիա)», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքների տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն», «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում եւ շահագործում», «Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա», «Ագրոնոմիա», «Խմորման արտադրության տեխնոլոգիա եւ գինեգործություն», գծով դուալ ուսուցում է իրականացվում:

«Գինեգործություն (խաղողագործություն եւ էնոլոգիա)» մասնագիտության երրորդ եւ չորրորդ կուրսերն առաջին կիսամյակի մեկնարկը տվեցին գործատուների մոտ, ընդ որում՝ մեծ հաջողությամբ. գործատուներն ուսանողների խմբից արդեն ունեն նախընտրած ապագա աշխատակիցներ:

Հավատարիմ մնալով իր կրթական ռազմավարությանը, հանձնառելով նոր կրթական ծրագրերի մշակման եւ ներդրման դժվարին ու պատասխանատու գործը, ելնելով աշխատաշուկայի պահանջարկից՝ 2022-2023 ուստարում քոլեջը ներդրել է 3 տեխնոլոգիական մասնագիտություն՝ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն», իսկ 2023-2024 ուստարում՝ «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում եւ շահագործում», «Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա», «Ագրոնոմիա»:

Քոլեջը 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակը սկսել է 772 ուսանողներով (անվճար՝ 500, վճարովի՝ 272), որից 323-ը՝ առաջինկուրսեցիներ (անվճար՝ 207, վճարովի՝ 116): Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար՝ նախորդ տարվա համեմատ 7-8 %-ով նվազած ցուցանիշ:

Հաշվետու ժամանակահատվածում քոլեջից տարբեր պատճառներով ազատվել, հեռացվել եւ այլ ուսումնական հաստատություններ է տեղափոխվել 104 ուսանող, իսկ վերականգնվել եւ այլ ուսումնական հաստատություններից տեղափոխվել է 33 ուսանող, որոնցից 18-ը՝ Արցախի Հանրապետությունից:

Պարտադիր զինվորական ծառայության մեկնել է 6 ուսանող, իսկ ծառայությունից վերադարձել՝ 9-ը:

Ուսանողներն ակտիվ մասնակցել են ՀԱԱՀ-ում անվճար հիմունքներով կազմակերպած «Փափուկ հմտություններ, անձնային աճ, կարիերայի պլանավորում եւ կառավարում» եւ «Շոկոլադագործություն» կարճաժամկետ դասընթացներին,

կրթական եւ հանրային միջոցառումներին, ոլորտային մասնագետների հետ հանդիպումներին:

Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին եւ դիպլոմային նախագծերի պաշտպանությանը մասնակցել են բոլոր թույլատրված 211 ուսանողները: 2-րդ պետական ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներով գյուղատնտեսական քոլեջն ունեցել է 198 շրջանավարտ, այդ թվում 24-ը ստացել է գերազանցության դիպլոմ: ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել 79 ուսանող: 2023 թ. դեկտեմբերի դրությամբ քոլեջում ուսանում է 779 ուսանող, որից վճարովի համակարգում՝ 276 ուսանող:

## **ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ**

Հավատարիմ մնալով ՀԱԱՀ-ի առաքելությանը՝ ՀԱԱՀ մասնաճյուղերում 2023 թ. շարունակել են իրականացվել ուսանողական համակազմի համալրմանը, ուսումնառության եւ դասավանդման գործընթացի արդիականացմանը, մայր բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բազմազանեցմանը, գործատու - գործընկեր կազմակերպությունների հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաեւ մասնաճյուղերի ենթակառուցների հզորացմանը միտված աշխատանքներ:

## **ՎԱՆԱՃՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

2023 թվականի ապրիլի 14-ին կառավարության 252-Ն որոշմամբ «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը, իր աշխատակիցներով, ուսանողներով եւ Վանաձոր քաղաքի Ուսանողական 9 հասցեում գտնվող մասնաշենքերով, փոխադրման կարգով միացել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին:

2023 թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների թիվը կազմել է 213 ուսանող հեռակա ուսուցման բակալավրիատի 8 կրթական ծրագրով 26 խմբերում, որոնցից 12-ը գտնվում է զինծառայության մեջ: Առկա ուսուցման միջին մասնագիտական 8 կրթական ծրագրով 22 խմբերում սովորում է 215 ուսանող, որոնցից 171-ը՝ պետպատվերի համակարգում, իսկ 12 ուսանող գտնվում է զինծառայության մեջ: Նախնական մասնագիտական 1 կրթական ծրագրով 2 խմբում սովորում է 25 ուսանող՝ բոլորը պետպատվերի շրջանակում:

2023-2024 ուստարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության արդյունքներով 5 մասնագիտությունների գծով մասնաճյուղ է ընդունվել 79 ուսանող, որը նախորդ տարվա տվյալների համեմատ 2 անգամ ավելի է:

2022-2023 ուստարում մասնաճյուղն ունեցել է 93 շրջանավարտ, որից բակալավրիատի կրթական ծրագրով՝ 43 (նախորդ տարի՝ 52), միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 42 (նախորդ տարի չի եղել), նախնական մասնագիտական կրթական ծրագրով՝ 8 ուսանող (նախորդ տարի չի եղել):

ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հաշվետու տարում վերապատրաստվել է մանկավարժական անձնակազմի 10 դասախոս: Էրազմուս շարժունության ծրագրի շրջանակում վերապատրաստվել է մասնաճյուղի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի «Հավասար կրթական հնարավորություններ» դասընթացի շրջանակում վերապատրաստվել է 16 աշխատակից: Վերապատրաստում է անցել նաեւ կարիերայի ուղղորդման պատասխանատուն՝ Հայաստանի աշխատուժի զարգացման ծրագրի եւ Career Lab «Կարիերայի շարժունության կենտրոն» ՀԿ կազմակերպած «Կամրջելով կրթությունը աշխատաշուկայի հետ» ծրագրի շրջանակում:

Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակում մասնաճյուղում բացվել են 3 լաբորատորիա-արտադրամասեր (պահածոյի, մսի, կաթի վերամշակման), որոնք բոլորն էլ հագեցած են ժամանակակից սարքավորումներով: Լաբորատորիաներում իրականացվել է պանրագործության 4, հյութերի արտադրության 2 դասընթաց:

Մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդում է 60 դասախոս, ասիստենտ, դոցենտ եւ պրոֆեսոր, որոնցից 23-ը Վանաձոր քաղաքում գործող այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից, հանրակրթական դպրոցներից եւ այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ են, իսկ 37-ը ՀԱԱՀ-ի մասնագետներն են:

### **«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

«ՀԱԱՀ Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում ուսուցումը իրականացվում է առկա ձեռնարկով՝ «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Ապրանքագիտություն», «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն», «Կաթի եւ կաթնամթերքների տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքների տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն», «Մենեջմենթ», «Հաշվապահական հաշվառում», «Անասնաբուժություն» մասնագիտությունների գծով, որոնցից վերջին 4-ի ուսպլանները լրամշակվել են ըստ վերանայված չափորոշիչների:

Քոլեջում 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 136 ուսանող (նախորդ տարում՝ 169), որից 26-ը՝ վճարովի համակարգում: 2023-2024 ուստարում քոլեջ է ընդունվել 52 դիմորդ (նախորդ ուստարում՝ 35), որից 22-ը՝ վճարովի ուսուցմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բանակ է զորակոչվել 7 (նախորդ տարում՝ 4) ուսանող, 4-ը՝ վերադարձել տարկետումից (նախորդ տարում՝ 3), հեռացվել 28-ը (նախորդ տարում՝ 25), վերականգնվել՝ 1 ուսանող: Ավարտել եւ որակավորում է ստացել 29 ուսանող (նախորդ տարում՝ 45), որից 5-ը ստացել է գերազանցության դիպլոմ, 6 շրջանավարտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ է գրանցվել:

Պետական համալիր քննությունների եւ դիպլոմային աշխատանքների պաշտպանության ներկայացել է ուսանողների համապատասխանաբար 100 եւ 80 տոկոսը, պետական համալիր քննություններից գերազանց գնահատական է ստացել ուսանողների 50 տոկոսը:

Արտադրական փորձուսուցումների կազմակերպման եւ անցկացման համար պայմանագրեր են կնքվել մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Գյումրիի համայնքապետարան, «Գյումրիի սելեկցիոն

կայան» ՓԲԸ, «Անուշարան Գրուպ» ՍՊԸ, «Եգան» ՍՊԸ, «Տրանս ակնթարթ» ՍՊԸ, «Իգիթ կաթնամթերքի գործարան» ՍՊԸ, «Չերքեզի Ձոր» ՍՊԸ, «ՕԿԵՅ» ՍՊԸ, ԱՁ Սարոյան, ԱՁ Մ. Զաքարյան, ԱՁ Ս. Ադամյան, ԱՁ Կ. Սիմոնյան, ԱՁ Պ. Թորոսյան, ԱՁ Բ. Պետրոսյան, «Ֆրանս» ՍՊԸ, «Պրոյեկտ ինտեր-ինվեստ ՍՊԸ, Լեն ճանշին ՍՊԸ, Աշոցքի պանրի գործարան ՍՊԸ, Հայր եւ որդի Գյոդակյաններ» ՍՊԸ, «Ֆրեշիփ» ՍՊԸ, «Նետ պրոֆիտ հաշվապահական գրասենյակ», CreateOn Academy: Քոլեջում տարբեր ծրագրերի շրջանակներում անցկացվել են՝

- «Հայաստանի աշխատուժի զարգացման ծրագիր»-«Փափուկ հմտությունների» 4-օրյա դասընթաց,
- «Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները» կարճաժամկետ դասընթաց,
- ՄԱԶԾ ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում կանաչ տնտեսության առաջխաղացմանն ու կառուցողական հանրային երկխոսությանը» ծրագրի շրջանակում «Կանաչ տնտեսություն» թեմայով դասընթաց:

Հաբում պարբերաբար իրականացվում են նաեւ հանդիպումներ մասնագիտական կողմնորոշման նպատակով, որտեղ ներկայացվում են քոլեջում գործող մասնագիտությունները, լաբորատորիաները եւ գործատուների պահանջները:

Տարբեր քոլեջների ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է բանավեճ «Շիրակի մարզում պետք է լինեն պլաստիկ վերամշակման կենտրոններ» թեմայով, քոլեջի ուսանողների համար՝ «Ինչպես կազմել մրցունակ աշխատանքային կենսագրական (CV)», «Հաղորդակցման կարողությունների ձեւավորում», «Ինքնաճանաչումն ու ինքնագնահատականը որպես անձնային աճի հիմնաքար (մեթոդ՝ Ջոհարիի պատուհան), «Ինչ է մոտիվացիան եւ ինչպես այն չկորցնել» թեմաներով հանդիպումներ, ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառում, ինչպես նաեւ անցկացվել են անհատական խորհրդատվություններ, տարբեր խմբային աշխատանքներ, խաղեր եւ մրցույթներ: Կազմակերպվել են էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր ՀԱԱՀ, ՀԱԱՀ Վանաձորի մ/ճ:

Գիտելիքի նորարարական հաբում եւս իրականացվել են Ջրի կարելության ու խնայողության իրազեկման բարձրացման, Երկրի օրվա, Սոցիալական ձեռներեցության միջազգային շաբաթին, Կանաչ սպառողի օրվան նվիրված մի շարք արշավներ:

## **ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ գործող 6 կրթական ծրագրերով՝ «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա», «Ագրոէկոնոմիկա եւ սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Հողաշինարարություն, հողային կադաստր», «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրերի գծով առաջինից վեցերորդ կուրսերում սովորում է 119 ուսանող (նախորդ տարի՝ 135), այդ թվում՝ 4-ը գտնվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ: 2023 թ. մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 4 ուսանող (2022-ին՝ 18):

Մասնաճյուղից հեռացվել (ազատվել) է 10 ուսանող, վերականգնվել՝ 8-ը: 2023 թ. մասնաճյուղը ունեցել է բակալավրի կրթական ծրագրով 22 շրջանավարտ (2022 թ.՝ 33), իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով 18 շրջանավարտ (2022 թ.՝ 9): Միջին մասնագիտական կրթական ծրագրով, հիմնական հանրակրթության հիմքով, առկա ուսուցմամբ «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (Կառավարում)», «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն» 6 մասնագիտությունների գծով առաջինից չորրորդ կուրսերում սովորում են 206 ուսանող: 2023 թ. մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրի առաջին կուրս է ընդունվել 95 ուսանող (2022 թ.՝ 60 ուսանող), այդ թվում՝ 34-ը անվճար ուսուցմամբ: Միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող 76 ուսանողի տրվել է պետական կրթաթոշակ:

Հաշվետու տարում իրականացվել են մասնաճյուղի 15 դասախոսի վերապատրաստում, ինչպես ՄԿՈՒԶԱԿ-ի, այնպես էլ ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակներում:

2023 թ. ընթացքում ուսումնական գործընթացին զուգահեռ տարբեր ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է կարճաժամկետ վերապատրաստման 11 դասընթաց՝ կաթի վերամշակման, այգեգործության, մեղվաբուծության եւ ջերմատնային տնտեսության կառավարման թեմաներով, որտեղ մասնակիցների թիվը կազմել է 212՝ 15-29 տարիքային խմբում:

2023 թ. կարեւոր ձեռքբերումներից է «Իմ քայլը» հիմնադրամի, Սյունիքի մարզպետարանի եւ ՀԱԱՀ-ի միջեւ կնքված եռակողմ համաձայնագիրը, ըստ որի **Սյունիքի մարզի 9 դպրոցներում ներդրվել է «Ագրոտեխնոլոգիա դասընթաց»** խմբակը՝ 10-րդ եւ 11-րդ դասարաններում սովորող աշակերտների համար:

«Հորիզոններ» դուալ կրթական ծրագրի շրջանակում 150 աշակերտների համար կազմակերպվել է ամառային ճամբար, որտեղ որպես կազմակերպիչներ հանդես են եկել մասնաճյուղի աշխատակիցները, իսկ մասնաճյուղի 3 դասախոս իրականացրել է 5 դասընթաց՝ ծրագրում ներառված թեմաներով:

«Ագրոտեխնոլոգիա դասընթաց» խմբակի ծրագրով նախատեսված գործնական պարապմունքների կազմակերպմանը մասնակցել եւ աջակցել է նաեւ մասնաճյուղը՝ օգտագործելով ինչպես համալսարանի, այնպես էլ փորձուսուցման գործընկերների ներուժը: Մասնաճյուղում ՀՕՖ-ի ֆինանսավորմամբ գործում է «Գյուղատնտեսության վարման նախնական գիտելիքներ» խմբակը՝ Սիսիան խոշորացված համայնքի հիմնական դպրոցների 8-րդ եւ 9-րդ դասարանի 52 աշակերտների համար:

Հաշվետու տարում շարունակվել են նաեւ մասնաճյուղի նյութատեխնիկական, լաբորատոր եւ ուսումնափորձարարական բազայի արդիականացմանն ուղղված աշխատանքները: Նպատակին է ծառայում եւ ամբողջությամբ օգտագործվում է ՀԱԲ-լսարանի ռեսուրսը, ավարտվել են հողի անալիզի լաբորատորիայի շինարարական աշխատանքները եւ կահավորվել ամբողջությամբ:

Բարեկարգվել եւ կահավորվել է մասնաճյուղի մասնաշենքի երրորդ հարկը, ուսխորհուրդը հաջողությամբ ավարտել է դրամաշնորհային մեկ ծրագիր, հարդյունս որի համալսարանի մարզադահլիճը համալրվել է 5 կտոր մարզագույքով:

Շարունակվում է արդյունավետ համագործակցությունը ՀՕՖ-ի հետ, որի ֆինանսավորմամբ խելացի գյուղատնտեսության կենտրոնում ավարտվել է խելացի անասնաշենքի շինարարությունը, ցանկապատվել է տարածքը, անցկացվել է



ջրագիծ եւ կոյուղագիծ: Ընթացքի մեջ են քիմիայի եւ ֆիզիկայի լաբորատորիայի վերանորոգման եւ կահավորման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2024 թ.:

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի (WFP) ֆինանսավորմամբ ավարտվել են ջերմատան եւ ինտենսիվ այգու կառուցման աշխատանքները:

Սեպտեմբերի 5-ին շահագործման է հանձնվել ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան ֆինանսավորած մեքենատրակտորային կայանը: Այդ օրերին փորձարկվել է GIZ-ի ֆինանսավորմամբ ձեռք բերված կանաչ կերի հիդրոպոնիկ սարքը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ



### ԱԳՐՈՐԻՉՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)

2022-2023 ուստարում Ագրոբիզնեսի դեպարտամենտի (Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն) բակալավրիատում Ագրոբիզնես մասնագիտությամբ սովորել է երրորդ կուրսի 9 (3-ը՝ անվճար համակարգում) եւ չորրորդ կուրսի 7 ուսանող: 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում երրորդ կուրսի 2 ուսանող Էրազմուս+ ՀԳ1 միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակում ուսումը 5 ամսով շարունակել եւ հաջողությամբ ավարտել են Հունաստանի Արեւմտյան Ատիկայի եւ Պրեուսի համալսարաններում:

Դասընթացներն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով տարբեր առարկաների շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են հրավիրյալ դասախոսություններ: Մասնավորապես, թվային մարկետինգ առարկայի շրջանակում Դի Էմ քրնսալթինգ կազմակերպության որոնողական համակարգերի օպտիմալացման մասնագետ Նոնա Ստեփանյանը ուսանողներին ծանոթացրել է բանալի բառերի հետազոտության The hoth գործիքակազմին:

«Ագրոբիզնեսի կառավարում» առարկայի շրջանակում «Նորարարական գյուղատնտեսական տեխնոլոգիաներ», «Եկամտահարկ եւ կառավարչական որոշումների կայացում» եւ «Ավելացած արժեքի հարկ եւ կառավարչական որոշումների կայացում» թեմաներով դասախոսություններ են վարել եւ ուսանողներին իրենց մասնագիտական փորձը փոխանցել ICARE հիմնադրամի մասնագետներ Աննա Հովհաննիսյանը, Հայկ Բալանյանը եւ Վահե Հարությունյանը:

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի ուսանողները հյուրընկալել են 2mindS կազմակերպության համահիմնադիր Գայանե Գրիգորյանին, որը ներկայացրել է աշխատաշուկա մուտք գործելու, հարցազրույցներին ճիշտ պատրաստվելու եւ ներկայանալու հմտությունները:

2023 թ. մայիսի 31-ին ավարտական կուրսի 6 ուսանողները հաջողությամբ հանձնել են դիպլոմային ավարտական աշխատանքները, եւ Ավարտական աշխատանքների հանձնաժողովի 31.05.2023 թ. որոշման համաձայն նրանց շնորհվել է տնտեսա-

գիտության բակալավրի որակավորում, ընդ որում շրջանավարտներից երկուսն արժանացել է գերազանցության դիպլոմի: 2023 թ. հունիսի 27-ին ICARE հիմնադրամի Ջաբել Եսայան ագրոբիզնեսի կենտրոնում տեղի ունեցած ավարտական միջոցառման ժամանակ շրջանավարտներին հանձնվել են ՀԱԱՀ դիպլոմներ եւ Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում Ագրոբիզնեսի բակալավրիատի ինը դիմորդների համար կազմակերպվել է երկամսյա նախապատրաստական դասընթաց «Գյուղ. էկոնոմիկայի հիմունքներ», «Գծային հանրահաշիվ» եւ «Գործարար անգլերեն» առարկաներից: Քննությունների արդյունքների հիման վրա բոլոր ինը մասնակիցները ընդունվել են Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի 3-րդ կուրս՝ 2023-2024 ուստարում «Ագրոբիզնեսի եւ սննդի արդյունաբերության կառավարում» կրթական ծրագրում ուսումը շարունակելու համար: Ուսանողների թիվը նախորդ տարվա համեմատությամբ չի փոխվել:

Հաշվետու ժամանակահատվածում երրորդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել է ուսումնական այց «Դառագետ» գարեջրի գործարան, որի նպատակն էր ծանոթանալ գործարանի գործունեությանը, գարեջրի պատրաստման, շալցման, պիտակավորման, գործընթացին, ինչպես նաեւ շուկայավարման եւ վաճառքի աշխատանքներին: Ուսանողները նաեւ այցելել են Շիրակի մարզի Ազատան համայնքում գործող տոհմային ոչխարաբուծության «Մաքի» գենետիկական կենտրոն:

2023-2024 ուստարվա չորրորդ կուրսի առաջին կիսամյակում կազմակերպվել է ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային կիսամյակը (արտադրական փորձուսուցում) հետեւյալ ընկերություններում՝ «ԲԵՍ ՖՐՈՒԹՍ ԱՄ» ՍՊԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Էմ Բի Ջի գրուպ» ՍՊԸ, «Վենլո/ՀՁ» ՍՊԸ, «Դի Էմ Քընսալթինգ» ՍՊԸ, «Արմենիա Վայն» ՍՊԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ:

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի ուսանողների, ինչպես նաեւ հանրության շուրջ 40 մասնակիցների համար լսարանային պայմաններում կազմակերպվել են Գործարար անգլերենի դասընթացներ:

### **ԱԳՐՈՒԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)**

2022-2023 ուստարում Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրոսական ծրագրում սովորել է 4 ուսանող, որոնցից 2-ը՝ անվճար համակարգում: 2022-2023 ուստարում դեպարտամենտում առաջին կուրս չի ձեւավորվել:

2023 թ. փետրվարի 27-ին ավարտական կուրսի 4 մագիստրանտները գերազանց պաշտպանել են մագիստրոսական ավարտական աշխատանքները «Հիդրոպոնիկ եղանակով ռուկոլայի աճեցման իրագործելիության ուսումնասիրություն», «Ուղղահայաց գյուղատնտեսական տեխնոլոգիայի կիրառմամբ միկրոկանաչիների արտադրության բիզնես պլան», «Հայաստանում մեկ շնչի հաշվով ցորենի պահանջարկի գնահատումը», «Գինու արտադրության հետազոտություն. արտահանման շուկայի վերլուծություն» թեմաներով եւ Ավարտական աշխատանքների հանձնաժողովի 27.02.2023 թ. որոշման համաձայն, նրանց շնորհվել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում: 2023 թ. հունիսի 27-ին կազմակերպված ավարտական միջոցառման ժամանակ մագիստրանտներին հանդիսավորությամբ շնորհվել են ՀԱԱՀ գերազանցության դիպլոմներ ու Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:



## **ԻՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ**

ԻՎԻ-ԷՆ գինու ակադեմիայի «Գինեգործություն եւ գինու բիզնես» 18-ամսյա մասնագիտական հավաստագրային ծրագրի 2022-2023 ուստարում ընդունված 7 ուսանողներից 5-ը հաջողությամբ անցել է նախապատրաստական փուլը եւ շարունակում է ուսումը հիմնական կուրսում:

Լսարանում ձեռք բերած տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով յուրաքանչյուր առարկայի շրջանակում իրականացվել են ուսումնական այցեր տարբեր գինեգործարաններ եւ խաղողի այգիներ: Ուսանողների արտադրական փորձուսուցումը կազմակերպվել է հետեւյալ ընկերություններում՝ «ԿԱՐԱՍ ՎԱՅՆՍ» («ՏԻԵՌԱՍ ԴԵ ԱՐՄԵՆԻԱ») ՓԲԸ, «Արմենիա Վայն» ՍՊԸ, «Ջրաղացպանյան Վայների» ՍՊԸ: Նոյեմբերի 1-ից, 4 շաբաթ տևողությամբ, արտադրական փորձուսուցման ավարտից հետո շարունակվում են նաեւ 2022-2023 ուստարվա ուսանողների դասընթացները:

2023 թ. ավարտական միջոցառման ժամանակ Գայգենհայմի համալսարանի կողմից ավարտական հավաստագրեր են շնորհվել ԻՎԻ-ԷՆ Գինու ակադեմիայի «Գինեգործություն եւ գինու բիզնես» ծրագիրը հաջողությամբ ավարտած 5 շրջանավարտներին:

2023-2024 ուսումնական տարում ԻՎԻ-ԷՆ Գինու ակադեմիայի «Գինեգործություն եւ գինու բիզնես» ծրագրին դիմած 20 ուսանողից 13-ը մասնակցում է երկամսյա նախապատրաստական դասընթացին:

Այս տարի դիմորդների թիվը, նախորդ 2 տարիների համեմատ, աճել է, որը փաստում է ոլորտի նկատմամբ պահանջարկի աճի մասին:

## **ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱՔՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

«Ջերմատնային մշակաբույսերի մշակություն եւ կառավարում» դասընթացի նպատակն է պատրաստել փակ գրունտում մշակաբույսերի մշակության ժամանակակից պահանջները բավարարող, ինչպես նաեւ շուկայի եւ կառավարման հիմունքներին ծանոթ մասնագետ-գյուղատնտեսների:

Դասընթացի 6-րդ փուլը մեկնարկել է 2023 թ. հունիսին 2-ին: Հարցազրույցի արդյունքներով 30 դիմորդներից ընտրվել է 10-ը, իսկ դասընթացի առանձին մոդուլների մասնակիցների թիվը 7-ն է: Հաշվի առնելով հեռավոր մարզերից մասնակիցների առկայությունը, դասընթացն իրականացվում է հիբրիդային տարբերակով: Ծրագրի ընթացքում ուսանողների համար կազմակերպվել են այցեր Մարգարա համայնքի լուլիկի հիդրոպոնիկ ջերմատնային տնտեսություն, Ոսկեհատ համայնքի Ելակի հիդրոպոնիկ ջերմատուն, Գագարին համայնքում գտնվող վարդի հիդրոպոնիկ ջերմատուն, Վաղարշապատում գտնվող բարձրարժեք մշակաբույսերի ջերմատուն: Մասնակիցները նաեւ փորձուսուցում են անցել տարբեր ջերմատնային տնտեսություններում՝ ստանալով արդիական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

8-ամսյա դասընթացի 6-րդ փուլը կավարտվի 2024 թվականին:

## **ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

2023 թ. հունվարի դրությամբ Ագրարային մենեջմենթ մագիստրոսական ծրագրի գերմանալեզու խմբում սովորել է 9 մագիստրանտ, 3-ը՝ երկրորդ ավարտական կիսամյակում, 4 մագիստրանտի տրամադրվել է գործուղում: 2023-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում փորձուսուցում անցնելու եւ ուսանելու կապակցությամբ Ագրարային մենեջմենթ ծրագրի 2 մագիստրանտի եւ բակալավրիատի 4 շրջանավարտի, որոնք համարվել են Ագրարային մենեջմենթ ծրագրին կցագրված ուսանողներ, տրամադրվել է գործուղում, որից 5-ը գործնական կիսամյակը հաջողությամբ ավարտելուց եւ քննությունները հաջող հանձնելուց հետո հնարավորություն են ստացել իրենց հաջորդ տեսական կիսամյակում սովորել Գերմանիայի Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում, իսկ 1 ուսանող վերադարձել է Հայաստան եւ ուսումը շարունակում է ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի առաջին տեսական կիսամյակում:

2023 թ., սահմանված ժամանակացույցի համաձայն, 3 մագիստրանտներ պաշտպանել են մագիստրոսական ատենախոսությունները: 2 մագիստրանտի շնորհվել է ՀԱԱՀ-ի տնտեսագիտության մագիստրոսի դիպլոմ եւ Գերմանիայի ՎԿԳՀ-ի հավաստագիր, իսկ 1 ուսանող ստացել է ՀԱԱՀ-ի տնտեսագիտության մագիստրոսի դիպլոմ եւ ՎԿԳՀ-ի դիպլոմ (կրկնակի դիպլոմ): 2023 թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 17 ուսանող, սակայն մասնակցել են միայն 7-ը: 2023 թ. Ագրարային մենեջմենթ ծրագրի առաջին կուրս ընդունվելու հայտ է ներկայացրել 7 ուսանող, որոնք բոլորն էլ հրամանագրվել են գերմանալեզու խմբում (2-ը՝ անվճար համակարգում): Միջազգային եւ միջբուհական գործակցային ծրագրերի շրջանակներում 01.10.2023 թ-ից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 6-ը ուսումը շարունակում է Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում՝ 5-ը առաջին կուրսում, 1-ը՝ երկրորդ կուրսում: 2023 թ. ՀԱԱՀ-ի Ագրարային մենեջմենթ ծրագրի մագիստրանտների համար անցկացվել են դասընթացներ (պրակտիկումներ) «Տնտեսագիտական ինֆորմատիկա», «Գյուղարտադրության էկոնոմիկա», «Ձեռնարկությունների վերլուծություն եւ վերահսկում» առարկաներից՝ Գերմանիայի ՎԿԳՀ-ից հրավիրված 3 հայ ուսանողների ուժերով: 2023 թ. նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 4-ը ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի մագիստրանտների եւ բակալավրիատի՝ ծրագրին կցագրված 3 ուսանողի համար անցկացվել է ուսումնաճանաչողական այց ՎԿԳՀ:

ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2022-2023 ուսումնական տարվա երկու շրջանավարտ աշխատանքի է անցել Հայաստանի տարբեր գերմանական կազմակերպություններում, իսկ մեկ շրջանավարտ ընդունվել եւ այժմ սովորում է ՀԱԱՀ-ի ասպիրանտուրայում:

2023 թ. DAAD կազմակերպության ֆինանսավորմամբ տեխնիկապես վերազինվել է ծրագրին կցված 1-346 համակարգչային լսարանը, ձեռք են բերվել գերմաներեն լեզվի դասագրքեր:

## **ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետու ժամանակաշրջանում Կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության բաժնի կատարած աշխատանքներն իրականացվել են մասնագիտական վերապատրաստումների, կողմնորոշման, կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության ուղղություններով:

## **ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2023 թ. բաժինը կազմակերպել եւ համակարգել է ՀԱԱՀ 143 աշխատակցի վերապատրաստում տարաբնույթ թեմաներով:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել է մասնագիտական վերապատրաստման 8 դասընթաց, որոնց մասնակցել է ՀԱԱՀ 45 դասախոս:

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում մասնագիտական վերապատրաստում են անցել եւ հավաստագիր ստացել ՀԱԱՀ տնտեսական բաժնի 3 աշխատակիցներ:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գործընկերների եւ ուսանողների համար կազմակերպվել է առցանց հանդիպումների շարք՝ «Նորագույն տեխնոլոգիաները որպես ջերմատնային տնտեսություններում բարձր բերք ստանալու երաշխիք», «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող սննդի հիգիենայի պահանջները» եւ «Կենդանիների այլընտրանքային կերակրում» թեմաներով:

Բաժինը կազմակերպել եւ իրականացրել է հետեւյալ կարճաժամկետ դասընթացները.

- «Շոկոլադագործություն» կարճաժամկետ դասընթաց, որին մասնակցել է 8 շահառու,
- Շարունակվել է «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցման ծրագրի 11-12-րդ փուլերի իրականացումը, որին մասնակցել է 16 շահառու,
- «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակում համադրվել են ֆերմերների համար իրականացվող մեկշաբաթյա դասընթացները, որոնց մասնակցել է 9 ֆերմեր,
- Չանախ պանրի պատրաստման տեխնոլոգիա՝ 1 շահառու,
- «Քիմիկ-լաբորանտի» դասընթաց՝ 1 շահառու,
- «ԵՏՀ եւ հեռահար զոնդավորումը կանաչ գյուղատնտեսությունում» վերապատրաստման դասընթացի 2 փուլ՝ 54 մասնակից, որոնցից հավաստագիր է ստացել 38-ը,
- Սառնարանային պահպանման, նախագծման եւ զարգացման դասընթաց, որին մասնակցել է 15 շահառու:

## **ԿԱՐԻԵՐԱ**

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀԱԱՀ-ում շրջայցեր են կազմակերպվել Երեւանի եւ ՀՀ մարզերի 35 դպրոցների ավելի քան 1520 աշակերտների համար: Շրջայցերի ընթացքում աշակերտներին ներկայացվել են աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները, մեր համալսարանի բարեփոխումները եւ բուհի ընձեռած կրթական հնարավորությունները:

- Երեւանի եւ ՀՀ մարզերի 47 դպրոցներում ՀԱԱՀ ներկայացուցիչներն իրականացրել են մասնագիտական կողմնորոշման այցեր:
- «Լավագույնը մեր ուսանողներին» հանդիպումների շարք ՀԱԱՀ գործընկերների, մասնավորապես՝ «Երեւանի Փրոջեքթս», «Դասավանդիր Հայաստան» ՀԿ, «Բեւեռ» ՍՊԸ, «Դիջիթեյն» ՓԲԸ, «Այվազյան եւ փարտներշիփ», «Երեւանի շոկոլադի գործարան» ՍՊԸ, «Պրեմիում ինգրիդիենթս» ՍՊԸ, «Նարեկ» գիտահետազոտական ընկերության, «Վեդի Ալկո» ՍՊԸ, ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող 5, ագրոնոմիական ոլորտում գործող 3 եւ անասնաբուժական 4 ընկերությունների ներկայացուցիչների հետ: Որպես արդյունք՝ **10 շրջանավարտ** ընդունվել է աշխատանքի ՀԱԱՀ գործընկեր կազմակերպություններում:
- «Դասավանդիր Հայաստան» ՀԿ, «Դիջիթեյն» ՓԲԸ ներկայացուցիչները ուսանողներին ներկայացրել են իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները եւ կարիերայի զարգացման հեռանկարները:
- Իրականացվել է «Ինչպե՞ս կազմել գրագետ CV» վերնագրով սեմինար-դասընթաց, մասնակիցների թիվը՝ 55:
- ՀԱԱՀ 25 ուսանողներ մասնակցել են «Կրթություն եւ կարիերա EXPO-2023» ցուցահանդեսին եւ Գյուղական կյանքի եւ ավանդույթների ամենամյա փառատոնին:
- Իրականացվել է «Կարիերայի եւ մասնագիտությունների օր» քուլեջների ուսանողների համար:
- Անընդհատ թարմացվում է շրջանավարտների տվյալների բազան:
- Իրականացվել է Exit survey (2022--2023) ուստարվա առկա եւ հեռակա շրջանավարտների հետադարձ կապի հարցում: Մասնակիցների թիվը՝ 540:
- Ուսանողների եւ շրջանավարտների շրջանում տեղեկատվության տարածման անմիջական ու արագ կապի ստեղծման համար Facebook սոցիալական ցանցում ներդրված էլեկտրոնային հարթակին 2023 թ. դեկտեմբերի դրությամբ հետեւում է 5032 անձ, իսկ հարթակի միջոցով տարածված հայտարարությունները հասանելի են 13 300 արտաքին շահառուների: 2023 թ. ընթացքում հարթակում հրապարակվել է տեղեկատվություն դասընթաց-սեմինարների, հանդիպումների եւ այլ հնարավորությունների, ինչպես նաեւ 900-ից ավելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ:
- Գործընկեր կազմակերպությունների խնդրանքով աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվել եւ ուղարկվել շրջանավարտների անձնական էլիասցեններին: Որպես արդյունք՝ ավելի քան 12 ուսանող ընդունվել է աշխատանքի:
- Համագործակցության հուշագրեր են կնքվել 20 գործընկեր կազմակերպությունների, 30 ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

### ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՖՐՈՒՏԵՆԻԱ)



Ակտիվ իրականացման փուլում են ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ագրոտեխնիկական եւ կրթական բաղադրիչները:

Ագրոտեխնիկական բաղադրիչի շրջանակում 2023 թ. հունվար-օգոստոս ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- միջազգային փորձագետի այցի կազմակերպում,
- ֆերմերների այցելությունների կազմակերպում Ոսկեհատի ինտենսիվ պտղատու այգի,
- aygi.am կայքի բովանդակության համալրում նոր նյութերով,
- նոր տեսանյութերի նկարահանում:

2023 թվականի մարտ ամսին ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում Հայաստան այցելեց Իտալիայի Մարկեի պոլիտեխնիկական համալսարանի Գյուղատնտեսական, պարենային եւ բնապահպանական գիտությունների դեպարտամենտի տնօրեն պրոֆեսոր Դավիդե Ներին, որն ի թիվս միջազգային այլ փորձագետների խորհրդատվություն է տրամադրել ինտենսիվ պտղատու այգու հիմնման եւ պտղաբուծության վերաբերյալ ձեռնարկների պատրաստման ընթացքում: Այցի ընթացքում պրոֆեսոր Ներին մի շարք հանդիպումներ ունեցավ ICARE հիմնադրամում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, գործնական դասեր անցկացրեց ինտենսիվ պտղատու այգիներում: Պրոֆեսորը ՀԱԱՀ-ի դասախոսներին եւ ուսանողներին ներկայացրեց Մարկեի համալսարանում վերապատրաստվելու եւ սովորելու հնարավորությունները Էրազմուս+ ծրագրի շրջանակում: Պրոֆեսոր Ներին այցելեց ՀԱԱՀ-ի նորաբաց լաբորատորիաներ, ծանոթացավ կատարվող աշխատանքներին, ՀԱԱՀ Ոսկեհատ ՈՒՓՏ-ի ինտենսիվ այգում եւ Զորավան համայնքում գտնվող մասնավոր այգում ՀԱԱՀ դասախոսների, ուսանողների, պտղաբուծության փորձագետների եւ ֆերմերների համար անցկացրեց գործնական սեմինար՝ ցուցադրելով կորիզավոր ծառատեսակների էտի եւ ձեւավորման առանձնահատկությունները:

Նախագծի շրջանակում պտղաբուծությամբ հետաքրքրված ֆերմերների համար կազմակերպվել են այցելություններ Ոսկեհատի ինտենսիվ պտղատու այգի, որը 2023 թ. արդեն բերք է տվել:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում ստեղծված [www.aygi.am](http://www.aygi.am) կայքը համալրվել է նոր տեսանյութերով եւ հրապարակումներով:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի կրթական բաղադրիչի շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ գիտական խորհուրդը հրատարակման է երաշխավորել «Կայուն գյուղատնտեսության հիմունքներ» ձեռնարկը: Նախագծով նախատեսված բոլոր ձեռնարկները տեղադրվել են ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կայքում, ինչպես նաեւ aygi.am կայքում:

2023 թ. մարտին գյուղատնտեսական քոլեջների դասախոսներին՝ ինտենսիվ այգեպտղաբուծության ոլորտում կարողությունների զարգացման նպատակով շարունակվել է վերապատրաստողների վերապատրաստումը «Ինտենսիվ այգու (մասնավորա-

պես ընկույզի եւ նուշի) հիմնում», ինչպես նաեւ «Դասավանդման ժամանակակից մեթոդներ» թեմաներով: Դասընթացն անցկացվել է առցանց եղանակով:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են նաեւ «Ժամանակակից պտղաբուծության առանձնահատկությունները. ուղեցույց այգեգործի համար»

[https://drive.google.com/file/d/1uUbpz2E771j5B0FdllwTRb7WrDxjqMd-/view?usp=share\\_link](https://drive.google.com/file/d/1uUbpz2E771j5B0FdllwTRb7WrDxjqMd-/view?usp=share_link)

եւ «Կայուն գործելակերպերի ուղեցույց պտղաբուծությամբ զբաղվող ֆերմերների համար» ուղեցույցները

<https://drive.google.com/file/d/12zX7rUoonJED4b4Tx6YE8LgW-5R1kmwx/view?usp=sharing>

## **ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY)**

Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջում ԱՄՆ ՄԶԳ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակում մշակվել եւ 2023-2024 ուստարուց ներդրվել է «Ագրոնոմիա» դուալ կրթական ծրագիրը:

Ծրագրի շրջանակում մշակվել եւ իրականացվել են նաեւ տարբեր կարճաժամկետ ծրագրեր, ինչպիսիք են «Փափուկ հմտություններ», «Շոկոլադի եւ հրուշակեղենի արտադրության տեխնոլոգիա», «Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները», «Քրաֆտ զարեջրագործության եւ թորման տեխնոլոգիա», «ԱԹՍ-ների (դրոնների) կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում», «Բուսական ծագման սննդի վերամշակում-պահածոյացման տեխնոլոգիաներ», «Դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա եւ լանդշաֆտային դիզայն», «Հացաբուլկեղենի եւ հրուշակեղենի արտադրություն», «Բուսական ծագման սննդի վերամշակում-հյութի արտադրություն» եւ «Ձկնաբուծություն», «Չրի եւ բանջարեղենի արտադրություն», «Մեղվաբուծության հիմունքներ» դասընթացները: 2023 թ. ընթացքում 15-29 տարեկան 826 երիտասարդներ, կանայք եւ հաշմանդամներ ավարտել են վերոնշյալ կարճաժամկետ դասընթացները:

Ծրագրի շրջանակում ներառականության ուղղությամբ վերապատրաստվել է ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմից եւս 60 մարդ:

14 քոլեջների (այդ թվում՝ 6 գյուղատնտեսական եւ 5 գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող) կարիերայի կենտրոնների աշխատակիցները ՀԱԱՀ քոլեջների աշխատակիցների հետ միասին անցել են կարողությունների զարգացման վերապատրաստումներ եւ իրականացրել մասնագիական ուղղորդմանն ուղղված բազմաբնույթ միջոցառումներ:

2023 թ. ընթացքում իրենց դռները բացեցին ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի տեխնոլոգիական լաբորատորիան (մսամթերքի, կաթնամթերքի եւ պահածոյացման), Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի գիտելիքի նորարարական հաբը, Ուսանողների հաջողության կենտրոնը: Վերջինիս ստեղծմանն ակտիվորեն միացել է նաեւ Ամերիա բանկը՝ աջակցելով վերանորոգման եւ մասնակի կահավորման հարցում: Բացման օրը կնքվեց հուշագիրը, որի շրջանակում ՀԱԱՀ-ն եւ Ամերիաբանկը հետագայում, ակտիվորեն համագործակցելով, իրականացնելու են ուսանողներին հաջողությանը նպաստող բազմապիսի միջոցառումներ: Սա ՀԱԱՀ մասնավոր եւ պետական սեկտորների համագործակցության լավագույն օրինակնե-



րից է: Ավարտված են պարենամթերքի մշակման դեմո-լաբի նորոգման աշխատանքները, 4 լաբորատորիաներից մեկի սարքավորումները արդեն տեղակայված են, իսկ մյուս երեքինը գտնվում են գնման փուլում: Դեմո-լաբի աշխատանքները կմեկնարկեն 2024 թ. գարնանը:

**«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՁՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» (SOAA)**

Ծրագրի կրթական եւ փորձացուցադրական բաղադրիչների իրականացման ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ հանդիպում-քննարկումներ, միջոցառումներ դասախոսների եւ ապագա մագիստրանտների հետ:



Էրազմուս+ ՀԳ1-ի եւ SOAA ծրագրի շրջանակում, 2023 թ. մայիս-հունիս ամիսներին տեղի է ունեցել Օրգանական գյուղատնտեսություն մագիստրոսական (այսուհետ՝ ՕԳՄ) ծրագրում դասավանդող 5 դասախոսների եւ ծրագրի համակարգողի

փորձի փոխանակմանը եւ ծրագրային աշխատանքների իրականացմանն ուղղված այցը Վիեննայի BOKU համալսարան եւ ծրագրի գործընկեր կառույցներ:

Նկարահանվել է տեսահոլովակ ՕԳՄ ծրագրի վերաբերյալ, իրականացվել է գովազդային արշավ Ֆեյսբուք սոցիալական հարթակում:

Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է BOKU համալսարանի գործընկերների՝ Միլենա Կլիմեկի եւ պրոֆեսոր Ռայնհարդ Նոյգզվանդների այցը ՀԱԱՀ, որն ուղեկցվել է ռեկտորի, պրոռեկտորի, դեկանի, ամբիոնի վարիչների եւ ՕԳՄ ծրագրում դասավանդող դասախոսների հետ մի շարք աշխատանքային հանդիպում-քննարկումներով՝ Ակունքի օրգանական տնտեսության գործունեության արդյունավետության բարձրացման, շահակիցների եւ մագիստրանտների ակտիվ կապի ստեղծման վերաբերյալ:

Պրոֆեսոր Նոյգզվանդները անցկացրել է դասախոսություններ եւ դաշտային փորձերի տեղաձեւման հետ կապված գործնական դասընթաց ՕԳՄ ծրագրի մագիստրանտների համար:

Օրգանական գյուղատնտեսության «Ակունք» ուսումնափորձական կենտրոնում (այսուհետ՝ ՈՒՓԿ) կազմվել է տնտեսության զարգացման ճանապարհային քարտեզ, ստեղծվել են բարձրացված մարգեր տարատեսակ մշակաբույսերի աճեցման համար:

«Ակունք» ՈՒՓԿ-ն 2023-ին հաղթահարել է անցումային փուլը եւ ստացել օրգանական հավաստագիր: Այստեղ աճեցված օրգանական խնձորները վերամշակվել են «Անթառամ» ԱԿ-ում, արտադրվել են օրգանական խնձորի չիպսեր, որոնց համար ստեղծվել է օրգանական մակնշմամբ հատուկ փաթեթվածք:

BOKU համալսարանի ասպիրանտուրայում եւ մագիստրատուրայում ուսումը շարունակելու համար ընտրվել է մեկական թեկնածու, որոնք արդեն սկսել են դիմումների նախապատրաստման գործընթացը:

Պլանավորվում է ՕԳՄ ծրագրի մագիստրանտների ատենախոսությունների շրջանակում դաշտային փորձերն իրականացնել «Ակունք» ՈՒՓԿ-ում, արդեն ընտրվել եւ հաստատվել են համապատասխան թեմաները:

**«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՀԱԳԵՑԱԾ ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՒ ՀԱԱՀ-Ի ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ»** ծրագիրը ավարտվել է 2023 թ. դեկտեմբերին:

Ծրագրի գործընկերն էր ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը: Ծրագրի հիմնական բաղադրիչները երեքն էին.

1. Բարձր տեխնոլոգիաներով հագեցած կրթական ենթակառուցվածքի ստեղծման միջոցով նպաստել ՀՀ Սյունիքի մարզում գյուղատնտեսական որակյալ բարձրագույն կրթություն տրամադրելուն եւ կիրառական հետազոտություն իրականացնելուն: Այս բաղադրիչի շրջանակում ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում ստեղծվել է հողի անալիզի ժամանակակից լաբորատորիա, կառուցվել է 303 մ<sup>2</sup> ջերմատուն սածիլների աճեցման համար եւ հիմնվել 5000 մ<sup>2</sup> ինտենսիվ այգի: Ենթակառուցվածքի ստեղծմանը զուգահեռ, նշված բաղադրիչի շրջանակում վերապատրաստվել են ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի մասնագետները՝ ժամանակակից մեթոդներով եւ մոտեցումներով կրթություն եւ ծառայություններ առաջարկելու համար:
2. ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղը վերածվել է հարթակի, որտեղ գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածները, մասնավոր հատվածի ներկայացուցիչները եւ ուսանողները համատեղ մշակել են գյուղատնտեսության վարման մարտահրավերները հաղթահարելու լուծումներ եւ հարակայուն գյուղատնտեսության գործելակերպեր: Այդ նպատակով Սիսիանի մասնաճյուղի մասնագետները եւ ուսանողները մշակել եւ տարբեր ցուցադրական ու խորհրդատվական միջոցառումների շրջանակներում ոլորտի դերակատարներին են ներկայացրել նոր տեխնոլոգիաներ եւ լուծումներ:
3. ՀԱԱՀ մասնագետ-փորձագետները խորհրդատվական այցերի եւ դասընթացների միջոցով շարունակում են աջակցել ՀԱԱՀ տարբեր մարզերում ՄԱԿ-ՊԸԾ-ի շահառուներին, որոնք ներգրավված են «Դպրոցական սնունդ» ծրագրում: Բացի այդ, ՀԱԱՀ մասնագետներն ակտիվորեն նպաստում են Սյունիքի մարզում հատիկաընդեղենի արտադրությամբ եւ վերամշակմամբ զբաղվող Խնձորեսկի կոոպերատիվի ստեղծմանը եւ կայացմանը:

**«ՀՀ-ՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ»** թեմայով հետազոտություն-ծրագիրը մեկնարկել է 2023 թ. հունվարին, ավարտվել 2023 թ. դեկտեմբերին:

Ծրագրի գործընկերներն էին՝ «Բնական պաշարների կառավարում եւ էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ECOserve) ծրագիրը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ/GIZ):

Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանում միաժամանակ պարենային, կերային, տեխնիկական եւ էներգետիկ նպատակներով տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության իրագործելիությունը՝ ներառյալ տնտեսական արդյունավետությունն ու նպատակահարմարությունը: Խնդիր է դրվել.

- բացահայտել գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությունից գոյացած թափոնների, մնացորդների եւ այլ կենսազանգվածի՝ որպես այլընտրանքային կենսաէներգիայի ստացման եւ արդյունավետ օգտագործման հնարավորությունները,
- առաջարկել հարմարվող եւ կլիմայի նկատմամբ կայուն մշակաբույսեր, որոնք նպատակահարմար են պինդ եւ հեղուկ կենսավառելիքի արտադրության համար,
- նպաստել Հայաստանում որպես էկոլոգիապես մաքուր վառելիքի՝ կենսաէներգիայի արտադրության ծավալների ավելացմանը եւ համապատասխան ոլորտների զարգացմանը:

**«ՀԱԱՀ ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՐՋԱՆԱՁԵԻ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄ»** ծրագրի գործընկերներն էին «Բնական պաշարների կառավարում եւ էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ECOserve) ծրագիրը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ) (GIZ):

Ծրագրի նպատակն էր Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային համակարգի լրիվ շրջափուլային մոդելի ներդրում, որը բաղկացած է արոտավայրերի արդյունավետ կառավարումից, դաշտավարական եւ հիդրոպոնիկ կերարտադրությունից, անասնակերի սիլոսացումից մինչեւ գոմաղբի մշակման տարատեսակ տեխնոլոգիաների կիրառմամբ՝ օրգանական ծագման պարարտանյութ ստանալու փուլերից: Միաժամանակ, ծրագիրը նպատակ ուներ նպաստել ՀԱԱՀ-ում գործնական գիտելիքի փոխանցման կարողությունների զարգացմանը՝ օրգանական ծագման պարարտանյութերի մոդելային արտադրության, արոտավայրերի կայուն կառավարման, կերարտադրության տեխնոլոգիաների եւ կանաչ կերի հիդրոպոնիկ արտադրության ոլորտներում: Ծրագիրը ավարտվել է 2023 թ. դեկտեմբերին:

## **ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Ինչպես նախորդ մի քանի տարիները, 2023 թ. եւս Հայաստանի ազգային ագրարային համալսարանում նշանավորվեց ինչպես մայր բուհի, այնպես էլ մասնաճյուղերի ենթակառուցյունների հզորացմամբ՝ նորարարական ուսումնական, հետազոտական ու արտադրական ուղղվածության ուսումնաստանողական լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման ու վերակառուցման աշխատանքներով:

Տարեսկզբին ՀԱԱՀ **Վանաձորի մասնաճյուղում բացվեցին մսամթերքի, կաթնամթերքի եւ պահածոների ու սննդախտանյութերի վերամշակման ուսումնական 3 լաբորատորիաները:** Արդիական եւ գերարդիական տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիաները ստեղծվել են «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի» (Armenia Workforce Development Activity) շրջանակում գլխավոր գործընկեր՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՕՖ-ի եւ CIVITTA Հայաստանի համագործակցությամբ եւ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի Խելացի գյուղատնտեսության կենտրոնում հանդիսավորությամբ բացվեց **Մեքենասարքավորումների ուսումնական եւ վերապատրաստման կայանը**: Այն առաջին ենթակառուցյցն է, որով ընթացք տրվեց Խելացի գյուղատնտեսական կենտրոնի ստեղծման աշխատանքներին: Ոչ միայն Սիսիանի մասնաճյուղի, այլև ամբողջ Սյունիքի մարզի համար գյուղատնտեսության արտադրողականության խթանման տեսանկյունից կարելի է նշանակություն ունեցող այս կայանը կառուցվել է Ագրարային համալսարանի եւ Ճապոնիայի դեսպանության համագործակցության շնորհիվ, 2021 թ. մեկնարկած «Մարդկային անվտանգության Grassroots» ծրագրի շրջանակում: Այն ծառայելու է ուսանողների գործնական հմտությունների զարգացման եւ տարածաշրջանում գործող մեխանիզատորների վերապատրաստման, համայնքի ու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին: 1,5 հա հողատարածքի վրա կառուցված 203 քմ ընդհանուր մակերեսով շինությունն ունի գյուղտեխնիկայի նորոգման, տեխնիկական սպասարկման, կայանման, պահեստամասերի պահպանման հնարավորություններ, գրասենյակային հատված: Դեսպանությունը հոգացել է նաեւ տեխնիկայի եւ գյուղգործիքների ձեռք բերման ծախսերը:

Հայ օգնության ֆոնդի ֆինանսավորմամբ Խելացի գյուղատնտեսության կենտրոնում կառուցվել է նաեւ **խելացի անասնաշենք**, իսկ Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ 0,5 հա հողատարածքի վրա հիմնվել է **ինտենսիվ այգի**, կառուցվել է Խելացի գյուղատնտեսության կենտրոնի առաջին հիդրոպոնիկ **ջերմատունը** (երկրորդ ջերմատան կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՕՖ-ի ֆինանսավորմամբ): Իսկ Ուսանողների միջազգային օրը Սիսիանի մասնաճյուղում նշանավորվեց **Ֆիզիկայի լաբորատորիայի** բացմամբ: Այն ձեւավորվել է անհրաժեշտ սարքավորումներով հագեցվել է «Իմ քայլը» հիմնադրամի աջակցությամբ:

ՀԱԱՀ Բալահովտի ուսումնափորձարարական տնտեսությունում «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովտի տնտեսությունում» նախագծի շրջանակում հիմնվել են ընտրված մշակաբույսերի համար օրգանական ծագման պարարտանյութի՝ **գոմաղբից պարարտանյութ/կենսազանգված (կենսահումուս) ստացման եւ սիլոսի արտադրության փորձացուցադրական մոդելներ, ինչպես նաեւ հիդրոպոնիկ կերի արտադրամաս**: Համալսարանն այս նախագիծն իրականացնում է Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ/ԳՄՀԸ) «ԷԿՈսերվ» ծրագրի աջակցությամբ: Ստեղծված մոդելներն առանցքային դեր ունեն ինչպես օրգանական ծագման պարարտանյութերի մոդելային արտադրության ոլորտի ընթացիկ եւ հետագա զարգացումներում, այնպես էլ կրթական տեսանկյունից՝ ուսանողներին գործնական գիտելիքներ ու մշակույթ փոխանցելու, ինչպես նաեւ ստեղծված մոդելները մարզերում տարածելու առումով:

Բալահովտում հիմնվել է կանաչ կերի ուսումնական լաբորատորիա: Ավարտվել է Խելացի անասնաշենքի կառուցումը, ներդրվել կշռման եւ հաշվառման նորարարական համակարգ:

2023-ի նոյեմբերին ՀԱԱՀ գլխավոր մասնաշենքում հանդիսավորությամբ բացվեց Ագրարային համալսարանում վերջին հինգ տարիների ընթացքում ստեղծված 55-րդ նորարարական ենթակառուցյցը՝ **«Բի-Օն» կենսատեխնոլոգիական ինկուբատոր բաց լաբորատորիան**: Այն Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնա-

դրամի (FAST) եւ ՀԱԱՀ-ի համատեղ նախագիծն է, որն իրականացվել է ՀՀ կառավարության եւ Gateway Armenia ՀԿ-ի աջակցությամբ: Բի-Օն-ի տեսլականն է՝ Հայաստանը փոխակերպել տարածաշրջանային կենսատեխնոլոգիական հանգույցի՝ ստեղծելով կենսատեխնոլոգիական հետազոտությունների եւ նորարարության ոլորտի հայաստանյան տաղանդների համայնք եւ այն կապակցելով ոլորտի համաշխարհային կենտրոնների հետ: Ձեռաչափով եզակի, գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիան առաջարկում է համատեղ աշխատանքի լաբորատոր տարածքներ կենսատեխնոլոգիական ոլորտի գիտնականների, գիտահետազոտական խմբերի եւ ստարտափների, ինչպես նաեւ նորարարական գաղափարներ ունեցող ասպիրանտների եւ երիտասարդ հետազոտողների համար, որոնք ցանկանում են առելուրայնացնել իրենց ստեղծած գիտական արդյունքները:

ՀԱԱՀ գլխավոր մասնաշենքում Էրազմուս+ SMARTI նախագծի շրջանակում հիմնադրվել է «Անգլերենը որպես դասավանդման միջոց» կենտրոն:

Բարերարների ֆինանսական աջակցությամբ բարելավվել-ընդարձակվել է Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիայի տարածքը, այն համալրվել է նորագույն սարքավորումներով, ստեղծվել է կից լսարան:

Ստեղծվել Անտառագիտության եւ ագրոէկոլոգիայի լաբորատորիա՝ հագեցած անտառագիտական, էկոլոգիական ժամանակակից գործիքներով ու նորագույն սարք-սարքավորումներով, թեմատիկ ուսումնաօժանդակ, փորձացուցադրական նյութերով:

Ավարտվել է սննդի (կաթ, միս, ձուկ եւ պահածո) լաբորատորիաների շինվերանորոգման աշխատանքները ՀԱԱՀ գլխավոր մասնաշենքում, ընթացքի մեջ է գույքի ու սարքավորումների ձեռքբերումն ու կահավորումը, որն իրականացվում է «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի» ֆինանսական աջակցությամբ:

ՀԱԱՀ երկրորդ մասնաշենքում մեկնարկել են **Գյուղատնտեսական ոռոգտաշինության եւ մեխատրոնիկայի («Ագրոբոտ»)** գերազանցության կենտրոնի շինվերանորոգման աշխատանքները: Նախադեպը չունեցող այս նախագիծն ագրարային ճարտարագիտության ոլորտի կրթության արդիականացման, գիտության զարգացման եւ այսօրվա աշխատաշուկայի համար մրցունակ կադրերի պատրաստման նպատակ է հետապնդում: Այն հնարավոր է դարձել Զարգացման եւ վերակառուցման միջազգային բանկի եւ ՀՀ միջեւ կնքված վարկային համաձայնագրով իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շնորհիվ, որի շրջանակում անցկացված դրամաշնորհային մրցույթում հաղթող է ճանաչվել ՀԱԱՀ-ը, իսկ շինվերանորոգման աշխատանքները հովանավորում են բոստոնահայ բարերարներ Զուդիթ Սարյանն ու Վիկտոր Զառուգյանը: Նախագծի շրջանակում կստեղծվի «Ագրոբոտ» լաբորատորիա, որը կգբաղվի գյուղատնտեսական ոռոգտաշինությամբ, կմշակվեն ագրոբոտներ, կիրականացվեն գիտահետազոտական աշխատանքներ. այդպիսով երկրում առաջին գյուղատնտեսական ոռոգտների արտադրությունը կկազմակերպվի ՀԱԱՀ-ում: Կենտրոնում պարբերաբար կիրականացվեն ոռոգտաշինության ոլորտի մասնագետների եւ ֆերմերների վերապատրաստումներ, կմատուցվեն խորհրդատվական ծառայություններ:

2023-ին ՀԱԱՀ գլխավոր մասնաշենքը համալրվեց ուսանողների փափուկ հմտությունների զարգացմանը եւ հաջողությունների խթանմանը նպաստող, ժամանակակից ու հարմարավետ կենտրոններով: «Փափուկ հմտությունների զարգացումը

որպես զբաղվածության հիմնական գործիք» նախագծի շրջանակում, որը համաֆինանսավորել են Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի եւ Սլովակիայի կառավարությունները՝ Վիշեգրադի միջազգային հիմնադրամի դրամաշնորհների միջոցով, ստեղծվել է **Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն**, որտեղ ՀԱԱՀ ուսանողներն ու գյուղատնտեսության ոլորտում գործող մասնագետները կստանան աշխատաշուկայում հաջողելու համար կարելի փափուկ հմտություններ:

2023-ի ավարտը նշանավորվեց Ուսանողների հաջողության կենտրոնի եւ Գիտելիքի նորարարական հարթի պաշտոնական բացումով: Վերջիններս հիմնվել են ԱՄՆ ՄԶԳ-ից ֆինանսավորվող «Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի» շրջանակում՝ «Ամերիաբանկ»-ի աջակցությամբ:

Այս կենտրոններում կկազմակերպվեն մասնագիտական զարգացման եւ ճկուն հմտությունների թեմաներով դասընթացներ, խորհրդաժողովներ, ուսանողների վերապատրաստումներ՝ նպաստելով ՀԱԱՀ ներկա եւ ապագա ուսանողների անձնական եւ մասնագիտական զարգացմանը, որն Ագրարային համալսարանի ղեկավարության կարելիության նպատակն է, եւ այդ նպատակի իրագործմանն են ծառայում վերջին 5 տարիներին ստեղծված շուրջ 60 նորարարական լաբորատորիաները, կրթական ու փորձարարական կենտրոններն ու մյուս ենթակառուցվածքները:

## **ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

«Բալահովիտ» ուսումնափորձական տնտեսության (այսուհետ՝ նաեւ ՈՒՓՏ) հիմնական նպատակը ուսանողների համար որպես գիտական, ուսումնական եւ գործնական-արտադրական բազա ծառայելն է:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ն «Ելիջա» հանդամասում ներկայումս ունի 1075,8 հա հողատարածք:

2023 թ. հունվարի 1-ի դրությամբ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի կաթնասնամանապահական ֆերմայի խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կազմել է **38 գլուխ**, իսկ 31.12.2023 թ. դրությամբ այն հասել է **64 գլխի (ավելացել է շուրջ 70 %-ով)**:

Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է **72 գլուխ**, որից **26 գլուխը**՝ ֆրանսիական Բլանշ ցեղի կենդանիներ, իսկ 31.12.2023 թ. դրությամբ այդ թվերը համապատասխանաբար հասել են **84-ի (գլխաքանակն աճել է շուրջ 17 %-ով) եւ 46-ի (աճել է շուրջ 77 %-ով)**:

2023-ին արտադրվել է 52,76 տ կաթ եւ 192 կգ բուրդ:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի «Հմտությունների եւ գիտելիքի զարգացում» ծրագրի շրջանակում շահագործման հանձնված Կաթնամթերքի վարպետաց դպրոցում փորձուսուցման միջոցով ՀԱԱՀ-ի եւ գործընկեր համալսարանների ուսանողներին փոխանցվում են արդիական գործնական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

Բալահովիտի ՈՒՓՏ-ում ավարտին հասցված «խելացի» անասնաշենքի կառուցման աշխատանքներին համընթաց հունվար ամսին ձեռք են բերվել բարձրմթերատու երոպական տավարի ֆլեկվի եւ ջերսի ցեղերի հինգ գլուխ կով: Սա նպաստել է տնտեսությունում արտադրական փորձուսուցում անցնող ուսանողներին աշխատա-

շուկայում պահանջված ամենաարդիական գործնական մասնագիտական գիտելիքներ եւ հմտություններ փոխանցելուն:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GAZ/ԳՄՀԸ) ECOserve Հայաստան ծրագրի աջակցությամբ «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագծի շրջանակում ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում գործող ՈՒՓՏ-ում հիմնվել է գոմաղբից պարարտանյութ/կենսազանգված (կենսահումուս) ստանալու փորձացուցադրական մոդելներ:

1) միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր եւ հեղուկ կենսազանգվածի ստացման համար,

2) պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով՝ չոր պարարտանյութի ստացման համար,

3) որդակոմպոստացման (կարմիր կոլիֆորնիական որդեր) տեխնոլոգիայի կիրառմամբ՝ չոր պարարտանյութի ստացման համար:

ՈՒՓՏ-ում ներդրվել է նաեւ հիդրոպոնիկ մեթոդով կանաչ կերի արտադրություն ԱԷՈՆ սարքի միջոցով: Ստացված զանգվածն օգտագործվում է տնտեսության կենդանիների կերակրման համար, որի շնորհիվ ավելացել է կենդանիների մթերատվությունը:

Վերը նշված ծրագրի շրջանակում վերանորոգվել է նաեւ սիլոսի հորը, եւ նախատեսվում է 2024 թ. գարնանը կազմակերպել ցանքաշրջանառություն սիլոսի արտադրության նպատակով:

## **ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունում (այսուհետ՝ նաեւ ՈՒՓՏ) շարունակվել են մոտ 13,5 հա բազմամյա տնկարկների եւ մոտ 1,5 հա բանջարեղենի փորձարարական մշակությունը՝ կիրառելով նաեւ կարկտապաշտպան ցանցեր եւ կաթիլային ոռոգում, իսկ 2021 թ. հիմնված՝ չորս կորիզավոր պտղատեսակներով ինտենսիվ կոլեկցիոն մայրուտային այգուց ստացվել է առաջին բերքը:

2023 թ. ընթացքում «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ի 12 հա խաղողի այգում եւ Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնում փորձարարական աշխատանքներ կատարելու գործընթացներում ներգրավվել են նաեւ այլ երկրներում խաղողագործության եւ գինեգործության փորձ ունեցող մասնագետներ:

Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը հանդես է գալիս որպես ուսումնափորձարարական հարթակ, որտեղ ՀԱԱՀ ուսանողները, շրջանավարտները փորձում են ստեղծել գինիների նոր տեսակներ եւ մրցակցել շուկայում:

2023 թվականին շարունակվել է «Սերունդ» կարմիր անապակ եւ «Սերունդ» հնացված կարմիր անապակ գինիների վաճառքը եւ առաջխաղացումը տեղական շուկայում: Աշխատանքներ են կատարվել վաճառքի ծավալները ավելացնելու ուղղությամբ:


# ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Օրգանական գյուղատնտեսության հզորացում Հայաստանում. մասնակցային բարձրագույն կրթություն եւ գիտելիքի փոխանակում հանուն զարգացման» (SOAA) միջազգային ծրագրի շրջանակում «Ակունք» օրգանական գյուղատնտեսության ՈՒՓԿ-ի զարգացման եւ դրա՝ ուսանողական ֆերմայի փոխակերպման աշխատանքներ են կատարվել:

Մասնավորապես, 2023 թ. ՈՒՓԿ-ում կազմակերպվել են տեղական եւ միջազգային մի շարք հանդիպում – քննարկումներ, դասախոսական կազմի եւ Օրգանական գյուղատնտեսություն կրթական ծրագրի մագիստրանտների վերապատրաստումներ:

Տնտեսությունում իրականացվել է 0,75 հա կորնզանի ցանք՝ հողի հատկությունները բարելավելու նպատակով, ձեռք են բերվել պարարտացման եւ պայքարի միջոցառումների համար անհրաժեշտ նյութեր, իրականացվել է շենքային պայմանների եւ տարածքի բարեկարգում, մասնավորապես՝ նորոգվել է ջրահեռացման համակարգը, փոքր ջերմատունը, ձեռք է բերվել ջրի նոր պոմպ՝ ջրավազանից ոռոգում կազմակերպելու համար, անցկացվել է ոռոգման կաթիլային համակարգ ազնվամորու եւ ծիրանի ինտենսիվ այգիներում, իսկ ծիրանի տնկիների թիվը ավելացել է եւս 100-ով: Ընդհանուր առմամբ վեգետացիայի ընթացքում հավաքվել է մոտ 2 g ազնվամորու եւ 8 g խնձորի բերք:

Ս Ե Ր Տ Ի Ծ Ի Կ Ս  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԼԵԻ ՉԱՄԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
2023-772 N EG.A-251-001



Այս սերտիֆիկատը վկայում է, որ գրծծելով **օրգանական հողագործության** դրոշում,  
(օրգանական կրթություն)  
**Չափադասակ Ազգային Արտադրանքի Չամբարում, «Ակունք» ՈՒՓՏ**  
**Ք. Երևան, Տեղակ 74**  
(տնտեսական տարերի հաշվառման կամ ցուցիչի վրա, սակայն սրբանունը անփոփոխելի)

Կողմից 2023թ. արտադրված՝


**Նոտասուր ապի՝ 1.4 հա, հաստապտուղներ՝ 0.6 հա, բեռնատուն՝ 0.3 հա, ստույգ միջշառանակի  
տնտեսությունում – մոտ 1.2 հա  
տնտեսական տարածք՝ 4.8 հա**  
(հանրապետական հողերի օգտագործման կոդը)

**Խնձոր 800գ/տ, Ազնվամորու 200գ/տ**  
(տնտեսական տարի)

ճանաչվել է **օրգանական** արտադրանք:  
(օրգանական (անցանցին չըզակ օրգանական))

Արտադրողի անունը՝ **ՉԵՄԲԱՐՈՒՄ**  
Անվանումը՝ **ՉԵՄԲԱՐՈՒՄ**  
Չափադասակի օրգանական իրականացման վայրը՝ **33 ք. Երևան, 0002, Արամի 80**  
հավաքման օրը/վայրը/համարը՝ **07.10.2023, 01.00**  
Տարվա ընթացքում կատարվել է **1** դիտարկում **11.08.2023թ.**  
(դիտարկման օրը)

**Չափադասակի օրգանական բնույթի օրգանական զտ արտադրանքի անունն է՝ «Ակունք»**  
(զտ արտադրանքի անունը/կրթիչը կրթական տնտեսական կանոնադրույթի կամ արտադրողի անունը)  
**«Չափադասակի օրգանական բնույթի օրգանական միջոցառման անունն է՝ «Չափադասակի օրգանական իրականացում»**  
(օրգանական բնույթի օրգանական բնույթի օրգանական միջոցառման անունը/կրթիչը կրթական տնտեսական կանոնադրույթի կամ արտադրողի անունը)

Տարբերակ՝ 

Կ.Տ. Տրված է՝ 23.10.2023թ.

Ընդ մեջ է վիճել. 31.12.2024թ.

թյան ՈՒՓԿ-ում 2023 թվականին արտադրված խնձորն ու ազնվամորին «ԷկոԳլոբ» ՍՊԸ-ն ճանաչել է օրգանական արտադրանք, որի տարբերանշանը ներառվել է տվյալ տարվա խնձորի բերքից պատրաստված «Խնձորի օրգանական չիպսերի» փաթեթավորման վրա: Ամբողջ արտադրանքն օգտագործվել է բարեգործական նպատակներով:



## ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Հաշվետու տարում ՀԱԱՀ ՈԳԱ կենտրոնը, տարեկան գործառնական պլանի համաձայն, աշխատանքներ է իրականացրել մի քանի ուղղություններով:

### *Ռազմավարական կառավարում*

ՈԳԱ կենտրոնը մասնակցել է բուհի տարեկան գործառնական պլանի մշակմանը: Ստորաբաժանումներից հավաքել է 2023 թ. գործառնական պլանները եւ դրանք գնահատել բուհի ռազմավարությանը համապատասխանության տեսանկյունից:

ՈԳԱ կենտրոնն իրականացրել է ստորաբաժանումների պլանների իրականացման մշտադիտարկում՝ պարբերաբար հաշվետվություններ հավաքել ստորաբաժանումներից, կատարողականի արդյունքների վերլուծությունը ներկայացրել ռեկտորատի եւ գիտխորհրդի նիստերին:

ՈԳԱ կենտրոնը կազմել, ստորաբաժանումներում շրջանառել եւ Որակի ապահովման ազգային կենտրոն է ներկայացրել «Փորձագիտական զեկուցում նշված թերությունների վերացման 2021-2025 թթ. գործողությունների ծրագրի իրագործման» միջանկյալ զեկույցը:

### *Մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի ապահովման հետ կապված աշխատանքներ*

ՈԳԱ կենտրոնի Որակի կառավարման բաժինը մշտապես խորհրդատվություն է ապահովել տարբեր ՄԿԾ-ների մշակման կամ վերանայման համար, հարդյունս որի ՄԿԾ պատասխանատուների ղեկավարությամբ իրականացվել է ՄԿԾ փաթեթների մշակում: ՈԳԱ կենտրոնի գնահատման է ներկայացվել 15 ՄԿԾ, որից հաստատվել է 2-ը, եւս 4-ը դրական են գնահատվել, վերամշակման է վերադարձվել 9 ՄԿԾ: ՈԳԱ կենտրոնը մշակված ձեռնարկով գնահատել եւ մեթոդխորհրդի հաստատման է ներկայացրել 2 ՄԿԾ:

ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկման շրջանակում ՈԳԱ կենտրոնը մշակված նոր գործիքներով իրականացրել է դասալսումների եւ ուսանողների դասերին հաճախելիության գնահատում:

ՈԳԱ կենտրոնը ակադեմիական ազնվության սկզբունքների գնահատման համար համեմատել է բոլոր ֆակուլտետների ներկայացրած մոտ 1500 դիպլոմային աշխատանքների թեմաներ, թեմաների նմանություն ունեցող մոտ 40 դիպլոմային աշխատանք ստուգվել է գրագողության առկայության տեսանկյունից: Հայտնաբերված թերությունների մասին զեկույցվել է բուհի պրոռեկտորներին:

### *Որակի ապահովման մեխանիզմների եւ գործիքների վերանայում, ՈԳԱ կենտրոնի իրականացրած քանակական եւ որակական հետազոտություններ*

2023 թ. ավարտվել է որակի ապահովման նոր ձեռնարկի մշակումը: Շարունակվել է որակի ապահովման ցանցային համակարգի զարգացումը: «Որակի ապահովման ներքին եւ արտաքին համակարգի մշակում եւ ներդնում» թեմայով երկօրյա վերապատրաստում է անցկացվել տարբեր ամբիոնների աշխատակիցների համար (վերապատրաստվել է 17 աշխատակից): 10 ՄԿԾ-ների մշակման ուղղությամբ խորհրդատվություն է ապահովվել: Իրականացվել է 8 ՄԿԾ-ների հենանիշավորման (բենչմարկինգի) գնահատում:

Իրականացվել է որակի ապահովման մի շարք գործիքների լավարկում: Օրինակ, վերանայվել է դասալսումների մշտադիտարկման ձեռնարկը: Նոր գործիքը

կիրառվել է բակալավրիատի եւ ՀԱԱՀ քոլեջի դասալսումների ընթացքում: Գործիքը դեռեւս չի կիրառվել մագիստրատուրայում:

ՌԾ ԳԱՅ-երի հիման վրա ստեղծվել է տվյալների շտեմարան:

ՈԳԱ կենտրոնը համակարգել է միջին մասնագիտական կրթության մոդուլային հենքով 20 ուսումնական պլանների ներդրման աշխատանքները: ՈԳԱ կենտրոնի աշխատակիցները իրականացրել են քոլեջի քննությունների գործընթացի մշտադիտարկումը, մասնակցել քոլեջի 2023-2028 թթ. զարգացման ծրագրի մշակմանը:

Կրթական այլ գործընթացների հետ կապված գործառույթներ.

1. Լիցենզիա ստանալու կամ լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար ԿԳՄՄՆ են ուղարկվել հետեւյալ ՄԿԾ-ների փաթեթները.

- «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին միացման հետ կապված մասնագիտությունների փաստաթղթերը,
- «Օրգանական գյուղատնտեսություն» կրթական ծրագրի լիցենզիայով սահմանված ուսուցման տեւողության կրճատման նպատակով կազմված փաթեթը,
- «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա» եւ «Ագրոբիզնես եւ ֆինանսներ» մասնագիտական կրթական ծրագրերի գծով հեռակա ուսուցման համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակի ավելացման վերաբերյալ փաստաթղթերը:

2. Աշխատանքներ են կատարվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թ. հոկտեմբերի 27-ի N 39-Ն հրամանով սահմանված «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման եւ գործարկման կարգի» հիման վրա Սյունիքի եւ Տավուշի մարզերի դպրոցներում պիլոտային կրեդիտային համակարգ ներդնելու համար մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է ԿԶՆԱԿ. աշխատանք է կատարվել ՀԱԱՀ համապատասխան ամբիոնների հետ եւ ԿԶՆԱԿ ու մարզերի ավագ դպրոցներին են ներկայացվել «Քիմիա», «Կենսաբանություն», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» առարկաների հանրակրթության ծրագրով նախատեսված, բայց ՀԱԱՀ մասնագիտությունների համար հատկապես կարեւոր թեմաների ցանկը, դրանց հատկացվող անհրաժեշտ ժամաքանակը, աշակերտների գնահատման նվազագույն շեմը:

3. ՈԳԱ կենտրոնի աշխատակիցները աշխատանքներ են իրականացրել «QS ranking» համակարգի ուսումնասիրության ուղղությամբ:

## ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտահետազոտական ոլորտում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2023 թ. գործունեությունն իրականացվել է նախորդ երկու տարիների կառուցվածքային բարեփոխումների հիմքի վրա:

ՀՀ պետական բյուջեից գիտական, գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման գումարը 2023 թ. զգալիորեն՝ 20,4 %-ով ավելացել է եւ կազմել 404,8 մլն դրամ: Ֆինանսավորման նման աճը գլխավորապես պայմանավորված է հաշվետու տարում գիտական աշխատողների վարձատրության դրույքաչափերի բարձրացմամբ: Ամբողջ ծավալով իրականացվել է գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 8 ծրագիր: Դրանք իրականացվել են 3 գիտական կենտրոն մասնաճյուղերի, 2 գիտահետազոտական ինստիտուտների եւ 3 հետազոտական կենտրոնների միջոցով:

Հաշվետու տարում շարունակվել է 4 միջազգային գիտական թեմա: 2023 թ. համալսարանը շարունակել է 2020 թ. շահած դրամաշնորհային 1 եւ 2021 թ. շահած 14 ծրագրերը (ընդհանուր բյուջեն 2020-2024 թթ. 429,3 մլն դրամ): Հաշվետու ժամանակահատվածում նշված ծրագրերից 7-ը հաջողությամբ ավարտվել են, 8 ծրագիր շարունակվելու է 2024 թվականին:

2023 թ. իրականացված միջազգային գիտական ծրագրերից են՝

**«Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների քարտեզագրում»** ծրագրի շրջանակում ոչ միայն իրականացվեցին գիտահետազոտական աշխատանքներ Հայաստանի համար կարեւորագույն գիտական ուղղություններից մեկի՝ զոոնոզների կանխարգելման ուղղությամբ, այլեւ պլանավորվեցին համագործակցության նոր աշխատանքներ Վրաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջատար գիտահետազոտական կենտրոնների հետ:

2023 թ. բարեհաջող ավարտվեց **«Ուղղորդված պրոբիոտիկներ ակվակուլտուրաների համար»** գիտահետազոտական ծրագիրը, որն իրականացվում էր Ռուսաստանի Դաշնության եւ Ուզբեկստանի գիտական կառույցների հետ: Որպես եռակողմ ուսումնասիրությունների արդյունք՝ քննարկվեցին համագործակց երկրների միկրոօրգանիզմների բանկերի պրոբիոտիկների կենսաանվտանգության հարցերը, գնահատվեցին հայկական, ուզբեկական եւ ռուսական գիտական խմբերի պրոբիոտիկ հավաքածուների շտամների անտագոնիստական եւ հակաօքսիդանտ ակտիվությունը, հակամուտագեն հատկությունները: Ստեղծվեց ձկների նպատակային պրոբիոտիկների համատեղ բանկ: Հետազոտությունները հաստատեցին «հայկական» *Lactiplantibacillus plantarum* zpz շտամի ցայտուն արտահայտվող հակաօքսիդանտային ակտիվությունը, որը նույնիսկ ավելի բարձր է, քան ստուգիչ հակաօքսիդանտ ալֆա-տոկոֆերոլինը:

2023 թ. շարունակվել են հետազոտությունները նաեւ ՀՀ գիտության կոմիտեի կողմից 2021 թ. վերջում հաստատված **«Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը»** առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմայի աշխատանքները: Թեման վերաբերում է կլիմայի գլոբալ տաքացման հիմնախնդրին՝ նպատակ ունենալով հետագա 3 տարիների ընթացքում մշակել ձկների եւ հավերի ջերմադիմացկունությունը բարձրացնող մոլեկուլային կենսաբանական մոտեցումներ: ԱՄՆ կոորդինատորի մասնակցությամբ Սեւանի իշխանի ենթատեսակների


հետազոտությունների միջոցով ցույց տրվեց, որ ջրային կենդանիների աղիքային բակտերիաների թաղանթային հատկությունները տարբերվում են ցամաքային կենդանիների համապատասխան հատկություններից, որը բացատրում է ձկների նպատակային պրոբիոտիկների բարձր արդյունավետությունը ձկնարտադրական գործընթացներում՝ ի համեմատություն աշխարհում լայնորեն օգտագործվող ոչ նպատակային պրոբիոտիկների: Մշակվեց հավերի ջերմադիմացկունության բարձրացմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների գործընթացների պլանը: 2023-ին իրականացված փորձերն արդեն հաստատեցին գիտահետազոտական թեմայի հիմնական վարկածի՝ մանրէաբանական գործոնի միջոցով գյուղատնտեսական կենդանիների ջերմադիմացկունության կարգավորման հնարավորության ճշտությունը:

Հաշվետու տարում շարունակվել է ՀՀ գիտության կոմիտեի 2022 թ. հայտարարած Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականներին ինտեգրման աջակցության ծրագրի» միջազգային մրցույթի արդյունքներով համալսարանի ներկայացուցչի՝ հաղթող ճանաչված «Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանի բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում» անվանումով թեման: Հաշվետու ժամանակահատվածում թեմայի շրջանակում իրականացվել է երկրի տարբեր գոտիներում էկոհամակարգերի ուսումնասիրություն, արշավախմբային հետազոտություններ, ինչպես նաեւ գարնանացան հացահատիկային մշակաբույսերի դաշտային ուսումնասիրություններ Սյունիքի մարզի Սիսիանի եւ Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջաններում: Ծրագիրը շարունակվում է:

Միջազգային ծրագրերի իրականացման շնորհիվ համալսարանը հնարավորություն է ունեցել համագործակցել ոչ միայն ԵԱՏՄ, ԱՊՀ եւ այլ հետխորհրդային երկրների, այլեւ զարգացած երկրների հետ:

Նախատեսված է 5 հայտերի նոր ներկայացում ՀՀ կրթության եւ գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Էռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» եւ «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» խորագրերով մրցույթներին:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է գիտական հրապարակումների ակտիվացման գործընթացը, առանձնակի զգացվում է դրանց որակական կազմի էական բարելավում: Հրապարակված գիտական աշխատանքների թիվը 2023 թ. կազմել է 263, որից 116-ը՝ արտերկրի գիտական պարբերականներում, այդ թվում՝ **63-ը բարձր վարկանիշ ունեցող** գիտատեղեկատվական շտեմարաններում (**Scopus & Web of Science**)՝ **2022 թ. 39 հրապարակման դիմաց**: Հրապարակված բարձր վարկանիշ ունեցող հոդվածները ըստ քառորդների բաշխված են հետեւյալ կերպ՝ Q1-8, Q2-16, Q3-25, Q4-5 եւ քառորդ չունեցող՝ 9:




**Գծապատկեր 4. 2020-2023 ՀԱԱՀ գիտական հրապարակումները**

2023 թ. շարունակվել է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խթանման գործընթացը: 2023 թ. հունվարի 30-ի ՀԱԱՀ գիտական խորհրդի նիստում լրամշակվել է համապատասխան կարգը, որով բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակված հոդվածների եւ մենագրությունների համար սահմանվել է անհամեմատ մեծ լրավճար եւ այն տարբերակվել է ըստ քառորդների: Բացի այդ՝ բարձր վարկանիշ ունեցող (Scopus եւ Web of Science) հրապարակումների համար պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ մեկտեղ լրավճարից օգտվել է նաև գիտական անձնակազմը:


2023 թ. ընդունվել է 123 գիտական աշխատանք, 135 հեղինակների վճարվելու է ընդամենը 8,7 մլն դրամ լրավճար, նախորդ տարվա 4,8 մլն դրամի դիմաց (2023 թ. առաջին կիսամյակում փաստացի վճարվել է 4,4 մլն դրամ): Հաշվետու ժամանակահատվածում պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գումարի մեծ լինելը պայմանավորված է ինչպես հրապարակումների թվի, այնպես էլ բարձր վարկանիշ ունեցող հրապարակումների թվի եւ որակական կազմի ավելացմամբ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթացի մասին պատկերացում է տալիս ստորեւ ներկայացվող գծապատկերը:



**Գծապատկեր 5.** Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման վերաբերյալ տեղեկություններ

Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթում Հայաստանի ազգային ազրարային համալսարանը 2023 թ. ընդհանուր առմամբ շահել է 50,7 մլն դրամի սարքավորումներ, նախորդ տարվա 14,4 մլն դրամի դիմաց:



**Գծապատկեր 6.** Գիտության ոլորտում նյութատեխնիկական բազայի արդիականացման ֆինանսական աջակցության ծավալները

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ 2023 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում իրականացվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների եւ 3 հետազոտական կենտրոնների միջոցով:

Հ/Հ	Գիտական կազմակերպություններ եւ ստորաբաժանումներ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը, հազ. դրամ	Հաստիքային միավորներ	Կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը	Հրատարակված հոդվածների թիվը (տեղական/արտերկրի)	Գիտաժողովներին մասնակցություն (տեղական/արտերկրի)
1	2	3	4	5	6	7
<b>ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ</b>						

1	<b>ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ</b>	<b>80,343.9</b>	<b>27.5</b>	<p>Կատարված աշխատանքներն ըստ ստորաբաժանումների</p> <p><b>Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացման բաժին</b></p> <p>Շարունակվել են կարտոֆիլի 9 մշակաձեւերի (սորտերի) բույսերի ռեգեներացման աշխատանքները, հաշվի առնելով դրանց in vitro պահպանման տեխնոլոգիայի ռեժիմը: Այդ մշակաձեւերի պահպանման ժամկետը հասցվել է 8-10 ամսվա: Բույսերի in vitro պահպանության տեւողության երկարացման նպատակով փորձարկվել են մի շարք նյութերի ազդեցություններ՝ բույսերի մորֆոգենեզի տարբեր փուլերում:</p> <p>Կարտոֆիլի Մադելինա եւ Ջոլի մշակաձեւերը ենթարկվել են 1,5-2,0 ամիս տեւողությամբ թերմոթերապիայի, պալարներում առկա հնարավոր վիրուսների աճը ճնշելու նպատակով, հաջորդիվ իրականացվել է</p>	<b>32 (6/26) այդ թվում՝ Scopus, Web of science 14, Q1-2, Q2-1, Q3-3 Q4-0 Q չունե-</b>	<b>3(3/0)</b>
---	------------------------------	-----------------	-------------	---	---	---------------

			<p>գագաթային մերիսթեմայի անջատում եւ ռեգեներացիա: Ստացվել են առողջ ռեգեներանտներ, որոնք ներկայում գտնվում են զանգվածային միկրոբազմացման փուլում:</p> <p>Շարունակվել են աշխատանքները կարտոֆիլի քիչ տարածված մշակածեւերի պալարագոյացման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:</p> <p>Շարունակվել է միկրոբազմացվել իրգայի, կալինկայի, հաղարջի, հապալասի, մոշենու եւ մոռենու մեկական մշակածեւ, Կեչու եւ ուռենու մեկական տեսակ: Մոշենու բազմացված բուսակների քանակը գերազանցել է 1000 նմուշը:</p> <p>Շարունակվել են խաղողի արտասահմանյան ընտրասերման 4 արժեքավոր մշակածեւերի, մարգախնձորի մեկ, Կիվիի լավագույն 3 մշակածեւերի ռեգեներացման, պտղատուների 3 պատվաստակալների միկրոբազմացման տեխնոլոգիաների բարելավման աշխատանքները:</p> <p>Ավարտվել են մատուտակի եւ Կապարի ռեգեներացման աշխատանքները, որոնց սերմային բազմացումը չափազանց դժվար է ընթանում: Բույսերը գտնվում են միկրոբազմացման փուլում, իսկ փորձարկումները շարունակվում են:</p> <p>Սկսվել են հիդրոպոնիկ սարքի օգնությամբ, ինչպես նաեւ հողախառնուրդներում մոշենու, խաղողի, կարտոֆիլի, վարդենու միկրոբուսակների ադապտացման տեխնոլոգիաների փորձարկման աշխատանքները:</p> <p>Կարտոֆիլի 15, անփուշ մոշի 5, խաղողի ֆիլոքսերադիմացկուն մշակածեւ-պատվաստակալներից, ունաբի եւ այլ բույսերի միկրոբուսակները պարբերաբար կտրոնավորվում եւ պահպանվում են <i>in vitro</i> գենբանկում:</p> <p><b>Մշակաբույսերի եւ դրանց վայրի ազգակիցների ազգային գենբանկ</b></p> <p>Կատարվել են հետեւյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հիմք ընդունելով գենետիկական բանկում պահվող նմուշների պարբերական լրացման եւ թարմացման խնդիրները, նախապես սահմանված արշավախմբային երթուղիների եւ ժամկետների համա-</li> </ul>	<p><b>ցող՝ 8</b></p>	
--	--	--	---	----------------------	--



			<p>ծայն՝ ՀՀ տարբեր մարզերում (Արարատ, Արմավիր, Կոտայք, Վայոց ձոր, Արագածոտն) իրականացվել են 14 արշավախմբային այցեր, որոնց ժամանակ ուսումնասիրվել են կոնկրետ բուսատեսակների տարածման արեալները, դրանցում բույսերի աճի ու զարգացման ընթացքը, պոպուլացիայում առանձնյակների հաշվարկային քանակը, տարածվածությունը, միգրացիոն իրավիճակը, վտանգվածության աստիճանն ըստ կոնկրետ գործոնների, համակեցությունները, էկոմիջավայրը եւ այլն:</p> <p>Հավաքված ավելի քան 300 նմուշները լաբորատոր պայմաններում ենթարկվել են հետազոտության՝ չորացվել են, որոշվել է դրանց կարգաբանական պատկանելությունը (ընտանիք, ցեղ, տեսակ, ենթատեսակ), որից հետո սերմերը (800 նմուշ) հաշվարկվել, տարա-յավորվել եւ դրվել են երկարաժամկետ (-18°C) պահպանության, բուսանմուշներից պատրաստվել է հերբարիումային 145 թերթ:</p> <p>Հետազոտված նմուշների անձնագրային տվյալները եւ GPS-ի տվյալները մուտքագրվել են տվյալների էլեկտրոնային միջազգային բազայում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Իրականացվել են պահպանվող սերմանմուշների պլանավորված վերարտադրման եւ նմուշների թարմացման աշխատանքներ:</li> <li>• Շարունակվել են ընտրասերման աշխատանքները՝ գարնանը (ապրիլի առաջին տասնօրյակ) բազմացման նպատակով կատարվել է գարու եւ հաճարի ընտրասերումնային 2 սորտանմուշների, իսկ վերարտադրության նպատակով՝ լոբու 10 մշակաձեւ-պոպուլյացիաների ցանք:</li> <li>• Ընթացիկ տարվա հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում կատարվել է աշնանային նոր ցանք (դաշտավլուկազգիների եւ բակլազգիների ընտանիքներին պատկանող վայրի տեսակներից՝ ցորեն, գարի, աշորա, կորնգան, առվույտ եւ երեքնուկ, ինչպես նաեւ գարու եւ հաճարի հեռանկարային մեկական գիծ):</li> </ul> <p><b>Էկոլոգիայի եւ օրգանական գյուղատնտեսության բաժին</b> Նախատեսված աշխատանքները իրականացվել են հետեւյալ ուղղու-թյուններով.</p>		
--	--	--	--	--	--

			<ul style="list-style-type: none"> <li>• Վեգետացիոն փորձերով ուսումնասիրվել է կարտոֆիլի որոշ սորտերի (Արիզոնա, Մետեոր, Հուսար) վրա աղային սթրեսի ազդեցությունը:</li> <li>• Վեգետացիոն փորձերով սկսվել են ուսումնասիրություններ հացազգի որոշ մշակաբույսերի մշակաձեւերի վրա ջրային դեֆիցիտի ազդեցությունը: Այդ նպատակի համար արհեստականորեն ստեղծվել է բույսերի համար ջրային դեֆիցիտ:</li> <li>• Նախապես հետազոտվել է վեգետացիոն անոթներում օգտագործված ոռոգելի մարգագետնային գորշ հողանմուշներում դաշտային սահմանային խոնավունակությունը եւ հիգրոսկոպիկ խոնավությունը:</li> <li>• Մի շարք բույսերի վրա փորձարկվել են (կարտոֆիլ, մոշենի, ելակ, խաղող) Կոմպլեքս եւ Կոմպլեքս պլյուս աճի խթանիչները: Բաժնի աշխատակիցները մասնակցել են նաեւ կարտոֆիլի, որոշ ծաղկային բույսերի, անփուշ մոշենու, մոռենու, խաղողի մի քանի մշակաձեւերի in vitro բուսակների ադապտացման աշխատանքներին: Մշակվել են ադապտացիոն տեխնոլոգիաներ: Փորձարկվել են հողախառնուրդներ (պեռլիտ, կենսահումուս, հող, տորֆ) տարբեր չափաբաժիններով: Ադապտացված բույսերը ներկայումս տնկված են ջերմատան պայմաններում որպես առողջ, մայրական բույսեր:</li> </ul> <p><b>Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիա</b></p> <p>Շարունակվել է Ազգային գենբանկում պահպանվող նմուշների գույքագրումը գենետիկական անձնագրավորման եւ գծակոդավորման նպատակով: Տարբեր բուսաբանական ընտանիքներին պատկանող 26 բուսատեսակներից կատարվել է գենոմային ԴՆԹ-ի եւ պոլիմորֆ սպիտակուցների անջատում, որոնց հիման վրա էլ կատարվել է նմուշների գենոտիպավորում եւ գենադարանների ստեղծում: Որպես ԴՆԹ-մարկերներ օգտագործվել են միջմիկրոսատելիտային լոկուսների հատվածները (Inter Simple Sequence Repeat), իրականացվել է ՊՇՌ, արդյունքները ենթարկվել են մշակման: Ստացված արդյունքները որպես գենետիկական մարկերներ հնարավորություն</p>		
--	--	--	--	--	--

			<p>են տվել պարզելու տեսակների ծագումը, էվոլյուցիան, օգտակար տնտեսական հատկանիշների ժառանգման օրինաչափությունները, տեսակի բջջագենետիկական բնութագիրը, արտաքին միջավայրի անբարենպաստ գործոնների եւ հիվանդությունների նկատմամբ բնական դիմադրողականությունը եւ այլն:</p> <p>Մշակվել են նաեւ սխեմաներ բույսերի աղադիմացկունության եւ չորադիմացկունության ուսումնասիրության համար: Կատարվել են Հայաստանում մշակվող կարտոֆիլի երեք արժեքավոր սորտերի (Արիզոնա, Հուսար, Մետեոր) աղադիմացկունության ուսումնասիրություններ կենսաքիմիական եւ ԴՆԹ մարկերների կիրառմամբ: Հետազոտական աշխատանքներում կիրառվել են դասական ագրոնոմիական, մոլեկուլային կենսաբանական, կենսատեխնոլոգիական եւ գենետիկամաթեմատիկական մեթոդներ:</p> <p>Աշխատանքներ են կատարվել Հայաստանում մշակվող ցորենի մի շարք մշակաձեւերի 4 սթրեսային սպիտակուցների գեների էքսպրեսիան եւ ջրային դեֆիցիտը ուսումնասիրելու ուղղությամբ:</p> <p><b>Գյուղատնտեսական պատրաստուկների ստացման եւ որակի վերահսկման բաժին</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրվել է սինթեզված միացությունների հակասնկային ակտիվությունը պայմանականորեն ախտածին մի շարք շտամների նկատմամբ:</li> <li>• Բնական գինեքարից առանձնացված գինեթթվի հիման վրա ստացվել են միկրոսնուցող բաղադրիչների (Fe, Cu, Zn, B, S) տարբեր պարունակությամբ բույսերի աճի խթանիչ-ախտահանիչ-բուսախտաբանական մանրէասպան հատկություններով համակցված պատրաստուկային ձեւեր:</li> <li>• Ձեռք բերված հումքի հիման վրա կազմակերպվել է «Կոմպլեքս» շարքի պատրաստուկների (համակցված միջատասպան՝ «Կոմպլեքս պլյուս» եւ աճի խթանիչ, սերմերի ախտահանիչ, միկրոսնուցող՝ «Կոմպլեքս կո») ստացման տեխնոլոգիական գործընթացը, մշակվել են դրանց արտադրության տեխնոլոգիական հարաչափերը (պարամետրերը), ստացվել են փորձարարական քանակներ: Պատրաստուկը</li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p>փորձարկվել է հացահատիկային մշակաբույսերի վրա, ճշգրտվել են պատրաստուկի ծախսի նորմերը սերմերի ախտահանման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Երեւանի Ավան աղի հանքում արդյունահանվող հումքի վերամշակման ընթացքում առանձնացված բարձր հանքայնացված հատակային նստվածքի հիման վրա մշակվել են թերապետիկ կավի, հակաբորբոքային միջոցների, ցավազրկող բալասանների, կոսմետիկայի եւ մաշկի սկրաբների՝ բարելավված հատկություններով պատրաստուկային ձեւեր:</li> <li>• Ձեւակերպվել է գյուտի կարճաժամկետ արտոնագրի ստացման երկու հայտ, որոնք գրանցվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի կողմից:</li> </ul> <p>Հետազոտական արդյունքների առետրայնացման նպատակով «Քեմտեխ» ՍՊԸ-ի համագործակցությամբ գիտական կենտրոնի տարածքում ստեղծվում է փորձարարական արտադրական հանգույց՝ գյուղատնտեսական արտադրությունների թափոնների վերամշակման համար:</p> <p>2023-ին լրիվ վերանորոգվել եւ կահավորվել է Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան, որը բաղկացած է 4 լաբորատոր սենյակներից, ինչպես նաեւ Գյուղատնտեսական պատրաստուկների ստացման եւ որակի վերահսկման բաժնի փորձարտադրական տարածքը: Սկսվել է ԳԿ-ի 2000 մ<sup>2</sup> ջերմատան շինարարությունը Ավստրիական զարգացման գործակալության «Կանաչ Գյուղատնտեսություն» ծրագրի ֆինանսավորմամբ եւ ՀՀ ԷՆ աջակցությամբ:</p> <p>Իրականացվել է 2 վերապատրաստում, ավարտվել են ՀՀ ԲԿԳԿ-ից ֆինանսավորվող 2 թեմա, իսկ 2-ը կշարունակվեն 2024 թ., ինչպես նաեւ «Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում. բույսերի կենսաբազմազանության ամբողջական մոտեցում (ծածկագիր 22IRF-10) գիտական թեման: Շարունակվում է նաեւ «Հայաստանի մշակաբույսերի կենսաբազմազանության վերականգնում եւ ապահով կրկնօրինակում Սվալբարդի սերմերի համաշխարհային պահոցում» միջազգային ծրագիրը:</p>		
--	--	--	---	--	--

2	ՈՍԿԵՀԱՏԻ ԽԱՂՈՂԱ- ԳԻՆԵ- ԳՈՐԾՈՒ- ԹՅԱՆ	48,348.0	18.0	<p>Աշխատանքներն իրականացվել են ստորեւ ներկայացվող ստորաբաժանումների միջոցով.</p> <p><b>Խաղողագործության եւ գինեգործության բաժին</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Շարունակվել են կոլեկցիոն այգու համալրման համար մշակածների հավաքագրումը:</li> <li>• Մշակածների հեռանկարայնությունը որոշակի տեղում որոշարկելու համար ուսումնասիրվել են մշակածեւի ձեւաբանական, կենսաբանական, ագրոտեխնոլոգիական առանձնատկություններն ըստ OIV-ի բնութագրիչների: Մշակածների ուսումնասիրությունը կատարվել է մի քանի փուլով՝ ծաղկման փուլում, պտուղների հասունացման փուլում՝ շուրջ 56 բնութագրիչ: Ուսումնասիրվել է շուրջ 26 մշակածեւ:</li> <li>• Կլիմայի փոփոխության եւ գլոբալ տաքացման պայմաններում, ուղղաձիգ գոտիականությամբ պայմանավորված՝ խաղողի որոշ մշակածների որակական ցուցանիշների ուսումնասիրության նպատակով գիտարշավներ են կազմակերպվել Վայոց ձորի եւ Արագածոտնի մարզեր, Նալբանդյանի փորձակայան, հաշվառվել են Կախեթ, Սեւ Արեւի, Ոսկեհատ մշակածների վազերը՝ հետագա ուսումնասիրություններ կատարելու համար: Կատարվել են ֆենոլոգիական դիտարկումներ օդերեւութաբանական տվյալների համադրությամբ: Կատարվում է ստացված տվյալների վերլուծություն:</li> </ul>	11(10/1) այդ թվում՝ Scopus, Web of science 1, Q3-1	4(0/4)
				<ul style="list-style-type: none"> <li>• Ագրոտեխնիկական միջոցառումներից կարելի էր են էտը եւ ձեւավորման համակարգերի ընտրությունը, հետեւաբար ուսումնասիրվել է առանց բնի ազատ ձեւավորման հովհարանման (ստուգիչ) եւ Լենց Մոզեր-կորդոն համակարգերի համեմատական ուսումնասիրությունը Նալբանդյանի փորձակայանի Չարենցի մշակածեւի արտադրական այգում, փորձը դրվել է 1 շարքի վրա:</li> <li>• Տնկման տարբեր խտության ուսումնասիրության համար Վայոց ձորի մարզում արդեն հիմնված այգում կատարվել է բերքի քանա-</li> </ul>		

			<p>կական եւ որակական ցուցանիշների հաշվառում, արդյունքների գրանցում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համաձայն աշխատանքային եւ ատենախոսական աշխատանքների պլանի՝ մթերվել են քիչ տարածված խաղողի մշակածեւեր՝ միկրոգինեգործության նպատակով վերամշակելու եւ հետագայում այդ մշակածեւերի գինեգործական ներուժը պարզելու համար:</li> </ul> <p><b>Պտղաբուծության եւ ֆիզիոլոգիայի բաժին</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Շարունակվել են մայրուտային եւ կոլեկցիոն այգիների՝ տեղական ծագման մշակածեւերով եւ կլոնային պատվաստակալներով համալրման աշխատանքները:</li> <li>• Նալբանդյանի փորձաքաղայի տնկարանում աճեցվել եւ 2023 թ. մարտ ամսին կոլեկցիոն այգու համալրման նպատակով տնկվել է ծիրանենու անհետացող տեղական ծագման 17 սորտերի շուրջ 90 տնկի: Ծիրանենու, դեղձենու, խնձորենու, կեռասենու եւ այլ պտղատեսակների բազմացված 32 մշակածեւերի 300-ից ավելի տնկիներ պատրաստ են կոլեկցիոն այգու համալրման նպատակով 2024 թ. իրականացվելիք գարնանային տնկումներին:</li> <li>• Ծիրանենու տեղական ծագման, տարածամկետ հասունացող եւ լավագույն առանձնահատկություններով օժտված սորտերի, կլոնների եւ ձեւերի հայտնաբերման նպատակով հաշվետու տարվա մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են գիտարշավներ Արարատի մարզի Սուրենավան, Արալեզ եւ Տափերական բնակավայրերի ծիրանենու այգիներ: Որպես արդյունք՝ հայտնաբերվել են ծիրանենու հեռանկարային 13 ձեւերի ծառեր, որոնք տեղանշվել եւ քարտեզագրվել են համաձայն նմուշառման ընդունված մեթոդաբանության: Նմուշառված 13 ձեւերը լաբորատոր պայմաններում ենթարկվել են ձեւաբանական բազմաբնույթ ուսումնասիրությունների՝ պտղի, կորիզի, տերեփ կշռման եւ չափման մեթոդներով նկարագրությունների: Արտադրությանն առավել պահանջված մշակածեւերով առաջարկություններ ներկայացնելու նպատակով առանձնացվել են լավագույն ցուցանիշներ ապահոված 8 ձեւեր, որոնց ներդրումը ՀՀ արտադրական այգիներում կապահովի մշակածեւային կազմի ընդլայնում եւ արդյու-</li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p>նավետության բարձրացում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Վեգետացիայի ընթացքում շարունակվել են պտղատու մշակաբույսերի ֆենոլոգիական փուլերի դիտարկումները օդերեուֆաբանական տվյալների համադրությամբ, որի նպատակն է կլիմայի փոփոխության եւ գյուղալ տաքացման պայմաններում պարզել բույսերում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխությունները, կատարվում է վերլուծություն ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման եւ մշակության արդյունավետության բարձրացման ուղղություններով:</li> <li>• Շարունակվել են ծիրանենու մշակաձեւերի ուսումնասիրությունները ըստ ուղղաձիգ գոտիականության, որի նպատակն է, ելնելով կլիմայի փոփոխություններից՝ վերանայել ծիրանենու՝ ՀՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող մշակաձեւային կազմի տեղաբաշխումը եւ մասնագիտացումը ըստ գյուղատնտեսական գոտիների:</li> <li>• Շարունակվել են ծիրանի չրացու, տարաժամկետ հասունացող մշակաձեւերի ուսումնասիրություններն ըստ ուղղաձիգ գոտիականության:</li> <li>• Գիտական կենտրոնը մասնակցել է գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման մրցույթին եւ շահել ընդհանուր 7,42 մլն դրամ արժողությամբ ժամանակակից սարքավորումներ:</li> </ul>		
--	--	--	--	--	--

	<p>Հ. ՊԵՏՐՈՍ-ՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱ-ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈ-ՔԻՄԻԱՅԻ ԵՒ ՄԵԼԻՈՐԱ-ՑԻԱՅԻ</p>	<p>142490.8</p>	<p>49. 5</p>	<p>Հաշվետու տարում բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում ուսումնասիրվել է մշակվել են համալիր միջոցառումներ հետեւյալ ուղղություններով.</p> <p><b>Հողագիտություն, ագրոքիմիա, մելիորացիա, հողաշինարարություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հողային պաշարների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսության զարգացման, մշակաբույսերի բերքատվության եւ հողերի բերրիության պահպանման եւ բարձրացման նպատակով հողատարածքների անապատացման, դեգրադացման հետ կապված խնդիրների ուսումնասիրում, դրանք կանխելու, մեղմելու գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակում:</li> <li>• Լեռնատափաստանային գոտու էրոզացված լանջային վարելահողերում հողի մշակման տարբեր ձևերի ազդեցությունը հողերի ագրոֆիզիկական հատկությունների, հողում օրգանական ածխածնի եւ հանքային սննդատարրերի հաշվեկշռի, մոլախտվածության, բերքատվության եւ տնտեսական արդյունավետության ուսումնասիրում՝ համեմատելով մշակության ավանդական վարի եղանակը անվար մշակությունների հետ:</li> <li>• Հայաստանի կարելուք երկրագործական գոտիներից մեկի՝ Արարատյան հարթավայրի ոռոգման հիմնական աղբյուր հանդիսացող արտեզյան ավազանի ջրերի կառավարման բարելավմանն ուղղված շարունակական միջոցառումների համակարգի մշակում՝ կիրառելով բնապահպանական տեսանկյունից անվտանգ, հիդրոգել պոլիմերային միացություն՝ ավելի լուրջ սոցիալ-տնտեսական եւ բնապահպանական խնդիրներից խուսափելու համար:</li> <li>• Աղակալած, ալկալիացած, ինչպես նաեւ երկրորդային աղակալած հողերի բարելավման համար առաջարկվող մելիորանտների մելիորատիվ արդյունավետության ուսումնասիրություն. դաշտային պայմաններում ուսումնասիրվում են գիպսի եւ բարդայի, էլեկտրոակտիվացրած ջրերի եւ գիպսի համատեղ կիրառման դեպքում մելիորատիվ արդյունավետությունը՝ տեղային մելիորացման պայմաններում եւ համալիր միջոցառումների համակարգի մշակում, որի</li> </ul>	<p>5(1/4) այդ թվում՝ Scopus, Web of science 2, Q2-2 Հրատարակման փուլում է 5 հողված, որից՝ 2-ը Q2 քառորդում եւ 1-ը Q3 քառորդում գտնվող պարբերականներում</p>	<p>4(1/3)</p>
--	---	-----------------	--------------	---	--	---------------



			<p>արդյունքներով աշխատանքներ են կատարվում տեղական նոր մեխորանտի ստացման ուղղությամբ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հողերի բերրիության բարելավման ագրոտեխնիկական միջոցառումների համակարգում նոր օրգանական եւ օրգանահանքային պարարտանյութերի ստացման եւ օգտագործման մեթոդների մշակում:</li> </ul> <p><b>Պեստիցիդների սինթեզ եւ փորձաքննություն</b></p> <p>Նպատակային սինթեզները իրականացվել են ինչպես N,O,S պարունակող հինգանդամանի եւ վեցանդամանի հետերոցիկլերի, այնպես էլ դրանց չկոնդենսված եւ կոնդենսված բի-, տրի- եւ տետրացիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում: Ուսումնասիրությունները կատարվել են հետեւյալ հիմնական ուղղություններով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• N, S, O պարունակող բազմատոմ հետերոցիկլերի եւ դի-, տրի- եւ տետրացիկլիկ հետերոհամակարգերի շարքում նոր միացությունների սինթեզներ,</li> <li>• նյութերի լաբորատոր-վեգետացիոն փորձարկումներ:</li> <li>• ազոլների եւ ազինների ածանցյալների, ինչպես նաեւ երկու, երեք եւ չորս ֆարմակոֆոր հետերոցիկլերի համադրությամբ համակարգերի նոր ածանցյալների սինթեզի եղանակների մշակում եւ սինթեզված միացությունների լաբորատոր կենսաբանական փորձարկումներ: Համաձայն 2023 թ. նախատեսված գործառնական օրացուցային պլանի եւ իրականացման մոտեցումների՝ կենտրոն-մասնաճյուղում իրականացվել են հետեւյալ աշխատանքները.</li> <li>- Ազինների շարքի 1,3,5-տրիազինի եւ պիրիմիդինի ածանցյալների սինթեզներ,</li> <li>- Ազինների շարքի պիրիդազինի ածանցյալների սինթեզ,</li> <li>- Պիրիդազինի որոշ ածանցյալների <i>in silico</i> ուսումնասիրություն,</li> <li>- Ազոլների սինթեզներ 1,3,4-թիադիազոլի ածանցյալների շարքում,</li> <li>- Պիրիմիդինիլթիո-1,3,4-թիադիազոլի ածանցյալների սինթեզ,</li> <li>- Սինթեզված միացությունների կենսաբանական ուսումնասիրություններ:</li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p><b>Երասխահունի փորձամեխորատիվ կայան</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 5,0 հա աշնանացան ցորենի համար նախատեսված հողի վար, հարթեցում, փորձամարզերի տեղաբաշխում, 1500 կգ սերմի մշակում փորձերի սխեմաներով նախատեսված ԳԿ ՄՃ-ում սինթեզված աճի խթանիչներով, հակասնկային միջոցներով մշակում, դրանց տեղափոխություն, ցանք եւ ժամանակավոր ջրատարների անցկացում:</li> <li>• 6 ֆերմերային տնտեսությունների հետ համատեղ գիտական հետազոտություններ են կատարվել, կնքվել են պայմանագրեր: ԳԿ աշխատակիցները հետազոտել են Երասխահունի փորձամեխորատիվ կայանի ոռոգման համակարգի ներկա վիճակը:</li> </ul> <p><b>Թեմատիկ ծրագրեր, մրցույթներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Շարունակվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկի բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկրագործության պայմաններում» վերնագրով (21T-4C050 ծածկագիր) թեմատիկ ծրագիրը:</li> <li>• Գիտական կենտրոն մասնաճյուղում «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի հետ համատեղ կատարվում է ներդրումային ծրագիր (պայմանագիր QSE/E-20/02) կոնյակի սպիրտի թորումից առաջացած թափոն բարդան գյուղատնտեսության մեջ օգտագործելու ուղղությամբ:</li> <li>• Կենտրոնի երիտասարդ գիտնականների խումբը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ եւ Բելառուսի կրթության նախարարությունների կողմից երկու տարին մեկ անգամ անցկացվող «100 գաղափար ԱՊՀ համար» նորարարական երիտասարդական եւ գիտատեխնիկական մշակումների մրցույթին, ներակայացնելով «Գիպսակիր հողերի բարելավման արդյունավետ մեթոդ» նախագիծը, որը «Արդյունավետ բնօգտագործում» անվանակարգում ներկայացված 10 հայտից ճանաչվել է հաղթող:</li> </ul>		
--	--	--	--	--	--

				<p><b>Խորհրդատվություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Հաշվետու ժամանակահատվածում գիտական կենտրոնը երկրի գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (անհատ ֆերմերներ, ֆերմերային տնտեսություններ, պետական ծրագրեր) տրամադրել է խորհրդատվություն գյուղատնտեսական հողերի որակական կազմի գնահատման (անալիզներ) եւ հողերի բարելավման միջոցառումների ուղղությամբ: Կենտրոն մասնաճյուղում կատարվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր: Գիտական հետազոտությունների պատվերներից ստացված ֆինանսական հոսքի ծավալը (ծեւավորված արտաբյուջետային ֆինանսավորման ծավալներ) հաշվետու ժամանակահատվածում կազմել է 3,7 մլն դրամ՝ 35 պայմանագիր՝ 585 անալիզ:</li> </ul> <p><b>Ուսումնական եւ արտադրական փորձուսուցումներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Գիտական կենտրոն մասնաճյուղում 2023 թ. ընթացքում կազմակերպվել եւ անցկացվել են ՀԱԱՀ ցերեկային եւ հեռակա ուսուցման, Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջի, Հայաստանի Ոստիկանության ակադեմիայի ուսանողների ուսումնական եւ արտադրական փորձուսուցումները:</li> <li>Կենտրոն մասնաճյուղի՝ Հայաստանի հողերի թանգարան-լաբորատորիայում երկրի դպրոցների հետ համատեղ կատարվում են գիտագործնական աշխատանքներ, որոնց շրջանակներում կազմակերպվում են աշակերտների այցեր թանգարան եւ գործնական պարամունքների, լաբորատոր առաջադրանքների անցկացում թանգարան-լաբորատորիայում:</li> </ul>		
<b>ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՆԵՐ</b>						
4	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՒ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ</b>	39,472. 2	12.75	<p><b><u>Դաշտավարության եւ անասնապահության մեքենայացման բաժին</u></b>  <b>«Կերերի մանրացման ունիվերսալ մեքենայի մշակում եւ պարամետրերի օպտիմալացում»</b> ենթաթեմա</p> <ul style="list-style-type: none"> <li>Ենթաթեմայի բաղադրիչներն են՝ <ul style="list-style-type: none"> <li>պարզ կառուցվածքի էլեկտրաշարժաբերվող աշխատանքային օրգանով ունիվերսալ կերամանրիչի մշակում,</li> <li>աշխատանքային օրգանների փորձանմուշների պատրաստում:</li> </ul> </li> </ul>	12(8/4)	

			<ul style="list-style-type: none"> <li>✓ Ունիվերսալ մանրիչի աշխատանքային օրգանների շարժաբերումը իրականացվելու է փոկային փոխանցման միջոցով:</li> <li>✓ Մանրիչների աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծությունից հետեւել է, որ մանրացման գործընթացների ինտենսիվացման համար առաջնահերթ նշանակություն ունեն կտրող եւ ջարդող օրգանների աշխատանքային արագությունները:</li> <li>✓ Հիմնավորվել են կերամանրիչի կառուցվածքային հարաչափերը:</li> <li>✓ Նախագծվել, պատրաստվել եւ նախնական լաբորատոր փորձարկումներ են անցել մեքենայի բանվորական օրգանները:</li> </ul> <p>Նախնական գիտափորձերով պարզվել են առաջարկված ունիվերսալ մանրիչի էլեկտրաշարժաբերի երեք պտուտաթվերի սահմաններում տարբեր կերերի մանրվածքի հատիկաչափական կազմը եւ պարզվել է, որ փոկանիվների տրամագծերը պետք է վերահաշվարկել՝ լավագույն արտադրողականություն եւ նվազագույն էներգածախսումներ ստանալու համար:</p> <p>Նախնական փորձարկումները հնարավորություն են տվել ճշտել որոշ կինեմատիկական ու կառուցվածքային հարաչափեր եւ շահագործման ռեժիմներ:</p> <p>Որպես ուսումնասիրությունների արդյունք՝ կատարվել են հետեւյալ հիմնական եզրակացությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Նոր մշակված ունիվերսալ կերամանրիչի օգտագործումը տնտեսապես արդյունավետ է փոքր անասնապահական տնտեսությունների համար: Այն հնարավորություն կտա մանրացնել բոլոր կերատեսակները, պատրաստել սննդարար կերախառնուրդներ եւ բարձրացնել անասնապահական մթերքների արտադրությունն ու որակը:</li> <li>✓ Մեքենայի նախնական փորձարկումներով պարզվել է, որ առկա են կառուցվածքային ու շահագործական բնույթի որոշ թերություններ, որոնք հնարավոր է վերացնել:</li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p>«<b>Ինքնադիրքավորվող շարժական դանակներով ուղղաձիգ պտտման առանցքով ռոտացիոն հողամշակ ֆրեզի բանող օրգան</b>» ենթաթեմա</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գիտական ծրագրի շրջանակում կատարվել են աշխատանքներ օրացուցային պլանին համապատասխան:</li> <li>• Հողամշակ ֆրեզ-մեքենայի դիմադրության ուժային գործոնների որոշման լաբորատոր փորձակայանքի սկզբունքային սխեմայի մշակմանը զուգահեռ իրականացվող տեսական հետազոտությունների ընթացքում բաժնի աշխատակիցները բացահայտել են նոր, նախապես հաշվի չառնված գործոններ, որոնց ազդեցության գնահատման համար պահանջվել է շարունակել տեսական հետազոտությունները՝ գործընթացի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:</li> <li>• Մասնավորապես ուսումնասիրվել է, թե ֆրեզի ռոտորի մեկ պտույտի ընթացքում տարափոխման ինչպիսի միջակայքային արժեքներ կարող են ընդունել դանակի կտրման անկյունները հետագծի տարբեր տեղամասերում՝ <math>(0...π)</math> եւ <math>(π...2π)</math>, եւ կոնստրուկտորական ինչպիսի լուծումների միջոցով է հնարավոր ապահովել կտրման անկյունների հաստատուն կամ գրեթե հաստատուն արժեքները:</li> <li>• Հետազոտվել են ֆրեզի դանակի կետերի հետագիծը եւ արագությունների վեկտորների փոփոխման օրինաչափությունները:</li> <li>• Մշակվել է լաբորատոր հարմարանքի կինեմատիկական սխեման:</li> <li>• Տեսական հետազոտությունների միջոցով ստացված արտահայտությունները եւ եզրահանգումները հնարավորություն են տալիս դանակի տեղակայման անկյունը կարգավորել՝ օգտվելով այնպիսի օրինաչափությունից, որի դեպքում դանակի կտրման անկյունները ռոտորի մեկ պտույտի ընթացքում կմնան անփոփոխ: Այս հանգամանքը կարելի է նշանակություն ունի ֆրեզ-մեքենայի հավասարաչափ աշխատանքային ռեժիմ ապահովելու տեսանկյունից:</li> <li>• Կազմվել են նախագծաէքզիզային փաստաթղթեր եւ դրանց հիման վրա ձեռք են բերվել փորձակայանքի պատրաստման համար անհրաժեշտ նյութերը:</li> </ul>		
--	--	--	---	--	--

			<p><b>«Արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի մշակում եւ արտադրական փորձարկում» ծրագրի ենթաթեմա</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախատեսված էր մշակել առաջարկվող փոքրաչափ խոփա-սկավառակավոր արմատապտղահան մեքենայի բանող օրգանների (խոփի եւ սֆերիկ սկավառակի) տեխնոլոգիական սխեմաներ, տեսական հետազոտություններով որոշել անհրաժեշտ հարաչափերը:</li> <li>• Արմատապտղահավաք մեքենաների երկարատեւ փորձարկումներով, այդ թվում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կատարված փորձնական հետազոտությունների արդյունքներով, բացահայտվել են մի շարք կարեւոր թերություններ, այդ թվում՝ ծանր հողային պայմաններում կոմբայնների կառուցվածքային եւ տեխնոլոգիական անբավարար հուսալիությունը, արմատապտուղների մեծ կորուստները եւ պալարների վնասվածքների չափազանց բարձր տոկոսը, փոքր հողակտորներում դրանց կիրառման աննպատակահարմարությունը եւ այլն:</li> <li>• Հաշվի առնելով կատարված վերլուծությունները՝ առաջարկվում է մշակել խոփա-սկավառակավոր բանող օրգաններով քանդիչ, որի սկավառակավոր բանող օրգանը կարգավորվում է ինչպես գրոհի անկյան, այնպես էլ ուղղաձիգի նկատմամբ կազմած անկյան փոփոխմամբ, իսկ դահուկի տեսքով պասիվ խոփը փոխարինել պարզ պասիվ խոփով, որը հնարավորություն կտա խոփին սկավառակի հետ միասին սեղմել-խտացնել հողաշերտը, ավելի լավ քանդելով հողի եւ արմատապտղի միջեւ կապը:</li> <li>• Տեսական հետազոտություններով որոշվել են սկավառակավոր բանող օրգանի տեխնոլոգիական եւ կառուցվածքային հարաչափերը:</li> <li>• Կատարվել են լաբորատոր փորձարկումներ՝ պատրաստված բանող օրգանների փորձանմուշներով:</li> <li>• Նախատեսվում է 2024 թվականին իրականացնել փորձանմուշի նախագծում եւ լաբորատոր փորձարկումներ:</li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p><b><u>Ավտոմոբիլային փոխադրումների բաժին</u></b>  <b><u>«Գազաբալոնային ավտոմոբիլների քարշաարագային հատկանիշների բարելավմանն ուղղված համակարգերի մշակում եւ ներդրում»</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Նպատակը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական եւ հեղուկացված նավթային գազով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների հզորության մեծացում եւ դրանով իսկ ավտոմոբիլների քարշաարագային հատկանիշների բարելավում:</li> <li>• Կատարվել է օդի փականի կարգավորող սարքի աշխատանքային հարաչափերի մշակում, ինչպես նաեւ բանող աշխատանքային օղակի տրամաչափում: Որպես արդյունք՝ կատարվել է գազի սնուցման աշխատանքային շրջափուլի կարգավորում:</li> <li>• Ենթաբաժիններն են՝ <ul style="list-style-type: none"> <li>✓ Օդի ավելցուկի գործակցի առկա մեթոդաբանության վերլուծություն եւ հաշվարկման նոր եղանակի մշակում:</li> <li>✓ Օդի ավելցուկի գործակցի կարգավորման սկզբունքային նոր եղանակի մշակում ըստ տեղանքի՝ ծովի մակերեսույթից ունեցած բարձրության (օդի խտության փոփոխություն):</li> <li>✓ Օդագազային վառելախառնուրդի ստեխիոմետրիկ կազմի կարգավորման սարքի սկզբունքային սխեմայի մշակում:</li> </ul> </li> <li>• Հետազոտությունների արդյունքներով արվել են հետեւյալ եզրակացությունները. <ul style="list-style-type: none"> <li>✓ Ժամանակակից ավտոմոբիլներում օգտագործվող առաջին եւ չորրորդ սերունդի գազաբալոնային սարքավորումները հնարավորություն չունեն, կախված մթնոլորտային օդի ճնշումից՝ կարգավորել գլան ներածվող օդագազային վառելախառնուրդի համապատասխան ֆրակցիոն կազմը (օդ, գազ):</li> <li>✓ Գազաբալոնային սարքավորումների համակարգում օդագազային վառելախառնուրդի լիցքի ձեւավորումը կատարվում է պարզ եղանակով, օդի մուտքը դեպք ներածման կոլեկտոր մեխանիկական շերտափեղկի միջոցով մինչեւ շարժիչի կայուն աշխատանքի հասնելը:</li> <li>✓ ՆԱՇ-ի կոլեկտոր ներածվող օդագազային վառելախառնուրդի ստեխիոմետրիկ կազմի ապահովման կարգավորման սարքի սկզբուն-</li> </ul> </li> </ul>		
--	--	--	--	--	--

			<p>քային սխեման հնարավորություն կտա ապահովել օդի ավելցուկի գործակցի օպտիմալ արժեք, վառելանյութի տնտեսում, շարժիչի արդյունավետ հզորության աճ:</p> <p><b><u>Գազաբալոնային ավտոմոբիլների շարժիչի գլան ներածվող օդագազային վառելախառնուրդի օդի մուտքի կարգավորման սարքի մոդելի նախապատրաստում, մոնտաժ եւ փորձարկում</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Պատրաստվել է գազաբալոնային ավտոմոբիլների գլան ներածվող օդագազային վառելախառնուրդի օդի ավելցուկի գործակցի կարգավորման սարքի մոդելը, փորձարկվել է շարժիչի աշխատանքի տարբեր ռեժիմներում եւ կատարվել են համապատասխան ճշտորոշումներ շարժիչի՝ կայուն ռեժիմով աշխատելու նպատակով:</li> <li>• Մշակվել է թվային տեխնոլոգիաներով աշխատող էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել մշակված գազային սնման համակարգի աշխատանքը օդագազային վառելախառնուրդի ֆրակցիոն կազմի պատրաստման եւ մատուցման նպատակով:</li> <li>• Մշակվել են գազաբալոնային ավտոմոբիլների սնման համակարգի շահագործման առանձնահատկությունները ծովի մակերեսույթից տարբեր բարձրությունների վրա սարքի հարմարվողականությունը օդագազային վառելախառնուրդի ֆրակցիոն կազմի ճիշտ ընտրությանը:</li> <li>• Առաջարկվող համակարգի օգտագործումը հնարավորություն է ստեղծում ապահովել ավտոմոբիլի գազային վառելայնութի տնտեսում, միաժամանակ ապահովելով շարժիչի արդյունավետ հզորության բարելավում եւ թունավոր արտանետումների նվազեցում:</li> <li>• Մշակվել է գազաբալոնային ավտոմոբիլի սնման համակարգի լաբորատոր եւ շահագործական փորձարկման մեթոդաբանություն, տալով փորձարկումների ժամանակ օդագազային վառելախառնուրդի ֆրակցիոն կազմի քանակական նորմեր: Մշակվել է գազաբալոնային ավտոմոբիլի անվտանգ սնման համակարգի փորձարկման աշխատանքային համակարգը:</li> </ul>		
--	--	--	--	--	--



5	ՍՆՆԴԱԳԻՏՈՒ- ԹՅԱՆ ԵՆ ԿԵՆՍԱՏԵԽՆՈ- ԼՈԳԻԱՆԵՐԻ	41,792.0	12.5	<p><b><u>Սննդի անվտանգության եւ կենսատեխնոլոգիայի բաժին</u></b></p> <p>Եթե 2022 թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական նպատակը ձուկ (տեր) – բակտերիա փոխազդեցությունների գնահատումն էր, ապա 2023 թ. <b>ուսումնասիրությունների հիմնական նպատակը</b> տեր (հավ) - բակտերիա փոխհարաբերությունների գնահատումն է սթրեսային պայմաններում:</p> <p>Կուլտուրոմիկան տեխնիկա է, որը հնարավորություն է տալիս հայտնաբերել եւ ուսումնասիրել բակտերիաների ընդլայնված բազմազանությունը՝ օգտագործելով մեծ թվով մշակված միջավայրեր եւ կուլտիվացման պայմաններ: 2023-ին բաժնի աշխատակիցների հիմնական ուսումնասիրությունները վերաբերում էին կուլտուրոմիկայի օգնությամբ ջերմային շոկի ենթարկված «Արաքս» թռչնաբուծարանի հավերի աղիների կուլտիվացվող բակտերիաների որակաքանակական կազմի հետազոտմանը: Ուսումնասիրվել են 5 ամսական, 1,4-1,7 կգ քաշով հավերը, որոնք կերակրվել են հոլանդական Nuscience տեխնիկայով (<a href="https://www.nuscience.eu/species/poultry">https://www.nuscience.eu/species/poultry</a>) պատրաստած «TOTAL POL 21 (Arndane Ltd, Armenia)» կերով: Համաձայն հետազոտությունների՝ ջերմային սթրեսի ազդեցության տակ հավերի աղիքային միկրոբիոտում փոփոխվում են բակտերիալ բազմազանությունները եւ բազմազանությունների քանակական բաշխվածությունը, ըստ նախնական արդյունքների՝ էնթերոկոկերը եւ դրանց քանակները: Այնուամենայնիվ, այս հետազոտությունները պահանջում են գենետիկական հիմնավորում, որն իրականացվում է 21AG-4D065 ծածկագրով «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը» թեմայի շրջանակում:</p> <p><b><u>Կենդանական ծագման հումքի եւ մթերքի վերամշակման տեխնոլոգիաների բաժին</u></b></p> <p>Եթե 2022 թ. հետազոտությունները վերաբերում էին գործառության հատկություններով ֆերմենտացված կաթնամթերքի՝ մածուն «ԶՊԶ»-ի եւ մածուն «Վահեի» կենսաանվտանգության ցուցանիշների հիմնա-</p>	(15/7) այդ թվում՝ Scopus, Web of science 5, Q1-1, Q2-1, Q3-3 Q4-0	6(3/3)
---	--	----------	------	--	--	--------

			<p>վորմանը ըստ միջազգային համապատասխան չափորոշիչների, ապա 2023 թ. բաժնի գիտահետազոտական աշխատանքների հիմնական նպատակն էր <i>Lpb. plantarum K1-3</i> եւ <i>L. delbrueckii IAHAHI</i> պրոբիոտիկային շտամների հիման վրա ստացված յոգուրտների կենսասանվտանգության ցուցանիշների ստուգումը եւ այս բոլոր՝ <i>Lpb. plantarum ZPZ, Lcb. rhamnosus str. Vahe.am, Lpb. plantarum K1-3</i> եւ <i>L. delbrueckii IAHAHI</i> պրոբիոտիկային շտամների հիման վրա ստացված յոգուրտների կենսասանվտանգության գնահատումն ըստ հակաբիոտիկակայուն գեների տարածման վտանգի: Այսպիսով, նաեւ ըստ իրականացված ԳՕՍՏ 32901-2014, ԳՕՍՏ 30347-2016, ԳՕՍՏ 31659-2012, ԳՕՍՏ ԻՍՕ 6611-2013, ՄՖԲ ԵՆ 15763-2015, ԳՕՍՏ 23452-2015, ՄՎԻ.ՄՆ 2436-2015, ՄՎԻ.ՄՆ 3951-2015 եւ ՄՎԻ.ՄՆ 2786-2013 վերլուծությունների, առաջարկվող նոր յոգուրտների կենսասանվտանգության ցուցանիշները համապատասխանում են յոգուրտներում հակաբիոտիկակայունության տարածման վտանգի, ծանր մետաղների եւ աֆլատոքսին M1-ի պարունակության, ինչպես նաեւ մանրէաբանական ցուցանիշների միջազգային չափորոշիչներին:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում բաժնի աշխատակիցները շարունակել են նաեւ գիտահետազոտական աշխատանքները հետեւյալ երկու ծրագրերով՝ «21AG-4D065, գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը» եւ «EAPI2020-065; Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար»: Շարունակվել է նաեւ մասնակցությունը երիտասարդ գիտաշխատողների վերապատրաստման դասընթացներին, բանավոր եւ ստենդային մասնակցությունը ԱՄՆ-ում, Եգիպտոսում եւ Ռուսաստանի Դաշնությունում:</p>		
			<p><b>Քուսական ծագման հումքի եւ մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին</b></p> <p>Աշխատանքները իրականացվել են հետեւյալ 3 ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ֆունկցիոնալ նշանակության սննդային հավելումների օգտագործումը հացաթխման եւ հրուշակեղենի արտադրության բնագավառում:</li> <li>✓ Հատուկ գարեջրի պատրաստման տեխնոլոգիայի մշակում</li> </ul>	7(5/2) այդ թվում՝ Scopus, Web of science 2,	-

				<p>դեղաբուսական հումքի կիրառմամբ:  ✓ Մենդարոյունաբերության երկրորդային հումքի՝ մրգակորիզային, վերամշակումը, յուղերի ստացում:  Պատրաստի մթերքները ներկայացվել են ս.թ. կայացած Ֆունկցիոնալ սննդի կենտրոնի (ԱՄՆ) Functional food and Bioactive Compounds: Modern and Medieval Approches միջազգային գիտաժողովին: Թեմայի շրջանակում նաեւ համագործակցության հնարավորություն է ստեղծվել Functional Food Center/Food Science Publisher ամերիկյան կենտրոնի հետ:  Բաժնի աշխատակիցների աջակցությամբ կատարվել են մի շարք ուսանողական հետազոտական աշխատանքներ: 2023-ին զգալիորեն ավելացել է մագիստրոսական թեմաների թիվը, որը պայմանավորված է հետազոտական թեմաներով:  2023-ին բաժնում իրականացվել է 3 թեկնածուական հետազոտական աշխատանք, նախորդ տարվա 1-ի փոխարեն:  2023-ին բաժինը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ցուցահանդեսներին, կազմակերպվել են ճանաչողական այցեր, մասնագիտական, ինչպես նաեւ կարճաժամկետ դասընթացներ, արտերկրյա հյուրերին ներկայացվել են նորարարական տեխնոլոգիաներ:  Նորարարական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ստացված արտադրատեսակները ներկայացվել են 5 տարբեր ցուցահանդեսներում:</p>	<p>Q1-0,  Q2-0,  Q3-2  Q4-0</p>	
<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ</b>						
6	<p>ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ</p>	8,533.6	3	<p>«ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները եւ լուծման ուղիների առաջադրումը» ծրագրի իրականացում  Մեծաթիվ գյուղացիական տնտեսությունների ձեւավորումը բերեց գյուղատնտեսական նշանակության հողերի կտրտվածության եւ տնտեսությունների հիմնականում փոքր չափերի: Հետմասնավորեցման ժամանակաշրջանում հողային բարեփոխումների եւ հողի արժեւորման գործընթացների դանդաղումը, շուկայի չկայանալը, միավոր տարածությունից սպասվելիք եկամուտների ցածր մակար-</p>	<p>2(1/1)  Հրապարակման է ներկայացված 2 հոդված տեղական եւ միջազ-</p>	

			<p>դակը մեծապես նպաստեցին գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ոչ նպատակային օգտագործմանը եւ հաճախ նաեւ հողերի լքմանը: ՀՀ-ում փորձեր են արվել եւ իրականացվել գյուղացիական տնտեսությունները խոշորացնելու, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործումը բարձրացնելու սոցիալական, տնտեսական բնույթի միջոցառումներ, այդ թվում՝ պետական աջակցության ծրագրերի տեսքով, որոնք, սակայն, չեն ապահովել ցանկալի արդյունք: Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորները շարունակելու են լինել հիմնական տնտեսավարող սուբյեկտներ, իսկ հիմնախնդիրների բացահայտումն ուղղորդում է իրականացնելու ագրարային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը միտված, բնույթով բազմաքայլ միջոցառումների համակարգ:</p> <p>Հետազոտական աշխատանքում ընդգրկվել են հետեւյալ հարցերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրվել է ՀՀ-ում գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման վիճակի, գյուղացիական տնտեսություններում չմշակման կամ ոչ նպատակային օգտագործման օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառները, առաջարկվել են ագրոօրենսդրության ամբողջականացման առումով «Գյուղացիական եւ ֆերմերային տնտեսությունների մասին» եւ «Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման մասին» օրենքների դրույթներ:</li> <li>• Գյուղատնտեսական արտադրությունը համայնքներում կառավարելի դարձնելու, այդ ոլորտում համայնքային քաղաքականություն մշակելու եւ իրականացնելու նպատակով հիմնավորվել են որոշակի կառուցվածքային ու գործառութային փոփոխություններ՝ արդեն խոշորացված համայնքներում:</li> <li>• Ձեւավորվել է հետազոտական շրջանակում գտնվող գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների տվյալների շտեմարան:</li> <li>• Գյուղացիական տնտեսությունների պետական աջակցության եւ վարկավորման քաղաքականությունը հասցեական դարձնելու համար մշակվել է «Առաջնային արտադրական միավորների դասակարգման»</li> </ul>	<p><b>գային պարբերականներում</b></p>	
--	--	--	---	--------------------------------------	--

				մթառական մոտեցումներ, որը քննարկումների փուլը անցնելուց հետո կներկայացվի համապատասխան կառույցներին: • Մշակվել են ՀՀ-ում ցորենի, խաղողի, պտղի, կաթի արժեզրթաները եւ առաջարկվել դրանցում գյուղացիական տնտեսությունների դերի արժեւորման ուղիներ:		
7	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՒ ԿԵՐԱԿՐՄԱՆ</b>	17,124.2	4. 5	<p>Հետազոտությունները իրականացվել են հետեւյալ ուղղություններով.</p> <p><b>Տավարաբուծություն</b></p> <p>2023 թ. իրականացվել է տոհմային ֆլեկվի ցեղի կովերի 1-3 լակտացիաների կաթնային մթերատվության քանակական եւ որակական ցուցանիշների հետազոտում: 2022-ի համեմատ գրանցվել է առաջնածին կովերի մթերատվության բարձրացում. 183 օրում՝ 2985 կգ: Գրանցվել է նաեւ այլ որակական ցուցանիշների փոփոխությունը: Կատարվել է ֆլեկվի ցեղի կովերի մաքրացեղ բուծում, գրանցվել է հոմոգեն զուգընտրությամբ սերունդների կաթնայուղի 4 % եւ սպիտակուցի 3,4 % ցուցանիշների կայուն ապահովում: Մսուրային շրջանում որոշվել է մեկ կովի հաշվով փոխանակային էներգիայի եւ մարսելի սպիտակուցի քանակը: Որպես արդյունք՝ գրանցվել է 1 կգ կաթի արտադրության պարագայում՝ 8,7 մՋ փոխանակային էներգիա եւ 79 գ մարսելի սպիտակուց: Իրականացվել է մաքրացեղ էգ մատղաշի նպատակային աճեցում Եղեգնուտի «Գյուղ ֆերմա» ՍՊԸ-ի տնտեսությունում:</p> <p><b>Այծաբուծություն</b></p> <p>Այծաբուծության ուղղությամբ հետազոտության նպատակն է բարձրացնել այծաբուծության ճյուղի տնտեսական արդյունավետությունը, շարունակել ՀՀ-ում տոհմային այծաբուծական կարգավիճակով Կրաշենի այծաբուծական տնտեսությունում տոհմասելեկցիոն աշխատանքները՝ զաանենյան ցեղի այծերի կաթնային մթերատվության, պտղատվության ցուցանիշի ուսումնասիրության եւ բարձրացման տեսանկյունից: Իրականացվել է հղի այծամայրերի բաշխում ըստ ծնի ժամկետների եւ որոշվել այծամայրերի պտղատվությունը՝ 35 այծամայրերից ստացվել է 63 գլուխ ու, որից 32 գլուխ արու, իսկ 31 գլուխ էգ: 2023 թ. պտղատվությունը կազմել է 180 %, որը տվյալ ցեղի</p>	3 (1/3) այդ թվում՝ Scopus, Web of science 2, Q1-0, Q2-0, Q3-0 Q4-0	1 (0/1)

			<p>այծերի համար միջին ցուցանիշ է: Անհրաժեշտ է տոհմասելեկցիոն աշխատանքներ իրականացնել պտղատվության ցուցանիշի բարձրացման ուղղությամբ: Գրանցվել է այծերի օգտագործման տնտեսական տեսողության ժամկետների երկարացում՝ 180-210 օրական էգ ուլերի միջին կենդանի զանգվածը կազմել է 19,1 կգ, իսկ միջին օրական քաշածը՝ 80-110 գ: Կատարվել է այծամայրերի կաթնային մթերատվության քանակական գնահատում՝ 18 գլուխ այծի միջին օրական կաթնատվությունը լակտացիայի 6-7 ըմպումներին 0,7 կգ է:</p> <p><b>Ոչխարաբուծություն</b></p> <p>Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի Բալախովիտի ուսումնափորձնական տնտեսությունում կորիդելի տիպի ու մասնավոր հատվածում (Նոյեմբերյանի տարածաշրջանի Կողբ եւ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքների վարչական տարածքներում), մազեխ ցեղի բուծմամբ զբաղվող երկու ֆերմաներում իրականացվել են հետեւյալ աշխատանքները. Բալախովիտի ՈւՓՏ տնտեսությունում առ 01 հունվարի 2023 թ. առկա է 63 գլուխ ոչխար, որից խոյ՝ 3 գլուխ (4,76 %), մաքի՝ 35 գլուխ (55,55 %), շիշակ՝ 23 գլուխ (36,52 %), խոյիկ՝ 2 գլուխ (3,17 %): Կազմվել են նորմավորված կերաբաժիններ ըստ սեռահասակային խմբերի, կազմակերպվել է ոչխարների ծինը, կատարվել է ծնված գառների կշռում, համարակալում, հաշվառում, 2,5 եւ 4,5-5 ամսական գառների կշռում, տվյալների կենսաչափական վերլուծություն: Կատարվել է 15 ամսական շիշակների բոնիտավորում, որպես արդյունք՝ գրանցվել է բարձր դաս ունեցող կենդանիների բաշխում ըստ դասերի. ընտիր դաս՝ 8 գլուխ (44,4 %), առաջին դաս՝ 9 գլուխ (50 %), երկրորդ դաս՝ 1 գլուխ (5,6 %): Իրականացվել է բրդի որակական գնահատում (ՀԱԱՀ մորֆոլոգիայի եւ կենդանագիտության ամբիոնի բրդի լաբորատորիայում): Ըստ գնահատման խոյերից ստացված բրդի նմուշը 50 որակի է, մաքիներինը եւ շիշակներինը՝ 56 որակի: Կատարվել է խոտանված կենդանիների առանձնացում, խոյերի ընտրություն, մայրական հոտը համալրվել է 18 գլուխ շիշակներով:</p> <p>Կատարվել է ոչխարների բնական զուգավորում՝ 45 օր տեսողությամբ,</p>		
--	--	--	---	--	--

				<p>ապահովվել է գլխաքանակի պահպանման շուրջ 100 %-ի մակարդակ:  <b>Կենսաքիմիա</b>          Հետազոտվել են Կրաշենի այծամայրերի՝ ինչպես տարբեր տարիքի հում, այնպես էլ համախառն կաթի ֆիզիկաքիմիական եւ կենսաքիմիական ցուցանիշները՝ մինչ պաստերացումը եւ պաստերացումից հետո: Ուսումնասիրվել է նաեւ այծի կաթից պատրաստված պանիրը: Կաթի պաստերացումը կատարվել է 65° C ջերմաստիճանում 30 րոպե տևողությամբ: Պարզվել է, որ 3 եւ 4 տարեկան այծամայրերի կաթում կազեինի քանակը տատանվում է՝ 2,16-2,27 %-ի սահմանում, որը զիջում է տեղական ցեղի այծի կաթին պանրապիտանիության տեսակետից: Կենսաքիմիական ցուցանիշներից հետազոտվել են շիճուկային սպիտակուցների, ամոնիակի, ֆուրոզինի մակարդակը, հիմնային ֆոսֆատազ (ՀՖ) եւ լակտոպերօքսիդազա (ԼՊ) ֆերմենտների ակտիվությունը: Հետազոտությունները վկայում են պանրի մեջ ֆուրոզինի բացակայության մասին, իսկ ոչ պաստերացված եւ պաստերացված կաթում դրա քանակը տատանվում է 10,0-25,4 մկլ սահմաններում:</p>		
8	<p>ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ</p>	26,702.6	8.75	<p>Հետազոտությունները կատարվել են հետեւյալ ենթաթեմաներով.  <b>Ձկների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը հանրապետության ձկնաբուծարաններում, դրանց առաջացման պատճառները եւ պայքարը:</b>          2023 թ. ընթացքում հետազոտական կենտրոնի լաբորատորիայում իրականացվել է ձկների լրիվ մակաբուծաբանական հետազոտություն՝ ըստ Ի.Ե. Բիխովսկայա-Պավլովսկայայի: Հետազոտությունները կատարվել են մակաբուծաբանության մեջ կիրառվող համընդհանուր եւ նորագույն մեթոդներով:          Հետազոտվել են ձկնաբուծարաններում աճեցվող եւ բնական պայմաններում ապրող ձկները, որոնք բերվել են ՀՀ տարբեր վայրերից:  <b>Հետազոտությունների արդյունքները.</b>          Երեւան քաղաքի տարածքում Հրազդան գետից (Մանկական երկաթուղի) որսած հայկական տառեխիկի (<i>Alburnoides bicpunctatus armeniensis</i>) ակնախնձորում հայտնաբերվել են <i>Diplostomum rutili</i></p>	<p>19 (8/11) այդ թվում՝ Scopus, Web of science 1, Q1-0, Q2-0, Q3-0 Q4-0 4 մեթո-</p>	

			<p>տրեմատոդի 6 մետացերկարիաներ: Ախտորոշվել է նաև լողակների ախտահարում՝ լողակային փտախտով (հարուցիչ՝ <i>Flavobacterium psychrophilum</i>):</p> <p>Քասախ գետից որսած 14 լճաձաճաններից (<i>Carassius gibelio auratus</i>) 5-ի լողակների վրա հայտնաբերվել են <i>Apiosoma piscivora</i> ինֆուզորիաներ: Նույն ջրակալում որսած Սեանի կողակի (<i>Capoeta capoeta sevangi</i>) մեջ մակաբույծներ չեն հայտնաբերվել:</p> <p>Արարատի մարզի լճակային տնտեսությունից բերված 25 լճաձաճանից (<i>Carassius gibelio auratus</i>) 11-ի խոիկներում հայտնաբերվել են <i>Trichodina nigra</i> եւ <i>Trichodinella epizootica</i> ինֆուզորիաներ, իսկ 4-ի աղիներում՝ <i>Khawia sinensis</i> ցեստոդներ: Սիս գյուղի (Արարատի մարզ) լճակային տնտեսությունից բերված ծիածանափայլ իշխանի (<i>Oncorhynchus mykiss</i>) 44 առանձնյակից 11-ի աչքի ուսանյակում հայտնաբերվել է <i>Diplostomum rutili</i> տրեմատոդի 16 մետացերկարիաներ, իսկ 5-ի խոիկներում՝ մեծ քանակությամբ <i>Trichodina nigra</i> ինֆուզորիաներ:</p> <p>Արմավիրի մարզի Տանձուտ գյուղի սահմաններում Արաքս գետից որսած ամուրյան քառթակի (<i>Rhinogobius similis</i>) մեջ մակաբույծներ չեն հայտնաբերվել:</p> <p>Գառնի գյուղի ձկնաբուծարանից բերված ծիածանափայլ իշխանի (<i>Oncorhynchus mykiss</i>) բոլոր 17 առանձնյակների մաշկում եւ խոիկներում հայտնաբերվել են <i>Trichodina nigra</i> ինֆուզորիաներ:</p> <p>Վերին Ծաղկավան գյուղի տարածքում Հախում գետից որսած Քուռի բեղլույի 9 առանձնյակից 3-ի մաշկի վրա հայտնաբերվել են <i>Trichodina</i> sp. հատուկենտ ինֆուզորիաներ:</p> <p>Ջերմուկ քաղաքի տարածքում Արփա գետի վրա գտնվող ձկնաբուծարանից բերված կարմրախայտի 7 առանձնյակից մեկի մաշկի վրա եւ խոիկներում հայտնաբերվել են <i>Ichthyophthirius multifiliis</i> հատուկենտ ինֆուզորիաներ, մյուսի մաշկի վրա՝ <i>Dactylogyrus</i> sp. հատուկենտ մոնոգենեաներ, երրորդի ստամոքսի պիլորիկ ելուստներում՝ <i>Proteocephalus neglectus</i> հատուկենտ ցեստոդներ, աղիներում՝ հատուկենտ <i>Bunodera luciopercae</i> տրեմատոդներ եւ <i>Khawia armeniaca</i></p>	<p><b>դական ցուցում</b></p>	
--	--	--	---	---------------------------------	--



			<p>ցեստոդներ:</p> <p>Նույն ձկնաբուծական տնտեսությունից հետազոտված 3 ծիածանափայլ իշխանի մաշկի վրա եւ խոհիկներում հայտնաբերվել են մեծ քանակությամբ <i>Ichthyophthirius multifiliis</i> ինֆուզորիաներ, իսկ մեկի մեջ՝ նաեւ <i>Gyrodactylus sp.</i> հատուկենտ մոնոգենեաներ:</p> <p>Նախորդ տարիների համեմատ, մեծացել է լճակային տնտեսություններում աճեցվող ծիածանափայլ իշխանների վարակվածությունը մակաբույծներով, հատկապես արտաքին մակաբույծներով (էկտոպարազիտներով), մասնավորապես <i>Trichodina spp.</i> եւ <i>Ichthyophthirius multifiliis</i> ինֆուզորիաներով: Այն պայմանավորված է նոր ներմուծված ձկնատեսակի մակաբույծների ֆաունայի շարունակական ձեւավորմամբ, ինչպես նաեւ մակաբույծների զարգացման եւ տարածման համար նպաստավոր եղանակային պայմաններով:</p> <p>Պետք է նշել, որ Հայաստանում առաջին անգամ իրականացվեց Տավուշի մարզում բնական ջրակալներում եւ Վայոց ձորի մարզի ձկնաբուծարաններում բուծվող ձկների մակաբույծների ֆաունան: Մասնավորապես, առաջին անգամ Հայաստանում արձանագրվել է <i>Bunodera luciopercae</i> տրեմատոդը կարմրախայտի մեջ: Նաեւ առաջին անգամ Սեւանա լճի ավազանից դուրս արձանագրվել են <i>Proteocephalus neglectus</i> եւ <i>Khawia armeniaca</i> ցեստոդներ: Ամենայն հավանականությամբ նշված տեսակներն անցել են Վայոց ձորի մարզ՝ Արփա գետ, Արփա-Սեւան թունելով, վարակված միջանկյալ կամ վերջնական տերերի՝ ձկների հետ:</p> <p>Առաջին անգամ Հայաստանում արձանագրվել են <i>Gyrodactylus sp.</i> մոնոգենեաներ կարմրախայտի մաշկի վրա, Արփա գետում:</p> <p>Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է շարունակել ձկների մակաբույծների կենսաբազմազանության ուսումնասիրությունը հատկապես Հայաստանի հարավային մարզերի՝ Վայոց ձորի եւ Սյունիքի ջրակալներում:</p>		
--	--	--	---	--	--

			<p><b>Խոզերի բրուցելոզի շիճուկաբանական տիպի ուսումնասիրությունը եւ անապահով տնտեսությունների առողջացումը ՀՀ որոշ մարզերում</b></p> <p>Խոզերի բրուցելոզի համաճարակային իրավիճակի գնահատումը խիստ կարեւոր է համարվում հիվանդության ախտորոշման, կանխարգելման ու պայքարի մշտնառումների իրականացման գործում:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում խոզերի բրուցելոզի տարածման անվտանգությունն ուսումնասիրվել է Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերի որոշ համայնքների խոզաբուծական տնտեսությունումներում:</p> <p>Ընդահանուր առմամբ կատարվել է 6 ամսականից մինչեւ 1,5 տարեկան, տարբեր սեռահասակային խմբերի պատկանող խոզերից վերցված արյան 150 նմուշի ուսումնասիրություն:</p> <p>Բրուցելոզով վարակված կենդանիների արյան շիճուկում յուրահատուկ հակամարմինները հայտնաբերելու նպատակով կիրառվել են գերմանական, ղազախական արտադրության Ռոզ-Բենգալ հակաձնային թեստը, ազյուտինացման ռեակցիան (ԱՌ) եւ իմունաֆերմենտային անալիզը (ELISA): Միեւնույն ժամանակ կատարվել է արյան ընդահանուր հետազոտություն՝ հետազոտական կենտրոնում առկա «MicroCC-20Vet» արյունաբանական անալիզատորի միջոցով:</p> <p>1. Հետազոտման են ենթարկվել խոզերի արյան շիճուկի 150 նմուշներ: Ռոզ-Բենգալ թեստի հետազոտման միջոցով կասկածելի ռեակցիա է գրանցվել 15 նմուշներում (10 %):</p> <p>2. Ազյուտինացման ռեակցիայի դեպքում գրանցվել է 13 կասկածե ռեակցիա (8.7 %):</p> <p>3. Իմունաֆերմենտային եւ մոլեկուլային գենետիկական մեթոդով լաբորատոր ախտորոշման (ELISA) դեպքում գրանցվել է 5 դրական նմուշ (3,3 %):</p> <p>4. Արագածոտնի մարզում բացահայտված՝ դրական հակազոած կենդանիները ենթարկվել են հարկադիր սպանդի, իսկ տարածքը վարակազերծվել է 2-3 %-անոց ակտիվ քլոր պարունակող քլորակրի լուծույթով:</p>		
--	--	--	---	--	--

			<p><b>Կովերի ենթակլինիկական գաղտնի մաստիտի ախտորոշումը կաթում սոմատիկ բջիջների հայտնաբերման եղանակով</b>  Իրականացվել է Կովկասյան գորշ եւ Սիմենտալ ցեղերի 180 գլուխ կովերից վերցված 720 կաթի նմուշի ուսումնասիրություն, որոնք բերվել են ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերի ֆերմերային տնտեսություններից:</p> <p>Հետազոտության տվյալները փաստում են, որ 60 կենդանու կաթի նմուշներում գաղտնի մաստիտ է ախտորոշվել, որը կազմում է ուսումնասիրված կենդանիների ընդհանուր քանակի 33,3 %-ը:</p> <p>Հիվանդության առավել բարձր ցուցանիշները գրանցվել են Լոռու մարզում (55 %), իսկ նվազագույնը՝ Շիրակի մարզում (23,3 %):</p> <p>Հետագայում կենդանիները բաժանվել են երկու խմբի՝ յուրաքանչյուրում 6-ական առողջ (ստուգիչ խումբ) եւ հիվանդ (փորձնական) կենդանիներ:</p> <p>Երկու խմբերից էլ ստացված կաթի նմուշներում ուսումնասիրվել են կենսաքիմիական ցուցանիշները:</p> <p>Հետազոտության արդյունքները վկայում են, որ արյան ընդհանուր ցուցանիշների եւ կաթում կենսաքիմիական ցուցանիշների շեղումը նորմից կենդանիների կաթնագեղձում գաղտնի ընթացող բորբոքային գործընթացի պատճառ է, որը եւ կարող է հանգեցնել կաթի խոտանմանը:</p> <p><b>Արմավիրի մարզի ձկնաբուծական տնտեսություններից վաճառքի հանված ձկների անասնաբուժասանիտարական փորձաքննության գնահատականը</b></p> <p>Հաշվետու ժամանակահատվածում Արմավիրի մարզի տարբեր ձկնաբուծական տնտեսություններին պատկանող ձկնաբուծարաններից բերվել են ձկան 160 նմուշներ եւ կատարվել է անասնաբուժասանիտարական փորձաքննություն:</p> <p><b>Ջգայրոշման հետազոտությունների արդյունքները</b>  Հետազոտված 160 նմուշներից 145-ի տվյալները համապատասխանում էին թարմ ձկնամսի պահանջներին:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Նմուշներից 15-ը կասկածելի թարմության էին:</p> <p><b>Լաբորատոր հետազոտության արդյունքները</b></p> <p>Կատարվել է բակտերիոսկոպիկ հետազոտություն. թարմ ձկնամսի մակերեսից պատրաստված արտատպվածքում մանրէների քանակը հասնում էր 12-13-ի, իսկ խորանիստ շերտերից պատրաստված արտատպվածքում՝ 5-6-ի: Կասկածելի թարմության ձկնամսի մակերեսից պատրաստված արտատպվածքում մանրէների քանակը հասնում էր 21-22-ի, իսկ խորքից պատրաստված արտատպվածքում՝ 11-12-ի:</p> <p>Կատարվել է նաեւ ամոնիակի (NH<sub>3</sub>) որոշարկում, մասնավորապես կասկածելի թարմության ձկնամսի էքստրակտում առաջանում էր նստվածք, իսկ գույնը դառնում էր ինտենսիվ դեղին:</p> <p>Կատարվել է նաեւ պերօքսիդազի որոշում:</p> <p>Հետազոտված 160 ձկան նմուշներից՝ 145-ը համարվում էին թարմ եւ պիտանի սննդում անսահմանափակ օգտագործման:</p> <p>Փորձաքննությամբ պարզվել է, որ հետազոտված 160 նմուշները իրենց որակական հատկանիշներով՝ ըստ ծծմբաջրածնի եւ ռեդուկտազի առկայության, համապատասխանել են որակյալ ձկնամսի համար նախատեսված ցուցանիշներին, բացառություն են կազմել 15 ձկան նմուշները:</p> <p>Կատարվել է նաեւ ջրի ֆիզիկաքիմիական եւ մանրէաբանական հետազոտություն:</p> <p>Հաշվետու ժամանակաշրջանում հաջողությամբ ավարտվել է հետազոտական կենտրոնի կողմից համադրվող Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 21T-4A007 ծածկագրով «Հավերի էյմերիոզի տարածվածությունը Հայաստանի ֆերմերային եւ անհատական տնտեսություններում» թեման:</p>		
--	--	--	--	--	--

## **ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**

Գիտական գրադարանի ֆոնդն առ 01.01.2024 թ. կազմում է 548081 միավոր գրականություն, որից ուսումնական՝ 193876, գիտական՝ 305781, գեղարվեստական՝ 48424:

2023 թ. ստացված գրականությունը կազմել է 1291 միավոր (569 անուն): Գրադարանի ընթերցողների թիվը 2023-ին կազմել է 1002 (2022-ին՝ 1114), որից 479-ը՝ համալսարանի աշխատակիցներ:

KOHA գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը 2023 թ. կազմել է 3269, իսկ 2022 թ.՝ 3167:

Գրադարանի սպասարկման կետերում հաճախումների թիվը 2023 թ. կազմել է 10528, իսկ 2022-ին՝ 7656:

Գրադարանի library.anau.am կայքի ընդհանուր այցելությունները 2023 թ. կազմել են 69189, իսկ 2022 թ.՝ 93179:

KOHA էլեկտրոնային գրացուցակի կայքի ընդհանուր այցելությունների թիվը 2023 թ. կազմել է 23654, իսկ 2022-ին՝ 29842:

Սպասարկված գրականության քանակը 2023 թ. կազմել է 1121 միավոր, սպասարկման բաժնում՝ 871, ընթերցասրահներում՝ 250 միավոր: 2022 թ. համապատասխանաբար կազմել է 965, 795 եւ 170 միավոր:

2023 թ. ՀԱԱՀ-ի աշխատակիցների 69 գիտական հոդվածների համար նշանակվել է դասիչ, իսկ 2022-ին՝ 90 հոդվածների:

KOHA էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով 2023 թ. մուտքագրվել են 6759 միավոր (1369 անուն), իսկ 2022 թ.՝ 4560 միավոր (1647 անուն) գրականության տվյալներ:

Ընդհանուր հաշվով 2007-2023 թթ. մուտքագրվել է 466125 միավոր (97650 անուն) գրականություն:

2023 թ. իրականացվել է էլեկտրոնային գրացուցակի նկարագրությունների եւ միավորների խմբագրում: Խմբագրվել է 12320 նկարագրություն, իսկ միավոր՝ 41667: 2022 թ. խմբագրվել է 24960 նկարագրություն, իսկ միավոր՝ 54855:

Գրադարանում շարունակվել է գրքերի թվայնացման գործընթացը: 2023 թ. թվայնացվել է 19 անուն գիրք:

Առ 01.01.2024 թ. գրադարանի կայքում եւ Koha էլեկտրոնային գրացուցակում առկա են 1130 գրքի, ինչպես նաեւ 606 մեթոդական ցուցումի եւ 279 ատենախոսության սեղմագրի էլեկտրոնային տարբերակ:

Գրադարանի Koha էլեկտրոնային գրացուցակում ներառված՝ համալսարանի գիտաշխատողների գիտական հոդվածների նկարագրությունները եւ էլեկտրոնային տարբերակների քանակը առ 01.01. 2024 թ. կազմել են 2116, իսկ առ 01.01. 2023 թ.՝ 2047: 2023 թ. Koha էլեկտրոնային գրացուցակում ավելացվել է 69 գիտական հոդվածի նկարագրություն եւ էլեկտրոնային տարբերակ:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել եւ վերադասավորվել է ամբողջ գրքային ֆոնդը, 2023 թ. գրադարանային գրքամատյաններից, այբբենական եւ կարգային գրացուցակներից հանվել է 4200 միավոր գրականություն:

Ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում կազմակերպվել են Արամ Խաչատրյանի երաժշտական, Ներսես Շնորհալու եւ Վիլյամ Սարոյանի գրական ժառանգությանը նվիրված միջոցառումներ:

## ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2023 թվականի ընթացքում հրատարակչական բաժինը՝

ա) նախապատրաստել, խմբագրել-սրբագրել, թարգմանել, ձեռավորել եւ հրատարակել է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով 3664 էջ կամ 458 տպ. մամուլ նյութ, այդ թվում՝


- «Ագրոգիտություն եւ տեխնոլոգիա» գիտական պարբերականի չորս էլեկտրոնային համար,
- «Հայացք» ուսանողական գիտական ժողովածուի տարեկան թողարկում,
- 29 անուն ուսումնամեթոդական գրականություն,
- այլ նյութեր:

բ) ապահովել է բուհի գործունեությանն առնչվող 2348 էջ կամ 17335 տպաքանակ փաստաթղթերի տպագրություն, բազմացում եւ կազմարարական աշխատանք,

գ) իրականացրել է ամսագրի մետատվյալների թվայնացում.


1. SS կենտրոնի տրամադրած գործիքակազմի միջոցով «Ագրոգիտություն եւ տեխնոլոգիա» գիտական պարբերականի 2019 թ. 2-րդ համարից ի վեր արխիվի տեղակայում OJS (Open Journal System) միջազգային բաց հասանելիության գիտատեղեկատվական հարթակում (հղումը եւ համացանցային պատկերապատճենումը՝ ստորել), որպես արդյունք՝ ամսագրի հոդվածներն ինքնաշխատ եղանակով հասանելիություն են ձեռք բերել նաեւ Google Scholar միջազգային որոնողական համակարգում.

<https://journal.anau.am/index.php/anau>



2. Հոդվածների տրամադրում ՄԱԿ-ի ՊԳԿ AGRIS շտեմարանին (հղումը եւ համացանցային պատկերապատճենումը՝ ստորել).


<https://agris.fao.org/search/en?fields=%7B%22journal%22%3A%5B%22AgriScience%20and%20Technology%22%5D%7D&filters=%7B%22providers%22%3A%5B%7B%22operator%22%3A%22a ny%22%2C%22values%22%3A%5B%22122592%22%5D%7D%5D%7D&size=50&>




3. Բաժինը 2023 թվականին շարունակել է գիտական պարբերականի հոդվածների ինդեքսավորումը Crossref միջազգային շտեմարանում:

4. Բաժինը նախաձեռնել է իրականացնում է համալսարանում գիտությամբ զբաղվողների գրանցումը ORCID (Open Researcher and Contributor ID) միջազգային հարթակում, որտեղ ներբեռնվում են հետազոտողների հրապարակումները:

**Որպես վերոհիշյալ գործողությունների արդյունք՝ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» էլեկտրոնային գիտական պարբերականը ձեռք է բերել զգալի դիտումներ (հաճախականության գծապատկերը եւ համացանցային պատկերապատճենումը՝ ստորեւ)։**





Բաժինը ամսագրի վերջին 5 տարիների արխիվը տրամադրել է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանին, որի շնորհիվ ավելացել են ամսագրին հղումները հայաստանյան տիրույթում (հղումը եւ համացանցային պատկերապատճենումը՝ ստորել).

<https://arar.sci.am/dlibra/news?news=full&newsId=83a3a8f7-3366-47a9-87ab-4337e2c20bb1>

Վերնագիր:  
Ագրոգիտություն և տեխնոլոգիա (Լրակազմեր)=Agriscience and Technology= Агронаука и технология

- Ագրոգիտություն և տեխնոլոգիա (Լրակազմեր)=Agriscience and Technology= Агронаука и технология
- Bulletin of Armenian National Agrarian University, 2019, 1/65
- Ագրոգիտություն և տեխնոլոգիա, 2019, 2/65
- Ագրոգիտություն և տեխնոլոգիա, 2019, 3/67
- Ագրոգիտություն և տեխնոլոգիա, 2019, 4/68
- Ագրոգիտություն և տեխնոլոգիա, 2020, 1/69
- Ագրոգիտություն և տեխնոլոգիա, 2020, 2/70

2022 եւ 2023 թթ. արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս՝ ա) ընթացիկ տարվա հիմնական աշխատանքների ընդհանուր ծավալն աճել է, որը պայմանավորված է ուսումնամեթոդական գրականության ավելացմամբ, ամսագիրը միջազգային եւ տեղական էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում ընդգրկելու գործողության ավելացմամբ,



բ) «Ագրոգիտություն եւ տեխնոլոգիա» գիտական պարբերականում հրատարակված հոդվածների թիվը (70) նախորդ տարվա համեմատությամբ 14-ով նվազել է, իսկ մեկ համարում լույս տեսնող հոդվածների միջին քանակը 21-ից դարձել է 17,5, որը պայմանավորված է հեղինակների՝ հոդվածները արտերկրում տպագրվող վարկանիշային ամսագրերին տրամադրելու հանգամանքով:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

2023 թ. կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 12 հուշագրեր եւ պայմանագրեր.

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
- Խուզեստանի գյուղատնտեսական գիտությունների եւ բնական պաշարների համալսարան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
- Լյուբլյանայի համալսարան (Սլովենիա)
- Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարան (ՌԴ)
- Տրնավայի ՍՍ Կիրիլ եւ Մեթոդիոսի համալսարան (Սլովենիա)
- Լայբնիցի անցումային տնտես. -ի գյուղ. զարգացման ինստիտուտ (ԼԱՏԳՁԻ), Հալլե (Ձալե) (Գերմանիա)
- Գիտության դաշնային պետական բյուջետային հաստատություն Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրի ագրոկենսատեխնոլոգիաների դաշնային գիտական կենտրոն (ՌԴ)
- Վիտաուտաս Մագնուս համալսարան (Լիտվա)
- «Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի դաշնային գիտահետազոտական կենտրոն» գիտության դաշնային պետական բյուջետային հաստատության (ՌԳԱ ՍՊԴՀԿ) (ՌԴ)
- Գորգանի գյուղատնտեսական գիտությունների եւ բնական պաշարների համալսարան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
- Վառնայի տեխնիկական համալսարան (Բուլղարիա)
- Գայզենհայմի համալսարան (Գերմանիա)

## **ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1**

Էրազմուս+-ի շրջանակում ՀԱԱՀ-ն ունի 41 կնքված պայմանագիր եւ ընդհանուր առմամբ 2023 թ. համագործակցել է 37 համալսարանների հետ:

2023 թ. ՀԱԱՀ ՄԿԴ-ն, ինչպես եւ նախորդ տարիներին, իրականացրել եւ կազմակերպել է աշխատակիցների եւ ուսանողների արտագնա շարժունություն՝ ապահովելով 76 աշխատակիցների վերապատրաստումներ եւ դասախոսություններ եւրոպական 23 համալսարաններում:

Այս տարի եւս, անգլերենի իմացության ցածր մակարդակի պատճառով ուսանողներին հատկացված շարժունության բազմաթիվ մրցութային տեղեր (Հռոմի Սապիենցա, Ռուսեի Անգել Կնչեւ, Գրանադայի, Դուբրովնիկի, Բրազանսայի պոլիտեխնիկական եւ Պովիսլանսկու համալսարաններում) մնացին թափուր:

Չնայած դրան, 2023 թ. ընթացքում հայտարարված մրցութների արդյունքներով ութ ուսանողներ ստացել են հնարավորություն գալիք կիսամյակում մասնակցելու շարժունությանը, որոնցից 1-ը՝ Էստոնիայի կենսագիտության համալսարանում, 1-ը՝

Սալոնիկի Արիստոտել համալսարանում, 2-ը՝ Կաշտելու Բրանկուի պոլիտեխնիկական ինստիտուտում, 2-ը՝ փորձուսուցում Մարչեի պոլիտեխնիկական ինստիտուտում, եւ 2-ը՝ Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտում:

## **ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ Էրազմուս+ ՀԳ2**

**«Աջակցություն անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանությանը, մուրեցումներին եւ գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը եւ միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI)** ծրագրի շրջանակում ապրիլի 3-12-ը ՀԱԱՀ-ի 3 աշխատակից գործուղվել էին ՄԹ-ի Լիվերպուլի Ջոն Մուրս համալսարան՝ «Անգլերենը որպես դասավանդման միջոց» ուսումնական մոդուլների ստեղծման վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով: ՀԱԱՀ-ն պատասխանատու է EMI Oral Teaching Skills Part 1 եւ ESP Pathway Program Module ուսումնական մոդուլների համար: Նախագծի շրջանակում մշակվել է 10 մոդուլ, որոնցից երկուսի՝ «EMI բանավոր դասավանդման հմտություններ» եւ «ESP/անգլերենը հատուկ նպատակների համար», դասավանդումը Ագրարայինում մեկնարկել է դեկտեմբերի 1-ին: Նախատեսվում է նաեւ հրատարակել 10 մոդուլը ներկայացնող ձեռնարկ:

**«Հայաստանում եւ Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետազոտական ծրագրերի մշակում եւ հետազոտական ցանցերի ամրապնդում» (GeoTAK)** նախագծի շրջանակում հունվարի 12-ին Իսպանիայում եւ Բելգիայում անցած վերապատրաստման մասնակիցները գործընկերներին եւ ուսանողներին փոխանցեցին իրենց փորձը:

Տեղի են ունեցել նաեւ դասընթացներ «ԵՏ տեխնոլոգիաները բնական ռեսուրսներում», «Շրջակա միջավայրի մշտադիտարկում եւ ռիսկերի կառավարում», «Նորարարությունն ու ձեռներեցությունը երկրատեղեկատվական համակարգերի միջոցով» թեմաներով, որոնց ընթացքում անցկացվել են տեսական եւ գործնական պարապմունքներ, դաշտային աշխատանքներ են իրականացվել աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների, գեոդեզիայի ժամանակակից մեթոդների, երկրատարածական վերլուծության, հեռահար զոնդավորման տվյալների եւ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) օգտագործմամբ, ինչպես նաեւ մանրակրկտ կերպով դիտարկվել է գիտելիքի եռանկյունին՝ կրթություն-հետազոտություն-նորարարություն եռամիասնությունը:

## **Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում եւ Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)**

հունվարին մեկնարկած նախագծի առաջին աշխատաժողովին մասնակցում էին Դուբրովնիկի (Խորվաթիա), Պորտոյի (Պորտուգալիա), Սլովակիայի Նիտրայի գյուղատնտեսության եւ առցանց՝ ուկրաինական երկու՝ Սումիի ազգային ագրարային եւ Զրային եւ բնապահպանական ճարտարագիտության ազգային համալսարանները: Նախագծի շրջանակում կազմակերպվել է գործատուների հետ հանդիպում, որի հիմնական նպատակն էր վերհանել այն բոլոր առանցքային խնդիրները, որոնց բախվում են ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության ոլորտի

աշխատողները եւ պատկերացում կազմել, թե ինչ մասնագետների կարիք կա նշված ոլորտներում: Ծրագրի շրջանակում երկրորդ հանդիպումը կայացավ Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանում, որտեղ աշխատանքային յոթ փաթեթների պատասխանատուները ներկայացրին ինչպես իրականացված, այնպես էլ նախատեսվող գործողությունները՝ ըստ նախագծի ժամանակացույցի:

#### **VISEGRAD+**

Մայիսին ՀԱԱՀ-ում բացվեց Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն՝ «Փափուկ հմտությունների զարգացումը որպես զբաղվածության հիմնական գործիք» նախագծի շրջանակում: Ըստ էության, միջոցառումը 2022 թ. հունվարին մեկնարկած եւ այս տարվա հունիսին ավարտվող նախագծի փակումն էր, որը նշանավորվեց նշված կենտրոնի բացմամբ, որտեղ ՀԱԱՀ ուսանողները եւ գյուղատնտեսության ոլորտում գործող մասնագետները կստանան աշխատաշուկայում հաջողելու համար կարելի փափուկ հմտություններ: Նախագծի շրջանակում մշակված մոդուլների վերաբերյալ ներկայացումներով հանդես եկան Ագրարային համալսարանի վերապատրաստված մասնագետները:

#### **«Կրթության փոխակերպումը հանուն կանաչ եւ կայուն ապագայի» (T-GREEN)**

բուհերում իրականացվող հետբակալավրիական կրթությանն անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված եռամյա նախագիծ է, որի համար առանցքային է «կանաչ» քաղաքականությունը: Նախագիծը մեկնարկել է մարտին եւ միավորել է 17 կառույց, այդ թվում՝ 4 եւրոպական եւ 9 հայաստանյան բուհեր, ներառյալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը: Նախագիծը բուհերին հնարավորություն կտա ավանդական կրթական ծրագրերից անցում կատարել կանաչ եւ միջգիտակարգային ուսումնական ծրագրերի՝ խթանելով ուսանողների շարժունությունը, մշակելով որակավորման համատեղ աստիճան շնորհող կրթական ծրագրերի իրագործման կառուցակարգեր:

«T-GREEN» նախագծի շրջանակում 2023 թվականին տեղի է ունեցել 2 միջազգային աշխատաժողով՝ Միջազգային Հելենիկ համալսարանում (Հունաստան) եւ Կրակովի Յագելոնյան համալսարանում (Լեհաստան), որոնց ընթացքում քննարկվել են օրակարգային այնպիսի հարցեր, ինչպիսիք են ուսումնական ծրագրերի Եւրոպական չափորոշիչները եւ մշակման գործելակերպը, ուսանողների փոխանակումը, կրեդիտների փոխանցման եւ ճանաչման ընթացակարգերը, կրկնակի, համատեղ եւ բազմակի դիպլոմները, միկրոհավատարմագրերը եւ այլն:

#### **ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ**

*Մասնակցություն գիտաժողովներին եւ համաժողովներին եւ վերապատրաստումներ:* 2023 թվականին գիտաժողովների եւ համաժողովների, ինչպես նաեւ վերապատրաստումների են մասնակցել ՀԱԱՀ 62 աշխատակիցներ:

- «Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ տեխնիկական համագործակցություն» ծրագրի շրջանակում վերապատրաստում, Արգենտինա - 3 աշխատակից
- 21T-1A047 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում վերապատրաստում, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն - 1 աշխատակից

- Էրազմուս+ ՀԳ2 GeoTAK ծրագրի շրջանակում վերապատրաստում – 4 աշխատակից, Իսպանիա, Շվեդիա, Ղրղզստան
- Էրազմուս+ ՀԳ2 SMARTI ծրագրի շրջանակում վերապատրաստում, Մեծ Բրիտանիա – 3 աշխատակից
- Էրազմուս+ ՀԳ2 T-Green ծրագրի շրջանակում վերապատրաստում, Հունաստան – 3 աշխատակից
- Էրազմուս+ ՀԳ2 AFISHE ծրագրի շրջանակում հանդիպում, Սլովակիա - 3 աշխատակից
- “Quality Assurance of Cross-border trade and Transportation of Food and Agricultural products by China-Europe Railway Express” սեմինար, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն – 9 աշխատակից
- «100 Գաղափար ԱՊՀ երկրների համար» միջազգային երիտասարդական մրցույթ-ցուցահանդես, Բելառուս – 3 աշխատակից
- “The 4<sup>th</sup> Egyptian International Conference on Microbiota & Microbiome in Health and Disease” գիտաժողով, Եգիպտոս – 3 աշխատակից

**ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

2023 թվականին ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների եւ միջազգային համաժողովների եւ հանդիպումների:

**Գործուղումներ**

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	
	ուսանողներ	աշխատակիցներ
Էրազմուս+ ՀԳ1	8	76
Erasmus+ ՀԳ2		13
Այլ	2	43
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>132</b>

**ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՄԿԴ-ն, ինչպես եւ նախորդ տարիներին, առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման եւ դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության եւ տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ն տարածում է սոցցանցերով եւ ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

2023 թ. փետրվարին ՄԿԴ-ն ակտիվորեն մասնակցեց Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մրցույթին՝ պատրաստելով համապատասխան փաստաթղթերը գործընկեր համալսարանների հետ: Միաժամանակ ՀԱԱՀ-ն, որպես գործընկեր, մասնակցել է 3 Էրազմուս+ կարողություններին միտված ծրագրերի, իսկ որպես համակարգող՝ 1 ծրագրի:

ՄԿԴ-ն մասնակցել է նաեւ ԵՄ-ի կազմակերպած Էրազմուս+ տեղեկատվական վեբինարներին, ինչպես նաեւ Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կազմա-

կերպած տեղեկատվական հանդիպումներին, որոնցից մի քանիսի դասընթացավարը ՄԿԴ պետ Գարեգին Համբարձումյանն էր:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ:

2023 թ. եւս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում եւ ՀԱԱՀ կայքում տեղադրվել են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ՝ Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր եւ այլն: 2023-ին ՄԿԴ-ն տեղադրել է շուրջ 100 նյութ, որոնցից 38-ը՝ Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 7-ը՝ նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 36-ը՝ շարժունության մասնակիցների հողվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի տրամադրած առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գործընթացի թույլ եւ ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը, 2023 թվականից լինելով Հայաստանում Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագիտական խմբի անդամ (HERE Armenia), ակտիվորեն մասնակցել է այդ խմբի աշխատանքներն, մասնավորապես, մշակել եւ ներկայացրել է 2 TAM (Technical assistance missions) նախագծեր, որոնցից մեկը հաստատվել է SPHERE (Support and Promotion for Higher Education Reform Experts) Team-ից, իսկ մյուսի պատասխանը դեռ ընթացքի մեջ է:

## **ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

2023 թ. ընթացքում գնումների բաժնի կողմից իրականացվել է 169 գնման մրցույթ, նախորդ տարվա 241-ի դիմաց, որից 91-ը ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգի) ընթացակարգով, հարդյունս որի կնքվել է 136 պայմանագիր (գումարը կազմում է 73512779.32 ՀՀ դրամ), 71-ը՝ ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգով, հարդյունս որի կնքվել է 42 պայմանագիր (գումարը կազմում է 47202924 ՀՀ դրամ), եւ 7-ը՝ մեկ անձ ընթացակարգով, որի միջոցով կնքվել է 7 պայմանագիր (գումարը կազմում է 5841160 ՀՀ դրամ):

Չկայացած ընթացակարգերը 56-ն են, որից 25-ը ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգ) ընթացակարգի, 30-ը ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգի, 1-ը ՄԱ ընթացակարգի շրջանակներում: Իրականացվել է նաեւ մեկ գնման մրցույթ ԲՄ ընթացակարգով, որի համար ֆինանսական միջոցներ պետք է հատկացվեն 2024-ին:

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի՝ 2023 թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ համալսարանի եւ մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվն է 1045, որից 68-ը՝ արտաքին համատեղողներ.

### Աղյուսակ 2

1.	Վանաձորի մասնաճյուղ, որից՝	79
1.1	վարչատնտեսական կազմ	40
1.2	դասախոսական կազմ	39
2.	Սիսիանի մասնաճյուղ, որից՝	56
2.1	վարչատնտեսական կազմ	23
2.2	դասախոսական կազմ	33
3.	Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	49
3.1	վարչատնտեսական կազմ	20
3.2	գիտական աշխատողներ	29
4.	Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	22
4.1	վարչատնտեսական կազմ	8
4.2	գիտական աշխատողներ	14
5.	Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	32
5.1	վարչատնտեսական կազմ	8
5.2	գիտական աշխատողներ	24
6.	Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղ, որից՝	35
6.1	վարչատնտեսական կազմ	14
6.2	դասախոսական կազմ	19
6.3	ժամավճարային աշխատողներ	2

### Համալսարանի փաստացի հիմնական աշխատակիցների թիվն է 977:

Բացի այդ, տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 22 անձի հետ:

Ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրեր են կնքվել 341 անձի հետ:

Ստորեւ ներկայացված աղյուսակում խմբավորված են փաստացի աշխատակիցների թվաքանակն՝ ըստ գործունեության ոլորտների:

### Աղյուսակ 3

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում փաստացի հիմնական աշխատողների թիվը՝ 977	
<b>Վարչական</b>	<b>26, որից 3-ը հասարակական հիմունքներով</b>
<b>Ընդամենը պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝</b>	<b>389</b>
Հիմնական	255
ներքին համատեղությամբ	63

արտաքին համատեղությամբ	41
ժամավճարային դասախոսներ	30
<b>Դեկանատների, ամբիոնների եւ լաբորատորիաների ուսումնասօժանդակ անձնակազմ</b>	<b>85</b>
Աշխատակազմ	29
Քոլեջ	6
Ագրոբիզնեսի դեպարտամենտ	7
Ագրոբիզնեսի դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	5
Ընդամենը՝ գիտահետազոտական ինստիտուտներ (հետազոտական կենտրոններ)	63
	26 ներքին
	7 արտաքին
Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան	28
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	19
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	12
Գիտական աշխատանքների համակարգման բաժին	4
Գիտական գրադարան	18
Տնտեսական վարչություն (այդ թվում՝ մասնաշենքեր, «Արաբկիր» ուս. հանրակացարան, պահակային ծառայություն, կաթսայատուն)	96
Միջազգային կապերի դեպարտամենտ	8, որից 1-ը ներքին համատ.
Որակի գնահատման եւ ապահովման կենտրոն	6
Լեզվի ուսուցման կենտրոն (հասարակական հիմունքներով)	1
Ագրոտեխնոլոգիական ինկուբատոր	1
Կենսատեխնոլոգիական ինկուբատոր	1
Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոն	1
«Բալահովիտ» ՈՒՓՏ	17
«Ոսկեհատ» ՈՒՓՏ	9
Աղավնաձորի «Ջարթոնք» հանգստյան տուն	11
«Ակունք» օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոն	2

2023 թ. ընթացքում ընդունվել է աշխատանքի՝ 367 մարդ, ազատվել՝ 419 մարդ:

2023 թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ 30 կին գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում:

Աշխատանքի է ընդունվել 33 երիտասարդ դասախոս:

17 աշխատակից համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ենթարկվել են վարչական տույժի (ստացել են նկատողություն):

5 անձ պարգևատրվել է ՀԱԱՀ պատվոգրով, ՀԱԱՀ 2 գործընկեր եւ 1 աշխատող՝ շնորհակալագրերով:

**Աշխատողների թվաքանակը, աշխատատեղերի շարժը 2023 թ.**

Աշխատողների թվաքանակը տարվա սկզբի դրությամբ	1096
Ընդունվել են աշխատանքի հաշվետու տարում	367
Ազատվել են աշխատողներ հաշվետու տարում, որից՝	419
• աշխատողի նախաձեռնությամբ	136
• այլ պատճառներով	275
• կրճատված	8
Կրճատվածներից վերականգնված	0
Աշխատողների թիվը տարվա վերջի դրությամբ, որից՝	1045
• մինչև 35 տարեկան	163
• 35-55 տարեկան	414
• 55-ից բարձր	468
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝	389
• դրսի համատեղությամբ	41
• ներսի համատեղությամբ	63
• չպաշտպանած	137
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (վարչատնտեսական)	17
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (ուսումնական)	13

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

SS կենտրոնի կարելորագույն առաքելություններից է համալսարանի կրթական տեխնոլոգիաների մշտական զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: Այդ նպատակով 2023 թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները.

**MOODLE ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ**

Ներկայում համակարգի ակտիվ օգտատերերի թիվը 6404 է (նախորդ տարի՝ 6419): 2023-2024 ուստարվա համար համակարգում գրանցվել են քոլեջի, բակալավրիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող 1-ին կուրսի բոլոր ուսանողները, ինչպես նաեւ զինվորական ծառայությունից վերադարձած կամ քոլեջից համալսարանի 2-րդ կուրս տեղափոխված բոլոր ուսանողները, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների հաշիվները վերախմբագրվել են մագիստրանտների:

2021-2022 ուստարում գործարկվել էր Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակի հավելվածը: Հավելվածի վերաբերյալ պարբերաբար իրականացվել է խորհրդատվություն ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների շրջանում:



**Moodle հարթակում կատարված աշխատանքներ**

Հ/հ	Աշխատանքի բնույթը	Քանակ
1	Համակարգում առկա ակտիվ օգտատերերի թիվը	6404 օգտատեր
2	Ուսանողների ավելացրած եւ փոփոխված հաշիվներ	2250 հաշիվ
3	Ամբողջական բովանդակությամբ դասընթաց	մոտ 85 %
4	Ստեղծված նոր առարկաների հարթակ	300 հատ
5	Փոփոխված եւ հեռացված հարթակներ	650 հատ
6	Ուսուցում եւ վերապատրաստում / համատեղ աշխատանք	110 մարդ

**ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

SS գիտելիքի բաժինն իրականացնում է նաեւ հետեւյալ գործառնությունները.

- թեստավորման ծրագրի շահագործում, կառավարում, զարգացում,
- թեստերի կազմման կարգի եւ ձեւի մշակման ուղեցույցների պատրաստում,
- թեստերի հավաքում, ստուգում եւ մուտքագրման աշխատանքներ,
- թեստային քննությունների անցկացում, վերջնական տեղեկատվության ուղարկում համապատասխան դեկանատներ:

**2023-ին կազմակերպվել եւ անցկացվել է 2239 քննություն, մանրամասները՝ ստորեւ.**

Կրթական աստիճանը	Ուսուցման ձեւը	Քննության քանակը
Բակալավրիատ	Հեռակա	1255
Բակալավրիատ	Առկա	964
Մագիստրատուրա	Առկա	20

**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Իրականացվել է OJS հարթակի ներկայացում, որին մասնակցել են հրատարակչական բաժնի աշխատակիցները: Դասընթացից հետո նրանք գիտական պարբերականի հին համարները ներմուծել են հարթակ:

Անցկացվել են դասընթացներ SS կենտրոնի նոր աշխատակիցների համար, ինչպես նաեւ վերապատրաստումներ գործող աշխատակիցների համար:

**SS ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

SS համակարգերի կառավարման բաժնի հիմնական գործունեությունը միտված է համալսարանի կայքէջերի ստեղծմանը եւ սպասարկմանը, ինչպես նաեւ նոր համակարգերի տեղադրմանը:

2023 թվականի ընթացքում պարբերաբար թարմացվել է համալսարանի պաշտոնական կայքի բովանդակությունը՝ ստեղծվել է 26 նոր էջ, հավաքագրվել, խմբագրվել եւ տեղադրվել են կայքում գրեթե բոլոր բաժինների հիմնական նյութերը: anau.am կայքում տեղադրվել է ավելի քան 460 նոր հայտարարություն եւ նորություն, այդ թվում՝ ՄԿԴ հայտարարություններ:

2023 թվականի օգոստոսին anau.am կայքը թարմացվել է եւ տեղադրվել է այդ պահին վերջին՝ WordPress 6.3.1 տարբերակը: Թարմացումից հետո թեստավորվել են կայքի էջերը եւ կայքում տեղադրված մոդուլները (պլագինները)՝ թվով 40: Թեստավորման ընթացքում բացահայտված խնդիրները վերացվել են:

2023 թվականի նոյեմբերին համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխությունները արտացոլվել են նաեւ anau.am կայքում: Հին ամբիոնների էջերը արխիվացվել են:

Ստորեւ ներկայացված է 2023 թվականի ընթացքում ՀԱԱՀ-ի կայքեր այցելուների վիճակագրությունն ըստ Google Analytics-ի:









#### Աղյուսակ 6

##### Այցելուների քանակը

Կայք	Այցելուների քանակը	Դիտված էջեր
anau.am	180430	663392
persons.anau.am	6352	21519
memorial.anau.am	305	1247
library.anau.am	81236	341260
elearning.anau.am	57502	348046

#### Աղյուսակ 7

##### ՀԱԱՀ պաշտոնական կայքի այցելություններն ըստ երկրների

Հ/Հ	Երկիրը	Այցելությունների քանակը
1	 Հայաստան	67,634
2	 ԱՄՆ	4,532
3	 Ռուսաստան	2,557
4	 Գերմանիա	1,935
5	 Ինդոնեզիա	890
6	 Ֆրանսիա	837
7	 Չինաստան	782
8	 Իտալիա	767
9	Այլ	4,004

#### <https://persons.anau.am>

2023 թ. ընթացքում շարունակաբար թարմացվել են persons.anau.am կայքում տեղադրված աշխատակիցների, շրջանավարտների եւ երախտավորների կենսագրական տվյալները: Նոր կազմավորված ամբիոնների էջեր են տեղափոխվել ամբիոնների դասախոսական կազմի ինքնակենսագրականները, վերջիններիս թիվը կազմում է 79:

Թարմացվել են կայքում ստեղծված կենսագրականներից մոտ 135-ը, ինչպես նաեւ արխիվացվել են համալսարանում այլեւս չդասավանդող դասախոսների կենսագրական տվյալները:

#### <https://journal.anau.am>

Հարթակն ամբողջությամբ հանձնված է շահագործման եւ լիարժեքորեն օգտագործվում է Հրատարակչական բաժնի կողմից: ՏՏ կենտրոնը պարբերաբար

իրականացնում է հարթակի տեխնիկական սպասարկման եւ թարմացման աշխատանքները:

<https://memorial.anau.am>

Պարբերեալ հավաքվել, մշակվել եւ մուտքագրվել են գոհվածների եւ մահացածների նոր տվյալներ: Կայքում առկա է հիշատակի եւ կենսագրական 77 նյութ, ինչպես նաեւ 46 հուշ եւ մոտ 750 հիշատակի մոմ:

### **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՄՏ ՀԱՄԱԿԱՐԳ**

2023 թ. շարունակվել են սմտ համակարգի կատարելագործման շուրջ ուսումնական գործընթացի կառավարման վարչության, դեկանատների աշխատակիցների եւ ամբիոնների աշխատակազմերի հետ քննարկումները եւ վերապատրաստման գործընթացները: Դեկանատների եւ ամբիոնների աշխատակիցների համար անցկացվել է խորհրդատվություն ավելի քան 70 աշխատակցի համար:

Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն եւ ֆակուլտետների աշխատակիցների հետ քննարկումների եւ թեստավորման միջոցով հայտնաբերվել են մի շարք թերություններ, որոնք շտկվել եւ համապատասխանեցվել են համալսարանում գործող պահանջներին: Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի պաշտպանությունների իրականացման համար դեկանատների աշխատակիցների, թողարկող ամբիոնների հանձնաժողովի քարտուղարների համար անցկացվել է լրացուցիչ խորհրդատվություն (մոտ 5 աշխատակից):

Ավտոմատ եղանակով դիպլոմների հավելվածների (միջուկների) գեներացման համար մուտքագրվել են 2019 թ. (բակալավրի կրթական աստիճան), 2021 թ. ու 2022 թ. (մագիստրոսական կրթական աստիճան) հաստատված ուսումնական պլանների համակարգում գոյություն չունեցող մոտ 200 առարկաների անգլերեն անվանումները: Մուտքագրվել եւ/կամ վերահսկվել են բոլոր մուտքագրված մասնագիտական կրթական ծրագրերը (դիպլոմի հավելվածին առնչվող հատվածները):

2023 թ. սմտ համակարգում նոր մոդուլների ներդրման շնորհիվ ստացվել են հետեւյալ ցուցանիշները.

- ավտոմատացված եղանակով ստացվել են ուսանողների հաշվառման տվյալները՝ բացակայության արդյունքները (տոկոսային ու կիսամյակային բացակայությունները եւ այլն),
- 2023 թ. ընթացքում ավտոմատացված եղանակով ստեղծվել են բոլոր տեղեկագրերը (մոտ 2500 հատ). վերահանձնման տեղեկագրերը գեներացվում են ավտոմատ եղանակով, տեղեկագրերը հասանելի են թե՛ դեկանատներում, թե՛ ամբիոններում, թե՛ ուսումնական վարչությունում, եւ թե՛ լիազորված մյուս ստորաբաժանումներում,
- ավտոմատացված եղանակով ստացվել է կրեդիտային (12 կրեդիտ) պարտք ունեցող ուսանողների ցանկը,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել են մոտ 250 անհատական տեղեկագրեր,
- ավտոմատացված եղանակով կատարվել է ուսանողների շրջափոխման գործընթացը,
- ավտոմատացված եղանակով ստացվել են դիպլոմի հավելվածները (միջուկները) առկա ուսուցման բակալավրի (270 հատ) եւ մագիստրոսական (112 հատ) կրթական աստիճանների համար,

- արդիականացվել է ուսանողների պայմանական փոխադրման գործընթացը (կիրառվել է բակալավրի կրթական աստիճանի հեռակա ուսուցման համար),
- մշակվել է ուսանողի արխիվի նոր մոդուլ՝ դինամիկ որոնման համակարգով,
- մշակվել է ուսանողի կարգավիճակների փոփոխության նոր մոդուլ, որը ներառում է կուրսից կուրս փոխադրումը, տարկետումը (ազատում, հեռացում), վերականգնումը, մի մասնագիտությունից մյուսը տեղափոխումը,
- կատարելագործվել են 12 մոդուլներ եւ ենթամոդուլներ,
- թարմացվել են մի շարք մոդուլների pdf եւ Excel ֆորմատով արտահանվող էջերը (մոտ 20):

Ուսանողների գիտելիքների ստուգման եւ գնահատման համար մուտքագրվել են բազմագործոնային համակարգով գնահատման բոլոր գործոնները:

Ուսումնական գործընթացների ավտոմատացման բաժնի աշխատակիցները շարունակում են ums ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի զարգացման աշխատանքները: Ամբողջությամբ ավարտված են նախատեսված հիմնական մոդուլների ծրագրավորման եւ դրանց մեծ մասի արդիականացման աշխատանքները: Խորհրդատվական հանդիպումների ընթացքում ստացվել են բազմաթիվ առաջարկություններ համակարգի բարելավման ուղղությամբ, որոնց մի մասն արդեն իրականացվել է, իսկ մնացած մասի ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

Ծագող խնդիրներն ու դժվարությունները հաղթահարելիս մեծ դեր են ունեցել նաեւ ստեղծված ուղեցույցները (համակարգում առկա է 14 ուղեցույց): Ընթանում են նոր ուղեցույցների պատրաստման աշխատանքները, հաջորդ տարում պլանավորվում է ավելացնել եւս 4-ը:

Թվարկված աշխատանքներին զուգահեռ բաժինն ուսումնասիրում եւ պլանավորում է ներդնել այլ ծրագրային համալրումներ ուսումնական գործընթացն առավել թափանցիկ, օպերատիվ, արդյունավետ եւ արդի համակարգերով վերազինելու, օրինակ՝ նոր տեղեկագրերի արդյունքների ստացման, ուսանողի քարտի թարմացման եւ այլ մոդուլների համար:

Բացի ums համակարգից՝ կատարվել են նաեւ այլ աշխատանքներ, մասնավորապես՝ բակալավրի կրթական աստիճանի հեռակա ուսուցման համար դիպլոմների հավելվածների գեներացման բոլոր ֆայլերում կատարվել են թարմացման աշխատանքներ, ինչպես նաեւ ստեղծվել են նոր ֆայլեր, որոնց միջոցով կրկին գեներացվել են հավելվածները:

ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի համար եւս կատարվել են դիպլոմի հավելվածների ֆայլերի նախնական աշխատանքները, ֆայլերը հիմնականում պատրաստ են տպագրման: Այս դեպքում գրեթե ամբողջ աշխատանքը կատարվել է հեռավար եղանակով:

## **ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

SS համակարգերի սպասարկման բաժնի գործունեությունն ուղղված է համալսարանում համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկմանն ու ծրագրային ապահովմանը, տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործման ապահովմանը, համալսարանական համակարգչային լսարանների տեխնիկական, ծրագրային համակարգերի անխափան աշխատանքին եւ շահագործմանը,

համալսարանում առկա պատճենահանող-տպիչ սարքերի անխափան ու անթերի աշխատանքին, ստորաբաժանումներում ինտերնետ կապի ապահովմանը, համակարգչային տեխնիկայի վերանորոգմանը եւ այլն:

## Աղյուսակ 8

### 2023 թ. բաժնի կատարած հիմնական աշխատանքների ցանկը

Հ/հ	Աշխատանքի բնույթը	Քանակը
1	Համակարգիչների ֆորմատավորման եւ կանխարգելում	225
2	Ցանցին միացված համակարգիչներ	212
3	Ցանցային բաժանարարների եւ Wi-Fi երթուղիչների մոնտաժում	19
4	Տպիչների վերանորոգում	157
5	Քարթրիջների լիցքավորում եւ վերանորոգում	227
6	Հեռախոսահամարների տեղափոխում եւ նոր համարների տրամադրում	15

Կահավորվել են Բի-Օն լաբորատորիայի, Ուսանողների հաջողության կենտրոնի եւ Գիտելիքի նորարարական հարի սենյակները, մոնտաժվել են ցանցային սարքեր, տեղադրվել են համակարգիչներ եւ Smart գրատախտակ:

Էրազմուս+ ՀԳ2 SMARTI ծրագրի շրջանակում 1-ին մասնաշենքի 1Ա1 լսարանում տեղադրվել եւ կարգաբերվել է 10 համակարգիչ եւ Smart գրատախտակ:

Վերականգնվել եւ մոնտաժային աշխատանքներ են կատարվել «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի տեսահսկման համակարգի ցանցում, կարգավորվել են տեսախցիկների աշխատանքները:

«Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղում կատարվել է համակարգիչների եւ տպիչների ծրագրային սպասարկում, մոնտաժվել են ցանցային սարքեր եւ մալուխներ: Վերածրագրավորվել եւ կարգաբերվել են VI մասնաշենքի բոլոր համակարգիչները, կատարվել են ներքին ցանցի օպտիմալացման եւ կարգաբերման աշխատանքներ: Կարգավորվել են VI մասնաշենքի տեսախցիկների աշխատանքները:

Կահավորվել է ագրոդրոնների լաբորատորիան, որտեղ տեղադրվել է 6 համակարգիչ, մոնտաժվել է ներքին ցանց, համակարգիչների վրա տեղադրվել է մասնագիտական ծրագրակազմ:

Բաժնի աշխատակիցները իրականացրել են ՀԱԱՀ մասնաշենքերի, մասնաճյուղերի եւ գիտական կենտրոնների համակարգչային տեխնիկայի եւ հարակից սարքերի գույքագրման աշխատանքներ:

ՏՀՍ բաժինն ուսումնասիրել եւ կազմել է համալսարանի համակարգչային տեխնիկայի պահանջարկը, գնման հայտերը, որից հետո կատարել համակարգչային տեխնիկայի պահեստավորման, բաշխման եւ տեղադրման աշխատանքները:

### ԳՈՎԱԶԴ ԵՒ ԴԻՉԱՅՆ

ՀԱԱՀ լաբորատորիաներում, Բալահովիտի ՈՒՓՏ-ի, Վանաձորի եւ Շիրակի մասնաճյուղերում կազմակերպվել են նկարահանման աշխատանքներ «Նոր ենթա-

կառույցներ Ագրարային համալսարանում» տեսահոլովակների շարքի շրջանակում: Տեսահոլովակների նկարահանումը շարունակական բնույթ ունի:


Կատարվել են 4 ցուցահանդեսների եւ ավելի քան 30 միջոցառումների անցկացման համար տեխնիկական սպասարկման աշխատանքներ:

2023 թ. ընթացքում սոցիալական հարթակներում պարբերաբար կատարվել են ՀԱԱՀ-ի քոլեջի, բակալավրիատի եւ մագիստրատուրայի ընդունելության, Համալսարանում կազմակերպվող դասընթացների, Ագրոճամբարի 18 գովազդային արշավներ, ինչպես նաեւ առաջխաղացվել են բուհի նոր ենթակառույցների մասին հոլովակները:

2023 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Facebook սոցիալական էջի հավանումների քանակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է մոտ 5 %-ով եւ 22.610 հավանումից դարձել 23.561:

Facebook սոցիալական էջն ունի ավելի քան 24.000 հետետորդ:

Facebook եւ Instagram էջերի այցելությունների գրաֆիկը հետեւյալն է.



Facebook եւ Instagram էջերի բովանդակության դիտումների գրաֆիկը հետեւյալն է.



SS կենտրոնը 2023 թ. ընթացքում ստեղծել է թռուցիկներ, գովազդային բաներներ, նկարներ, պաստառներ, բացիկներ եւ այլն:

### ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

Թարմացվել է սերվերի աշխատանքն ապահովող ծրագրակազմը (Firmware-ները), կարգաբերվել է սերվերների հեռավար կառավարման համակարգը: Տեղադրվել է նոր համակարգիչ Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի համար: Համալսարանի սերվերների վրա է տեղափոխվել Կայուն գյուղատնտեսության հայկական պլատֆորմը՝ sapa.am:

SS կենտրոնը կատարում է անվտանգության ապահովում, կառավարում, տեխնիկական սպասարկում, թարմացում եւ մշտադիտարկում ստորեւ ներկայացված համակարգերի համար.

## Աղյուսակ 9

### SS եւ տեղեկատվական անվտանգություն

Հ/հ	Համակարգի նկարագրությունը
1	ՀԱԱՀ պաշտոնական կայք anau.am
2	Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգ ums.anau.am
3	ՀԱԱՀ գրադարանի կայքէջ library.anau.am
4	ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կառավարման համակարգ koha.anau.am
5	ՀԱԱՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ mul2.anau.am
6	ՀԱԱՀ էլեկտրոնային ուսուցման հարթակ elearning.anau.am
7	ՀԱԱՀ պաշտոնական հին կայք old.anau.am
8	Ուսանողի անհատական կայքէջ student.anau.am
9	Շրջանավարտների, դասախոսների եւ երախտավորների շտեմարան persons.anau.am
10	Ֆայլերի կառավարման համակարգեր files.anau.am docs.anau.am
11	Ջերմատան ավտոմատացված կառավարման ծրագրային ապահովում agritalk.anau.am
12	Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կայքէջ wine.anau.am
13	Բուհական գործընթացների եւ մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատացման համակարգ ERP (գտնվում է ստեղծման փուլում)
15	Ներքին հեռախոսների VOIP համակարգ
16	Քննությունների թեստային եղանակով անցկացման համակարգ
17	Տեղային տեղեկատվական ցանց
18	Աշխատակիցների հաճախումների կառավարման FlexAp համակարգ
19	Մասնաշենքերի տեսահսկման համակարգ
20	Հաշվապահական հաշվառման համակարգ
21	Համակարգիչների օգտատերերի կառավարման համակարգ AD
22	ՀԱԱՀ հիշատակարան memorial.anau.am
23	Գիտական հոդվածների ընդունման եւ կառավարման ավտոմատացված համակարգ journal.anau.am
24	Քննություններին ուսանողների մուտքն ավտոմատ կառավարող համակարգ examticket.anau.am
25	VPN սերվեր
26	Սերվերների օպերացիոն համակարգեր
27	Տվյալների հենքերի համակարգեր
28	Կայուն գյուղատնտեսության հայկական պլատֆորմ sapa.am